

5-572. Чир - Григорьев

Чир и бир

1910р.

891.99

S-38

pp 3

ԿՄԻՆ ՏԵՐ-ՔՐԻԶՈՐԵԱՆՅ

ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ

(Ուշ. Է. ՄԵՂԱԿԻՈՐ)

ՎԵՅ ԷՊԻԶՈԴՆԵՐ

1905 ԹԻՒ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴԱՐՈՒՄՆԵՐԻՑ
ԿՈՎԿԱՍՈՒՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

-6 NOV 2011

ՀԱՅԻՆ ՑԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՆՅ

ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ

(Ո. Վ. Մազմանյան)

ՎԵՅՏ ԷՊԻԶՈԴՆԵՐ

1905 ԹԻՒ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ
ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



1910
ԵԱՅԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՆՅԻ Տպարան
ԵՐԵՎԱՆ

3474

14 SEP 2013
1105 VBR P-99

58276

S-38


ՊՐԻՎԱՏ ԳՐԱԴԱՐԱՆ



Սյս պիեսի բալոր իշտաւանիները վերապահեած են հեղինակին:



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ



708-89

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երևան, Դեկտեմբերի 1-ին 1905 թւ:

Այս տարի տեղի ունեցան Կովկասում այնպիսի անցքեր, պատահարներ, որոնց նմանը հազիւ թէ կարելի լինի գտնել մարդկութեան պատմութեան մէջ:

Մի չեղած և չլուած բան:

Միհնոյն երկրում, միենոյն պետութեան մէջ՝ կողք-կողքի տպրող երկու ազգութիւնները կորցնում են իրենց մարդկացին գէմքը, գառնում են վայրենի գազաններ և իրենց բուրուր կատաղութիւնը, միտքը, բնգունակութիւնն ու միջոցները (հսարները) գործադրում են իրար անողորմարար ոչնչացնելու վրայ:

Այս ճրէշաւոր երեսոյթները չեին կարող չգրաւել իրենց վրայ ժամանակակից ամբողջ աշխարհի ուշադրութիւնը, անկախ ասրածութիւնից, ցեղից, կրօնից և կուլուրայից:

Մինչև այժմ գեւ երկու կողմի կրքերն էլ ամենախիստ զրգուման աստիճանի վրայ են. գեւ մինչեւ այժմ մեր երկրի ամեն անկիւններում կատարում են ասպետական արիւնակի վիճախաղեր:

Գուցէ ներկայումս գեւ վաղաժամ է պարտ ու պատշաճ գնահատութեամբ մօտենալ մինչեւ օրս կատարւած և կատարւող փաստերին, բայց ևս չկարողացայ խուսափել ինձ մի հաշիւ տալու մտքից այն ամենի վերաբերմամբ՝ ինչ որ կատարում է, լուսում է, խօսում է իմ շուրջը այս սարսափելի ժամանակներում:

Եւ այս բոլորը՝ թարմ ապաւորութեան տակ՝ զրի անցնելու և ապագային աւանդելու ցանկութիւն յզացաւ իմ մէջ:

Իմ այս վասատկը պաշտօնական հետազոտութիւն չէ, զիսնական քննադատութիւն չէ, յատուկ զրամա չէ, այլ մի տարեգիր (լետոնիս)՝ մի պարզ նկարագրութիւն այն միջնադէպերի, որոնք հաստատւած են մինչեւ իսկ ցէնզուրայի տակ եղած հայ և սուս պարբերական հրատարակութիւններով:

Սրանք, կրկնում եմ, մտացածին, հնարովի գէպքեր չեն, որանք ազատ երեակայութեան արվասիք չեն, որանք երեսոյթների միակողմանի լուսաբանութիւններ չեն, այլ ամենապարզ փաստեր, զուրս քաշած սոսկալի իրականութիւնից:

Սրանք առանձին-առանձին միջնադէպեր են, վերցրած
մի շաբք նոյնանման անհամար միջնադէպերից:
Ակամայ հարց է ծագում զլիստմա:

— Ինչի՞ց առաջացաւ այս ամենը... Ո՞րպիսի գժոխա-
յին ոյժեր ստեղծեցին, այս երկու ազգութեանց իրար վրայ
յարձակումները...

Առ այժմ գեռ դժւար է որաշել.—յիրաւի՞ ներկայ գէպ-
քում ազգել է այս ամենի վրայ ժամանակալից քաղաքակա-
նութիւնը, արդեօք առանձնակի՝ այսպէս թէ այնպէս շահա-
գրգուած՝ անձնաւորութեանց ցած կրքերն են զրգել գէպի
այս ամենը, արդեօք ներկայ գէպրում գէք է խազացել խա-
չի և կիսալուսի հատկողների մէջ եզած դարաւոր ատելու-
թիւնը, թէ այս ամենն իր ծագումով պարտական է համիու-
լամական գաղափարի սկզբնաւորութեան:

Այս դժւար է որոշել:

Բացի գրանից, եթէ լինէին միջնա գարերը, մենք, գուշ-
ցէ և սերտ կապ գոնէինք այն սարսափների մէջ, որոնք կա-
տարւում էին մարզկային ձեռքերով և այն տարերական
պատուհանների, որ միաժամանակ ուզարկում էր ինքը բնու-
թիւնը զանազան ձեռքով—հեղեղների, կարկտահարութեանց
երաշտութեանց... իբր լրացնող այն պակասի, որ վեր էր
մարզկային ոյժից և կատաղութիւնից:

Մասնաւորերով խօսք կուզեմ տաել.

Այս պիեսը սղբերգութիւն չէ, զբամտ չէ, այլ բեմական
զբականութեան մի պարզ տեսակը—մի շաբք առանձին-առ-
անձին միջնադէպերի, որոնք իրենց գործողութեանց զար-
գացումներով ինքնուրոյն են, բայց բոլորն ի մի առած՝ ներ-
կայացնում են մի ամրողջութիւն:

Ես աւելի յարմար համարեցի ընտրել ընմական զբա-
կանութեան յատկապէս այս տեսակը, որովհետեւ սրանով
հնարաւոր եղաւ տեղ տալ աւելի բարդ և բազմազան գործո-
ղութիւնների, քան կարելի էր այդ տնել մի որևէ յատուկ
պիեսով:

Թէ որքան եմ հասել նախղծածս նպատակին՝ թողում
և գատելու ապագային:

Է. Տ.-Դ.



ԵՊԻԶՈԴՆԵՐ

I.

ՄՐՐԿԱՀԱՒԵՐ

(7-րդ երես)

Մզկիթի ընդարձակ բակը:

II.

ԳԻՒՂԲ

(35-րդ երես)

Գիշական մի փորբիկ հրապարակ:

III.

,ՋԵՅԹԱՆԻՇ ԳՈՐԾԵՐԻՑ

(65-րդ երես)

Միեւնայն հրապարակը:

IV.

ՅԱՆՈՒՆ ԻՍԼԱՄԻ

(93-րդ երես)

Թռուր լրագրի իմրազրատուն:

V.

ԻՆՏԵՐՎԻԻ

(121-րդ երես)

Հայերի կազմակերպութեան գրասենեակը:

VI.

ԱԿՆ ՔՆԴ ԱԿԱՆ

(155-րդ երես)

Պարտեզ բեկի տաճ առաջ:



ՏԵՂՄԱՆ

ՄՐՐԿԱՅԱՒԵՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻ



ԱՆՁԻՆՔ

ԱԽՈՒԴ

զօրիքիր ԱզԱ, յետոյ խմբագիր մի թուրիր լրագրի:
ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒԹ, յետոյ քարտուղար խմբագրութեան:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

ՍԵՅԻԿ ԱզԱ

ԱԲԱՍ ԱԼԻ, յետոյ լրատու:

ԱԼԱՋՐԱՓ

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

ՈՒՄՈՒԲ

ԻՐԶԱ

ՄՈՒՍԱ

ԹԸՂԻ, յետոյ խմբագրութեան սասրին ծառայու:

ՄԻ ՄԵԽ ԱՍՏԻՃԱՆԱՄՈՐ

Ա ԹՈՒՐՔ

Բ ԹՈՒՐՔ

Ա ՀԱՄՇԱՐԻ

Բ ՀԱՄՇԱՐԻ

ԶՐԱՎԱՃԱՌ

Խաւեկ, բեկեր, տղալարեկ, աստիճանառուեկ,
աղամեկ, աէյիդանեկ, մոշանեկ, դարվիշանեկ, թէյափա-
ճառնեկ, ջրափաճառնեկ և թուրքնեկ զանազան կար-
գի, հասակնեկի և կարողութեան:

Ապրիլի 15 է, 1905 թ.

Անցըը պատահում է Անդրկովկասի նահանգական քա-
ղաքներից մէկում:

Խ

ՄՐՐԿԱՀԱԻԵՐ



Եօարանը ներկայացնում է պարսկական մզկի-
րի առաջ մի մեծ եւ ընդարձակ բակ: Ազ եւ
ձախ միատեսակ սրածեւ կամարակապ խցեր,
սրոնց կտուրները միակերպ ծածկում են խր-
ցերի յետեւից բարձրացող սուերախիս ծա-
ռեռով: Խցերի առաջ՝ ամբողջ երկայնու-
րեամբ՝ ձգուած են երկու-երեք աստիճաններ,
որոնցով բարձրանում են խցերը մտնելու կամ
այնտեղեւից բակն իջնելու համար: Խորի մեջտեղում կանգ-
նած է պարսկական նաշակով եւ զարգարաներով մզկիրը,
իսկ նրա յետեւից ազ եւ ձախ՝ բարձրանում են մի զոյգ աւե-
լի զեղեցիկ մինարաններ: Բակի մեջտեղում, երկայնուրեամբ
դկայի խորքը, սրբատաշ բարերով ժինւած է մի աւազան իւր
շատրւանով:

Պարագոյը բարձրանալին՝ այստեղ կամ բաւականին թուրքեր զանա-
զան հասակի և տարիքների, որոնց զգեստները թուրքական են, բայց բազ-
մազան. մի քանիսներն ունեն եւրոպական զգեստներ, իսկ հետզհետէ, որոնց
թիւը սկսում է շատանալ, երեսում են պաշտօնական զգեստներով թուրքեր:

Մի քանիսները նստած են աւազանի շուրջը՝ զայլան կամ նարգիլայ
են ծխում. ոմանք այստեղ կամ այստեղ նստած թէյ են իմում, չատերը
ոտքերի վերայ կանգնած խմբակներով՝ խօսում են, շտաբն էլ մանզալով
և խօսելով պտոյտ են անում աւազանի շուրջը:

Հետզհետէ զայլիս են նոր նոր թուրքեր թէ խմբակներով, թէ մի մի և
թէ երկու-երեք հոգով:

Մուաքը ձափի կողմի անկիւնիցն է:

Մզկիթի մէջ երևում են մի քանի նամազ անողներ:

Օրոյ ժամի 11-ն է:

ՏԵՍԻԼ Ա

ԵՐԿՈՒԻ ՀԱՄՄԾԱՐԻ ԵՒ ԹԱՂԻ

Ա ՀԱՄՋԱՐԻ

ԷԿՈՐ Ի՞նչ կայ, որ էսքան հաւաքւում են մէջիղը:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Քեմ իմանում, վալլա, ամա ի՞նչ որ ա, մեծ բան ա
ԷՐԿՈՒՄ:

Ա ՀԱՄՋԱՐԻ

ՀԱՎԱՔՎՈՒՄ են, էլի դալիս են. դաստա դաստա

Բ ՀԱՄՋԱՐԻ

Ի՞նչպէս երկում ա ժողով ա լինելու:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Իս մեր ու հայերի դալմաղալների համար:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Հա, դրուստ, պէտք ա հաւաքւէին. էս օր ա, հմ:

Բ ՀԱՄՋԱՐԻ

(Առնչելով) Թաղի, այ Թաղի:

ԹԱՂԻ

(Գաղով) Հը:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Մի էստեղ արի, դիմիդ մատաղ:

ԹԱՂԻ

(Գաղով) Հը:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Իս ի՞նչի են էսքան հաւաքւում. դու կիմանաս:

ԹԱՂԻ

Վա. չէք իմանում: Եապոններն ախր մենձ-մենձ զետ-

միներով ու թոփերով Բազու են դալիս:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Եա: Պրայ են տալու:

ԹԱՂԻ

Բաս էլ ի՞նչի են դալիս:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Էդ հօ սաղ Բազուն դարրագաղին կանեն:

ԹԱՂԻ

Թողն էլ չեն հանի:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Եալաշ, հմի ի՞նչ են ուզում անեն:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Այ, էլի դալիս են:

ԹԱՂԻ

Հլա շատ կզան: Ամեն քաղաքներումն էլ սաղ մուսուլ-
մանները պէտք ա հաւաքւեն, որ...

Ա ՀԱՄՋԱՐԻ

Եալաշ, մինակ մինք ի՞նչ կարանք անենք: Բա հայերը:

ԹԱՂԻ

(Բարկացած) Նրանց անունը մի տա: Մինք նրանց հետ-
քան չունենք: Նրանք անհաւատներ են:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Ասենք էդ դրուստ ա:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Բա ի՞նչ ենք անելու ախր:

ԹԱՂԻ

Ինա որ՝ հմի պէտք ա կարգադրենք, փող հաւաքենք,
մի շաբաթւայ մէջ էշերով հող կրիլ տանք, ածիլ տանք
ծովը, սաղ ծովը ցամաքացնիլ տանք, որ եապոնների գետ-
միքը Բազու չկարենան գալ ու տեղն ու տեղը միան:

Ա և Բ ՀԱՄՋԱՐԻ

(Միմիանց երեսի զարմացած նայելով) Փիիի...

ԶԱՅՆ

Այ լաւ լիմօնագ-գաղ:

ԹԱՂԻ

Այ, ախմախներ, բա էլ ի՞նչ մուսուլմաններ էք, որ

Էկել էք մէշիդն ու՝ բանից բեխաբար էք:

(Երկու համշարիներն էլ իշացած նայում են իրար երեսի, ոչնչ
շնականալով):

Ա ՀԱՄՋԱՐԻ

Ես, հէնց ընենց, էկայ նամաղ անելու, չունքի օրը ջու-
մայ ա, բանելու չգնացի:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Ես էլ:

ԶԱՅՆ

Այ քաղցր շարբաթ:

ԹԱՂԻ

Դէ որ խարար չէք հիմի կիմանաք: (Թողնում է եւ դնում):

Ա ՀԱՄՋԱՐԻ

Աս ի՞նչ արեց որ:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Փիան, փիան. սա էլ մուսուլման ա էլի:

Ա ՀԱՄՋԱՐԻ

Տօ ջանլը, սրանք թնչ մուսուլմաններ են որ, հայեցն էլ փիս են:

Բ ՀԱՄՋԱՐԻ

Հայից որ մի բան հարցնես՝ կկանգնի ու մի սհաթ կը հասկացնի ու կերթայ. ամմա մեր մուսուլմանները...

Ա ՀԱՄՋԱՐԻ

Գնանք, տեսնենք ով կայ մեր խելքի կարած մարդ, իմանանք: (Գնում է):

Բ ՀԱՄՋԱՐԻ

(Նրան հետեւելով) Այ հայ, հա գայիս են:

ՀԱՅՑՆ

Այ սառն իսկեանջաբե:

ՏԵՍԻԼ Բ

ԹԱՂԻ ԵՒ ԶՐԱՎԱԾԱՐԻ

ԹԱՂԻ

(Գալով առաջ եւ կանչելով ամբոխի միջից ջրավաճառին) Լիմոնադ-գաղ, այ լիմոնադ-գաղ. (ձեռքով անելով) արի մի:

ԶՐԱՎԱԾԱՐԻ

(Իսկոյն մօտենում է, Սրա մի ձեռքին բռնած է մի մեծ ապակեալ շիշ՝ մէջը կիսով չափ ջուր ածած եւ մի կիտրոն օղակներով կտրատած, իսկ միւս ձեռքին՝ մի մեծ կոնով բաժակ):

ԹԱՂԻ

Մի ստաքան տուր խմեմ:

ԶՐԱՎԱԾԱՐԻ

Ես սհաթին: (Մի առանձին աշխուժով եւ նշանակութիւն տալով իր ջրին՝ ածում է բաժակի մէջ եւ տալիս): —Համեցէք:

ԹԱՂԻ

(Խմում է): Պահ, էս ինչ սառն էք... Հաւէն ցուրտ, էս քու զահրումարն էլ սառը: (Վերադնում է բաժակը, բեկերը սրբելով ոլորում է եւ լեզով խիստ տրաքացնում):

ԶՐԱՎԱԾԱՐԻ

Դէ որ տաք բան իր ուզում, չայ խմէիր էլի:

ԹԱՂԻ

Ախմախ. ես իմ բանը չեմ իմաննում: Սիրոս էրվում ա ախր:

ԶՐԱՎԱԾԱՐԻ

Դէ իմ լիմոնադ-գաղը լաւ ա էլի, ինչքան որ կերած

ընես՝ կնստացնի, ջիգեարդ էլ կհովացնի: Զաւօղներում ըսէնց լիմօնադ-գաղ իսկի չեն շինի:

ԹԱՂԻ

(Տալով 1 կոպէկ) Առ, շատ մի գահլա տար:

ԶՐԱՎԱԾԱՐԻ

Մի կապէկ էլ տուր ստաքանն էրկու կապէկ ա:

ԹԱՂԻ

Գլխիցս սադ իլ: Մի կապէկ էլ չամէր: Եղ տեսակ ջուրը տար հայերին ծախիր, ոչ թէ մուսուլմաններին: Անսառնա:

ԶՐԱՎԱԾԱՐԻ

Փիի՛...

ԹԱՂԻ

Էլ թնչ փիի... պղտոր ջուր ա էլի, կարծես համամի տակից զուս էկած ընսի... մի քիչ էլ չամչով քաղցրացրել ես:

ԶՐԱՎԱԾԱՐԻ

(Վրդովւած) Թամուզ շաքար եմ զցեւ թամուզ շաքար... չմմիչը որն ա: Եղ էլ թաղա խարար: Այ, սադ լիմօնն էլ մէջը: Կապէկս տուր:

ԹԱՂԻ

(Ատաղի հայեացը է զցում նրա վրայ):

ԶՐԱՎԱԾԱՐԻ

(Գրգուած) Հը...

ԹԱՂԻ

(Կպրտելով զրամը) Առ, կորի: (Նոյնպիսի հայեացը):

ԶՐԱՎԱԾԱՐԻ

(Գետնից վերցնելով զրամը, մի խիստ հայեացը է զցում թաղիի վրայ եւ ապա զնալով) Հըմ... համամի տակի ջուր... (Գնաց): Այ, քաղցր լիմօնադ-գաղ:

ՏԵՍԻԼ Գ

ՄՈՒԽԱ ԵՒ ԻՐԶԱ

ԻՐԶԱ

Մղասիր, Մուսա. էն ո՞լ ա, էն պրիստամը, որ ձեռքով ոտքով խօսում ա:

ՄՈՒԽԱ

Է՞ն, Եվլախի պրաստամն ա: Գաւառներիցն ու քաղաքներից շատ ծառայողներ էլ են էկեր:

ԻՐԶԱ

Գիտեմ, զիտեմ, ամա էս մէկին չէի ճանաշում:

ՄՈՒԽԱ

Հա, ասում ես—որտեղից ճարթնք:

Կնա Միրզա Ալասկեարի մօտ: Նա միշտ ստանում ա:
ՄՈՒՍԱ
Էն վարժապետը, վա:

ԻՐՋԱ
Ամեն փոշտով, բերդանկեր էլ ուշվոլներ էլ:
ՄՈՒՍԱ

Բաս մնց չի բռնւում: ԻՐՋԱ
Նա հօ հայ չի, որ կասկածեն: Պասիլկէքի վրա էլ գրիլ
ա տալիս—«աշակերտների խաղալիք», կամ «գրքեր»:

ՄՈՒՍԱ

Ղոչչաղ, Միրզա Ալասկեարի:
ԻՐՋԱ
Էրէկ էլ, պէտք էր «Քաշկիւլ» պարախօդով մի 150 այ-
նալու դար:

ՄՈՒՍԱ
Էկաւ էլ տէրեց տէր արին էլ: Ինչ արի չարի, ինձ
մինն էլ ա չասաւ:

ՀԱՅ
ԱՅ տաք չայ:

ԻՐՋԱ
Զէ, ժանդարմաները լաւ են. մեզ էնքան էլ սաթաշմիշ
չեն ընում:

ՄՈՒՍԱ
(Վնալով) Ամմա հեյերի էլ՝ ջաններն են հանում է:
ԻՐՋԱ
(Հետեւելով նրան) Տեղն ա, դրանց քոքը ջնջւի:

ՃԵՄԻԼ Դ

Ամբոխի մէջ զանազան տեղերից լսում են. „Շուքիւր աղան
էկաւ, Շուքիւր աղան էկաւ“: Խորբած ելեւում է նա, աջ ու ձախ
զիսով բարեւում է իրեն բոլոր բարեւողներին: Նա մօտենում է կամ
այս կամ այն խմբին եւ խօսակցում է նրանց հետ:

ՃԵՄԻԼ Ը

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ և ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ
Հիմի հասկանում ես. Սուլթանի միտքն այն է, որ Բա-
յեազէտի կազմերից կամաց-կամաց զօրքերն ուղարկի Երևան,
—Նախըւանն առնի ու այսպէս գայ Շուշի, Գեանջայ և Բա-

գու. բոլորն իր խալիֆայութեան տակ առնի. մեր հիմ-
նութիւնները, բէկութիւնները, սարդարութիւնները նորոգի,
ինչպէս առաջ էր. ամբողջ երկիրն իսլամի իշխանութեան
տակ գնի ու ինքն էլ մեզ համար պաշտպան կանգնի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

ԻՆՉ ԷՄ ՄԱԿԵԼ:

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ

Յետոյ էլ ուրիշ շատ բաներ կան... Դեռ Վրաստանն
էլ... Բայց այդ, ի հարկէ, ամենից վերջը... Խիւան, Սամար-
դանդը...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Էդ հօ մեր Շահն էլ միւս կողմից կ'օգնի:

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ

Զէ, Շահին ձեւնառ չի, նա Սուլթանի խալիֆայու-
թիւնը չի ընդունիլ. բայց այդ էլ ժամանակի հարց է: Նրա
մեռնելուց յետոյ մի այնպիսի Շահ կդնենք, որ ընդունի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Սպասիր: Ուրեմն Սուլթանն ուզում է, որ սադ, մու-
սուլմանական երկիրները իր ձեռքը ցցի:

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ

Ոչ թէ ուզում է իւր ձեռքը ցցի, չէ. նա ուզում է, որ
ամեն տեղ՝ ինչպէս որ կայ՝ այնպէս էլ լինի. միայն թէ իւր
խալիֆայութիւնն ընդունեն ամեն տեղ, որ ժամանակին, եթէ
խոլամութեան դէմ քրիստոնէութիւնը խաղեր սարքի, խկոյն,
Նրա մի մատ բարձրացնելովը՝ ամբողջ մուսուլմանութիւնը
կանգնի ինչպէս մի մարդ... որ ամբողջ քրիստոնէութիւնը
զողաց մեր խոլամի առաջ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

ԻՆՉ ԷՄ ՄԱԿԵԼ...

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ

Եւ հէնց այդ է պատճառը, որ Սուլթանն ուզում է՝ ամե-
նից առաջ՝ չս հայ փիս միլէթը ջնջել սաղ աշխարհի երեսից:
Թուրքիայումն էլ կամաց կամաց կոտորում են և շատ չի քա-
շի՝ մի տաս տասնունինդ տարի՝ այնտեղ ոչ մի հայ չի մնայ:

ՀԱՅ

ԱՅ, քաղցր շարբաթ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Հըմ... (Վնալով) Միրզա Իւսուֆ աղա, մի սպասիր. ով
են, այ, նրանք, որոտեղից են եկել:

ՄԻՐՋԱ ԻԻՍՈՒԹ

Նրանք. Զիվանշիրի, Զանգեզուրի, Զիբրայելի զաւառ-
ներիցն են. այ, նրանք էլ (ցոյց տալով միւս խմբի վրայ) Բօր-

չալուից, Ղաղախից... այ, նրանք էլ Նովսիից, Շամախիից...
էն Երևանցիներին էլ՝ որ գիտես... Մի խօսքով մի անկիւն
չկայ, որից մարդ չկայի: Ամենքն էլ հաւաքւել են:

ՉԱՅՆԵՐ
Այ, սառն իսկեանջարի:
Այ, տաք չայ:

ՏԵՍԻԼ Զ

ԵՐԿՈՒ ԹՐԱՒՐ. ՈՒՍՈՒԲ ԵՀ ԹՎԱՀԻ

(Ուստի եւ Թաղին զալով կանգում են եւ խօսում կամաց,
մինչեւ որ երկու թուրքը խիստ վաւաշուտ եւ նեարդային դրզումով,
իրական սեռի մասին խօսելով՝ զալոս անցնում են):

ՄԻ ԸՆՔՆ ԹԹՈՒՐՔ
Փամաճ... Մի ընէնց դաշանկ, մի ընէնց նաշխուն, մի
ընէնց սիրուն, մի ընէնց ջէյրան, մի ընէնց հէյրան, մի
ընէնց մարալ... մի ընէնց... (Գնացին):

ՈՒՍՈՒԲ
(Քարծրացնելով ձայնը) Վալլա:

ԹՎԱՀԻ

Էյ, քու զուխոր վկայ... Մէկ-մէկ համբարում էր. մէր
Բագուի կոտորածի ժամանակ զուզ 18 հոգու պատկացրեցի:
Էյ:

ԹՎԱՀԻ

Ես մուսուլման չեմ, թէ մի հատ պակաս ընի. մաս-
սաբս վկայ: Էնենց էի թրխիթրխիկոցը զցել, որ ի՞նչ ասեմ:
Ազգայիլ էի դառեւ, ազրայիլ: Մի վախտ ձեռքերս բեղարեցին,
մասուզէրը պահեցի՝ ու ուզոն առայ. եակ էլ բանը հասաւ
օվշարուն... (ոգեւորւած) փոթեցի, փոթեցի ու վեր ածեցի:

ՈՒՍՈՒԲ

Ես էլ պակաս չէի, ամմա զու ինձնից անց ես կացել:

ԹՎԱՀԻ

Ամմա ի՞նչ թալան էր:

ՈՒՍՈՒԲ

Սադ աշխարքը լիացաւ: Թէ մէկ էլ կսկսուի...

ՏԵՍԻԼ Է

ՄՈՒՐԹՈՒ ԶԱԼԻ ԲԵԿ և ԱԲԱՍ ԱԼԻ

ԱԲԱՍ ԱԼԻ

Այս հայերը որ կան՝ մկների ջիսս են. որտեղ բնկնում
են՝ իսկոյն մուսասում են... Մկները մի չնչին բաներ են,

բայց այսպիսի հաստ տախտակներ են ծակում, պատերն են
քչփորում ու զլուխները հանում. զետնի խորքերն են մտնում.
սարերն ու քարափներն են այս զիսից ծակում ու այն զլխից
դուրս զալիս և ամեն տեղ էլ մուստառում. — հէնց այդպէս
էլ հայերն են: Քանի այս հայերը կան մեր այս երկրում՝
մուսուլմանի բանը խարաբ է. մուսուլմանը հողին է հաւա-
սարում. զրանց առաջը պէտք է շուտ առնենք. զրանց քո-
քը պէտք է շուտ ջնջենք...

ՄՈՒՐԹՈՒ ԶԱԼԻ ԲԵԿ

Սպասիր, Աբաս Ալի աղա, զրանց քոքն արկին տալը
հեշտ է. բաս իշխանութիւնը... զիտեմ ի՞նչ կանի:

ԱԲԱՍ ԱԼԻ

(Քմիթիծաղ) Ի՞նչ արեց Բագւի, Երևանի կոտորածներից
յետոյ:

ՄՈՒՐԹՈՒ ԶԱԼԻ ԲԵԿ

(Ուրախացած եւ ոգեւորւած) Հէջ: Ոչինչ չարեց:

ԱԲԱՍ ԱԼԻ

Տեսման ես: Իշխանութիւնը որ ուզենայ էլ՝ ոչինչ չի
կարող անել. մենք վրայ կտանք այս կամ այն գիւղերի և
քաղաքների վրայ՝ լաւ սիրուն կկոտորենք, կթալանենք,
կայրենք, ամեն ի՞նչ հիմնայատակ կանենք, կվերջացնենք ու
նոր նոր սահ սալզաթը պիտի զայ ու, իրը թէ խաղաղեց-
նի... Այսինքն՝ այն ժամանակ կկարողանայ հանել, երբ
արդէն ամեն բան արած պրծած կլինենք:

ՉԱՅՆ

Այ, սառն իսկեանջարի:

ՄՈՒՐԹՈՒ ԶԱԼԻ ԲԵԿ

Բաս յետոյ... Յետոյ մեր կաշիները կքերթիւ չէ:

ԱԲԱՍ ԱԼԻ

Ծնմ, ողորմելի: Թող գանեն մեղաւորներին ու պատժեն:
Ամբոխի մէջ մեղաւոր չես գանիւ: Շատ շատ՝ կարող է բոլոր
մուսուլմաններիս տուգանքի տակ գցել. իսկ այդ տուգանքը
մեզ համար խաղ ու պար կլինի. ի՞նչ որ թալանած լինենք՝
նրա քսանից մէկն էլ որ տանք, էլի շատ կլինի: Մենք ի՞նչ
ենք կորցնում: Իսկ եթէ բանն աւելի խելացի տանուի, պօ-
ւտիկայով տանուի, այն ժամանակի...

ՄՈՒՐԹՈՒ ԶԱԼԻ ԲԵԿ

(Ընդմիջելով նրա խօսքը) Այ ջանում, էղ ի՞նչ բան է փո-
ւթիքան է: Փոլիթիքան հա փոլիթիքա շատ եմ լսել, ամմա...

ԱԲԱՍ ԱԼԻ

Այ, ասեմ... (Մի փոքր մտածելու յիտոյ) Կարճ ասեմ, որ
լաւ հասկանաւ: Պօլիթիկան նշանակում է քաղաքականու-

թիւն, իսկ աւելի պարզ՝ խաբեքայութիւն։ Այսինքն՝ քեզանից մեծին այնպէս պիտի շողոքորթես, որ նրան ձեռքիդ մէջ պահես։ իսկ քեզանից փոքրին, կամ քեզ հաւասարին՝ այնպէս խարես, որ նրան գլուխ վրայ շուռ տաս։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Փաման։ Էղ հօ մեր հին փեշակն է։

ԱԲԱՍ ԱԼԻ

Ողորմի քո հօրը։ —Պօլիտիկան այդ է։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Դէ որ էդպէս է՝ կտեսնէք հիմի թէ մենք ինչ փոլիթիքա ենք բանեցնելու։ կտեսնէք թէ ինչպէս ենք մենք էղ հայերի քոքն արեին տալիս։ Դուք մի սպասէք, ես զնամ մեր երկիրը։ —սաղ նախշւանն ու գաւառները, սաղ Շարուրն ու Դարալագեազը՝ կտեսնէք թէ ոնց ենք տակն ու վրայ անելու։

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆՔ, ԱԽՈՒԽԴ, ԱԼԱՇՐԱՓ, ՅԵՑՈՅ ՍԵՅԻԴ, ԻՍԿ ՅԵՑՈՅ ՇՈՒՐԻՀԻՌ ՅԱԼ

ԱԼԱՋՐԱՓ

Ախունդ աղա, լաւ ես ասում... բայց... էղ քետիուրներն էլ պակաս ջանաւարներ չեն..., վերջը, վախում եմ, տակին էլի մենք մնանք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Ո՞վ... ո՞նց... էն մուսուլմանը թող գետինը մտնի, որ պէտք է հայի տակին մնայ։

ԱԽՈՒԽԴ

Ոչ մի ժամանակ այդ չի լինի։ Բայս Մենք հիմայ ուրիշ պատրաստութիւն ենք տեսնում։ Փետրվարինը մի փորձ էր միայն... Երևանինն էլ նոյնպէս։ Թէ որ այս անգամն էլ Երևանը բէգէյրաթ դուրս էկաւ այն ժամանակ կփորձենք այնուղ, երրորդ, չորրորդ, դեռ տասներբորդ անգա էլ, մն մինչեւ որ մենք մեր անելիքը կանենք։

(Վունում է Շուրիւր աղան)։

ՍԵՅԻԴ ԱՂԱ

Ես զարմանում եմ, վալլա, դու, Ախունդ աղա, փոխանակ հանգնելու սկսած բոցը, գեռ ուզում ես աւելի բորբոքիլ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Ախունդին, զարմացած) Ամ ինչ ա ասում։

ԱԽՈՒԽԴ

(Սէյիդին) Սէյիդ աղա, դու մեղ զարմանում ես, վալլա...
— 19 —

ՍԵՅԻԴ ԱՂԱ
Այս, աղասա։ Պէտք է խեղդել այս բոցը մեր երկու աղջութեան համար էլ այս կորստաբեր է և վտանգաւոր։
Ըստիքիր ԱՂԱ

Ներողութիւն։ Մէյիդ աղա, դու ի՞նչ մուսուլման ես, որ այգպէս ես դատում։ Դու հայերի կողմը պահելու իրաւունք չունես։

ՍԵՅԻԴ ԱՂԱ

Ես հայերի մասին չեմ էլ մտածում։ Ես միայն խղճում եմ մեր թուրքերին, որ զուր ի զուր տեղն իրենց առնն են քանգում։ Ես իմ ասելիքս պիտի ասեմ այս մէջիսի առաջ։ Պէտք է բոլորի աչքերը բաց անել...
ԱՄԵՆՔԲ

Փի՛կ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Բորբորած) Համենցէք, տեսնենք ի՞նչ պէտք ա անես։
Ըստիքիր ԱՂԱ

Է՛, ի՞նչ էք դրա հետ խօսում։ Մենք մէջիսին մերը կասենք, իսկ դա էլ թող իրենն ասի։ (Ախունդին) Ախունդ աղա, կարգադրիր, որ բոլորն էլ հաւաքւեն այստեղ։ Պէտք է սկսել։ (Քաշելով մի կողմ. առանձին եւ արագ) Ամբոխին, ասա, հասկացնեն, որ Սէյիդին չլսեն... Գիտես էլի։
ԱԽՈՒԽԴ

Լաւ, լաւ... Ես իմ բանս գիտեմ։ (Գնաց եւ կանչեց միքանի սէյիդների ու մօլլաների եւ կարգադրութիւններ է անում։ Վիրջիններն հաւանութիւն տալով, իսկոյն մտնում են ամբոխի մէջ։ Հետզինուի մէծերը առաջ են զայիս)։

Ըստիքիր ԱՂԱ

Մուրթազալի բէկ, այսօր ինձ մօտ ճաշի ես։ Ես քեզ հետ շատ բան անեմ խօսելու։ Նախիջևանի խաներին յանձնարարութիւններ ունեմ։ Նրանց անզատան պէտք է տեսնես։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Գլուխը խոնարհութեամբ իշխնելով եւ աջ ձեռքի մատերի ծայրերը աջքի վերայ զնելով) Աչքիս վրայ։

ԱԽՈՒԽԴ

(Եռութիւրին) Կարգադրեցի։ (Ծածուկ) Սէյիդից վախենալու կարիք չկայ։

Ըստիքիր ԱՂԱ

Լաւ։ Հա, Ախունդ աղա, այստեղ մէջիդում ի՞նչքան գէնք կայ։

ԱԽՈՒԽԴ

Մօսին, բերդան, այնալու՝ 2268 հատ, ունիլոներ էլ — Մասուզը, Բրաունինգ, Բուրխար, Մմիտվիսոն՝ ինչքան ասես։

ՅՈՒԹԻՒՐ ԱՂԱ

Էլի քիչ է: Շուտով մի շոգէնաւ էլ պիտի դոյ Բաթում:
ՄԻԼԻՍՆԵՐԸ
Տօ, թող գայ է, թող գայ է:
ԱԽՈՒՆԴԻ
Դէ մի կողմից գալիս է, միւս կողմից գնում: 30000
մուսուլման զինեցինք, հանաք բան չէ:
ՄՈՒՐԹՈՒՉԱԼԻ ԲԵԿԻ
(Նուրիւրին) Մենք էլ կարող ենք օգտուել մեր զիւղերի
համար:

ՅՈՒԹԻՒՐ ԱՂԱ

Որքան ուզեք: Հէնց զիւղերի ու զաւառների համար
ենք հաւաքում էլի: Ախունդ ազա, միշտ այդքան պահեստում
ունեցիր համ, որ այստեղի նորանոր խառնակութեանց ժա-
մանակ՝ պակասութիւն չինի:

ԱԽՈՒՆԴԻ

Ի հմբկէ: Շուքիւր աղա, մեզ են սպասում: Ես սկսում
եմ: (Գնաց կանգնեց բեմի մէջ տեղ, հայեացը մի քանի բոսէ զցում
է քաղմութեան վերայ: Ընդհանուր լուռթիւն: Ամբոխին): Այ ժողո-
վականներ, խաներ, բէկեր, աղալարներ, աղաներ, մօլաներ,
սէյփներ, գարվիշներ... Ես յայտնում եմ մեր առաջաւոր
մուսուլմանների կողմից ամենքի շնորհակալութիւնը, որ
զուք իրկրիս ամեն կողմերից հաւաքւել էք մեր հրաւերքին,
մի այնպիսի գործի առթիւ, որ. Իսլամութեան համար ներ-
կայում մահու և կեանքի խնդիր է ներկայանում: Երեսում է,
որ կովկասի մուսուլմանները շատ լաւ են հասկանում ժա-
մանակիս դրութիւնը, որ ամենայն պատրաստակամութեամբ
ուղարկել են ձեզ, իրենց ներկայացուցիչներին, մեր խօսքը
լսելու: Կրկին շնորհակալութիւն:

ԱՄԵՆՔԸ

Մեր պարտքն է: Մեր պարտքն է:

ԱԽՈՒՆԴԻ

Ներկայ ժողովը պէտք է պարզի, թէ ինչ ուղղութիւն
ենք բռնելու այսուհետեւ մենք, մուսուլմաններս, հայերի վե-
րաբերմամբ:

ԱՄԵՆՔԸ

Այո, այո... հրամանքեղ...

ԱԽՈՒՆԴԻ

Հայերը, ինչպէս յայտնի է ամենքիս, չափազանց մե-
ծամտել են. նրանք չեն ուզում ճանաչել ոչ պետութիւն, ոչ
կառավարութիւն, ոչ իշխանութիւն, ոչ էլ իրանց կպած և
նոյն իսկ գարերով միասին ապրած ազգերին: Թողնենք մենք

ոսին և վրացիներին և խօսենք միայն մուսուլմաննե-
րիս մասին: Դուք ամենքդ տեսնում էք, որ հայերն այլ և
չեն նայում մեր վերայ առաջւայ ակնածութեամբ, այլ շա-
րունակ կեղեքում են մեզ: Նրանց պատճառով զրկւած ենք
մենք մեր բարօրութիւնից, նոյն իսկ ծիսակատարութիւննե-
րից: Մեր շախակներն էլ մինչև անդամ չենք կարողանում
հրապարակով անել:

ԱՄԵՆՔԸ

Բաս, բաս... Ուզիդ է... Դրուստ ա...

ԱԽՈՒՆԴԻ

Նոյն իսկ հիմայ՝ հայերն արդէն զէնքը ձեռներին սկսում
են կոտորել մեր անբաղդ, խեղճ և միամիշտ հաւատակիցնե-
րին: Տեսէք, ինչքան են երես թուել, որ երբ մի ուզզափառ,
արքայութեան արքանի մուսուլման՝ մենում է, նրանք չեն
ասում «մեռաւ», այլ ասում են «սատկեց այս ինչ թուրքը»:
Հասկանում էք — «սատկեց»... այսինքն այնպէս, ինչպէս
սատկում է մի անասուն, մի շոն:

ԱՄԵՆՔԸ

Ճիշտ է... Միանգամայն ուզիդ է... Շատ զբուստ ա...
ԱԽՈՒՆԴԻ

Տեսնում էք, Բագւում, Երեանում, մի քանի տեղեր էլ
հայերն իրենք են պլտորում ջրերը, թուքքերին ոտքի կանգ-
նեցնում ու իրենք էլ յետոյ մեզ կոտորում: Ժամանակն է
ուրեմն, որ մենք էլ սթափենք և մի լաւ դաս տանք այդ
անխիզ, անամօթ ազգին:

ԱՄԵՆՔԸ

Ժամանակն է, ժամանակն է...

ԱԽՈՒՆԴԻ

Ուրեմն մենք պէտք է շատ զգուշութեամբ վերաբեր-
մանք այս հարցին և մի սրտով, մի խորհրդով միանանք ի-
րար հետ... Մեր Շուքիւր աղան այս մասին շատ բան ունի
ասելու մեր առաջաւոր, խելացի մուսուլմանների կողմից:
Հիմա էլ լսենք նրան:

(Ամբոխի մէջ հաւանութեան և հետաքրրութեան շարժումներ):

ՅՈՒԹԻՒՐ ԱՂԱ

(Առաջ զարդ) Այ, ժողովականներ... Ես կսկսմ ուզիդ
գործից: Մի 70, 80 կամ 100 տարի սրանից առաջ, ովք էք
այս երկրի տէրը:

ԱՄԵՆՔԸ

Մենք... Մեր Շահերը... Մեր պատերը...

ՃՈՒԹԻՒՐ ԱՂԱ

Ապա ինչպէս եղաւ, որ մենք կորցրինք այստեղ մեր
իշխանութիւնը, մեր տէրութիւնը: (Լուս են ամնիք): Դուք

կարծում էք թէ՝ մենք այնքան անգօր էինք, որ մեզ յաղթեցին ու երկիրը մեր ձեռքից ասամն—ոչ. քաւ լիցիւ Մեր այս երկիրը այնքան անսամաչելի երկիր էր, որ ոչ թէ սուսր, այլ նոյն իսկ սատանան իր ոտքը կկոտրէր և չէր համարձակւի իր քիթը ցոյց տալ, ևթէ չինէին նրան ճանապարհներ ցոյց տողներ: Իսկ ովքեր էին դրանք.—մեր այն ժամանակւայ հպատակ, մեր այն ժամանակւայ ստրակւ հայերը:

ԱՄԵՐԻ

Դուզ խօսք է... Շատ ուղիղ է...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ ահա այդ անհաւատ ազգի ձեռքով այստեղ մեր արշապետութիւնն ընկաւ. Իսլամի ոյժը խորտակւեց...

ԱՄԵՆՔԻ

Վախ, վախ, վախ, վախ...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ այսօր էլ մենք, մուսուլմաններոյ, Իսլամին սրբութեամբ հետևողներս, ընկել ենք մի ամենախայտառակ գրութեան մէջ: (Սրուո) Իսլամ ժողովուրդը չի կարող և չպէտքէ հպատակ լինի ոչհաւատացեալ թափաւորի:

ԱՄԵՆՔԻ

Չի կարող... Չպէտք է լինի...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Բայց այսօր—ենք: Դա խայտառակութիւն չէ, ոտ սրբապղծութիւն չէ Իսլամի համար:

ԱՄԵՆՔԻ

Բաս, բաս... Ի ճարկ է... Վայ մեր դիմին... Վայ մեր դիմին...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ այդ բալորն եղել է ում ջնորհիւ: Կրկնում եմ.—մեր անամօթ, անհաւատ, ստրուկների, այն անխիղն ազգի, որ մի քանի տասնեակ տարիներ առաջ՝ ջների պէս լիզում էին մեր փեշերը, վիրաւորւած օձերի պէս գալարում էին մեր սուների տակ:

ԱՄԵՆՔԻ

Այդպէս է, աղաս... Ճշմարիտ է... Դրուստ ա...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ահա այդ միջաները գաւաճանեցին մեզ և... մեր երկնային լուսինը ծախեցին իրենց անպէտք փայտի կտորին:

ԱՄԵՆՔԻ

Վախ, վախ, վախ...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այդ էլ բաւական չէր... Ի՞նչպէս վարւեցին այնուհետեւ

մեզ հետ.—Մեղ՝ տարիների ընթացքում՝ կտմաց-կամաց հաւաքեցին իրենց բուռը, կալ ու կապ արեցին իրենց սատանայական ցանցեցի մէջ, ճնշեցին և սնասունի աստիճանին հասցըրին:

ԱՄԵՆՔԻ

Շատ դրուստ ա... Կալ ու կապ են արել մեզ...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ի՞նչ ենք մենք մեր գումաներում, բօրսային գրասենեակներում, հասարակական ժողովներում: Ի՞նչ դրութեան մէջ է ապա մեր խեղճ ժողովուրդը գիւղերում: Բար են մեր հողերը, մեր իրաւունքները... Աւր որ գնա՞մ թէ զիւղ, թէ քաղաք՝ ամեն տեղ էլ հարուստը հայն է, տէրը հայն է, իշխողը հայն է... և իսլամը ամեն տեղ զրուխ է խոնարհցնում հայի ասած, շողովորթում է միշտ նրան, քծնում է, որ ինչ է այդ անհոգի, անխիղն, անհաւատաների աչքը քաղցր լինի իր վրայ:

ԱՄԵՆՔԻ

Շատ դրուստ ա... Ճշմարիտ է... Մեր հոգին են հանել դրանք...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Վերցրէք Բագուն, Շուշին, Գանձակը, Երևանը, Նախիջևանը, Նուխին, Շամախին—բոլոր ինչքան որ կայ գաւառները, գիւղերը՝ և կտեսնէք, որ ամեն տեղ էլ հայն է առաջն տեղը կանոնել ու մուսուլմաններին իրենց սորուկները գնեն:

ԱՄԵՆՔԻ

Սրանից յետոյ կտեսնենք...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Նոյնպէս էլ վարւում են վրացիների հետ: Նրանք էլ են հայերից զգեւել բայց ստիպւած են իրենց առայժմ չէզոք ձևացնել: Մուսուլմաններ, Թիֆլիզի, Քութայիսի նահանգները վրացիներին են, Նրանք էլ պէտք է տիրեն. Բագւի Գանձակի, Երևանի նահանգներն էլ մերն են, մենք էլ պէտք է տիրենք:

ԱՄԵՆՔԻ

Մերն են... Կտիրենք... Պէտք է տիրենք...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ տիրելու ժամը հասել է: Ուստի մենք՝ ամենից առաջ՝ պիտի ոչնչացնենք այն տարրը, որ միշտ, մեր ամեն գործերին սատանայի պէս խոչնդառ է հանդիսանում:

ԱՄԵՆՔԻ

Պէտք է ոչնչացնենք... Եւ կ'ոչնչացնենք...

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւս առաւել, որ այդ ազգը հիմայ էլ մտածում է օր առաջ կոտորել կովկասի բոլոր մուսուլմաններին, որ իրենց տեղը լայնանայ ու իրենց համար թագաւոր դնեն այստեղ:

ԱՄԵՆՔԸ

Պոյ, պոյ, պոյ... Այ քեզ բան...

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Աղան: Հիմա պէտք է մենք զգաստ լինենք, որ յանկարձակի չգանք: Մենք պէտք է յարձակւենք հայերի վրայ ամեն տեղ—թէ քաղաքներում և թէ գիւղերում: Մեր ունեցած չունեցածները փողոց պէտք է հանենք, ծախենք-ծախսախենք ու գէնքերի տանք: Յարձակւենք, կոտորենք, այրենք... Քառորդանդ անենք նոյն իսկ նրանց սրբութիւնները:

ԱՄԵՆՔԸ

Սրի կքաշենք ամենքին... Քար ու քանդ կանենք սաղ... զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ այնտեղը պիտի հասցնենք նրանց, որ ամեն բան թողնեն ու փախչեն այս երկրից, առանց յետ նայելու. ոք մթուուրների օրն ընկնեն ու տեղ չգտնեն իրենց գլուխները պահելու և այն ժամանակ մեր մուսուլմանները թող տէք դառնան նրանց հողերին, նրանց կայքերին ու անասուններին:

(Ամբոխի մէջ խիստ վայրենի ուրախութեան աղաղակներ եւ շարժումներ):

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Իմացած կացէք հա... թէ հիմայ մի բան արեցինք, հօ, արեցինք, իսկ եթէ մի քիչ անց կենայ և հայերը զէնքի տէք դառան թէ չէ՝ մեզ ամենքիս բնաշինջ կանեն. մի հատ մուսուլման չի մնայ. նրանք սումքեր ունեն. որտեղ որ զցեն՝ տակն ու վրայ կանեն ամեն ինչ. — էլ տուն, էլ տեղ, էլ մարդ:

ԱՄԲՈՒԾ

Փի՛... ինչ անաստածներն է...

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հիմա ևս ձեզ մի քանի խորհուրդ պիտի տամ, որոնցով պէտք է զեկաւարուէք:

ԱՄԲՈՒԾ

Հրամայի... Հրամայի...

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Առաջին: Շիան և Սիւննին չպէտք է իրարից բաժան մնան... Շիան թող Շիա մնայ, Սիւննին էլ՝ Սիւննի... Բայց չէ որ ընդհանուր գործի առաջ մենք ամենքս էլ մուսուլմաններ ենք և միասին պիտի գործենք յանուն իսլամի:

ԱՄԲՈՒԾ

Ի հարկ է, ի հարկ է... Մէկ ենք մենք... Միասին պիտի գործենք յանուն իսլամի...

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Երկրորդ: Որտեղ որ յարձակւէք, որտեղ որ սպանութիւն անէք, որտեղ որ հայերի նախիրները քշէք կամ մտադիր լինէք մի որ և է բան անելու... մի օր, երկու օր առաջ գանգատը գանգատի ետևից տուեցէք պրիստավներին էլ, գաւառապետներին էլ, նահանգապետներին էլ, մինչև անգամ փոխարքային էլ... օր առաջ հարայ-հուրայը զցեցէք, ասացէք, որ հայերը ձեզ հանգիստ չեն տալիս, որ այդպիսով իշխանութիւնն իմանայ թէ առաջ հայերն են անկարգութեանց պատճառ եղել և մենք՝ մուսուլմաններս՝ միայն նրանց աչքն ենք հանել:

ԱՄԲՈՒԾ

(Ուրախ) Գլխներիս վրայ... Գլխներիս վրայ... Ուրախութեամբ:

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Երրորդ: Նոյնպիսի գրաւոր և բերանացի գանգատներ արէք և հայ պաշտօնեաների վերաբերմամբ: Հարիւրաւոր մարդկանցով ասաը, քան անգամ գնացէք նոյն մեծամեծների գոները, խնդրեցէք, աղաշեցէք, լաց եղէք, ոտններն ընկեք, թէկուզ նրանց զահաները տարէք, միայն թէ յաջողեցրէք, որ եղած հայ պաշտօնեաներին գուրս անեն և նրանց տեղ նշանակեն մեր թուրքերին կամ ուներին... Այնպէս էլ վարւեցէք այն ոուս պաշտօնեաների հետ, որոնք հայերի կողմը կպահեն:

ԱՄԲՈՒԾ

(Նոյնպէս) Ուժք, ուժք... Աշքներիս վրայ... Գլխներիս վրայ... էզ մեր փէշակն ա... Մենք լաւ ենք իմանում...

զՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ չորրորդ: Ինքներդ ստեղծեցէք ընդհարումների առիթներ: Կեղծեցէք, նոյն իսկ ստորացէք, եթէ հարկաւոր լինի. ոչ մի միջոցի ասաջ մի կանգնէք... միայն թէ յաջողեցրէք նպատակին հասնել: Եթէ մի տեղ՝ մի որ և է թուրք սպանեց, թէկուզ հէնց թուրքի ձեռքով, կամ մի որ և է տեղ հայից խիստ դիմագրութեան հանդիպէք, իսկոյն, ինչպէս ասեցի, աշխարհ թնդացրէք, բոլոր մուսուլմաններին ու պաշտօնեաներին ոտքի կանգնեցրէք. աջ ու ձախ, աշխարհի բոլոր ծայրերը թելեր խրեցէք՝ թէ հայերը սպանում, կողպատում են թուրքերին, կտարուում են... և այնուհետեւ գուք առանց վախենալու վրայ տուէք, վրայ տուէք հայերին ու անինայ կոտորեցէք նրանց. ոչ կին հարցրէք, ոչ մարդ, ոչ երեխայ և ոչ ծեր... Անինայ ջնջեցէք ու այնպէս սրի և

կրակի դէմ արէք նրանց, որ նրանցից մի հատը չպրծնի:
(Աւելի սպիռուած եւ հպարտութեամբ) Թող հասկանան հայերը,
որ հեշտ չէ բազմամիլիօն՝ գէնքի սովոր, մահմեղականների
հետ հանար անելը:

ԱՄԲՈՒԾ
(Վայրէնի աղաղակներով) Ուժ, ուժ... Մի հատ հայ չենք
թողնի...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ
Ես էլ լրագրներով ամեն հնար գործ կդնեմ, որ ամբողջ
աշխարհը թքի նրանց վրայ... Որ իրանումն էլ, թուրքիա-
յումն էլ ամեն, ամեն տեղ իսլամը կանգնի ու ջնջի հայե-
րին... որ ամեն տեղից էլ վերջանայ այդ անհաւատ ազգը...
որ հայ անունը պատմութեան մէջ էլ չմնայ:

ԱՄԲՈՒԾ
(Նոյնպէս) Թող չմնայ... Պէտք է չմնայ... Տեսէք ինչ
ենք անելու մենք...

ՃԵՍԻԼ ԹԵ

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

(Վրդոված առաջ է գոլիս Սէյիդ աղան, բայց յիս է հրում
մի լաւ հագնեած Շուրբից, որը բազմութիւնը մղելով, իկել, կանգնել
էր Շուրբիւր աղայի տեղը):

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ
Եյ բազմութիւն, այ ժողովականներ... Ես էլ եմ ուզում
խօսք ասել... Լսեցէք ինձ... Ես էլ եմ խօսում... (Լոռմիւն)
Ես ուզում եմ ասել, օրինակ, որ ես շատ տեղեր եմ մասն
եկել... Ես ամիսներով ու տարիներով, օրինակ, ձիռ վրից
չեմ վեր եկել... Ես գնացել, հասել եմ Իրան, Ֆարախստան,
Սէյխստան, Աֆղանխստան, Բէլուջիստան, օրինակ, շատ եր-
կրներ...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ
(Կամաց) Ախունդ աղա, սա ով է:
ԱԽՈՒՆԴ
(Նոյնպէս) Չեմ իմանում, վալլա...

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ
Են երկրներից էկել գնացել եմ Մօսկով, Պետրովորդ,
օրինակ, սադ սահ երկրները...

ՃՈՒՔԻՒՐ ԱՂԱ
Ախունդ աղա, ի սէր Ալահի, հեռացրու դրան:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ
Ես մեր բանը կփացնի. գեշը քաշիր:

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ
Հիմի ես ուզում եմ ասել, օրինակ...

ԱԽՈՒՆԴ

(Մօտնալով նրան՝ փեշը բայում է եւ նա իսկոյն կտրելով
խօսքը նայում է ցած՝ Ախունդին) Հեռացիր. էդ քու տեղը չի:
(Ամրոխի առաջի կարգերում ծիծաղ):

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ
(Արագայնելով ասելիքը) Հմի ես ուզում եմ ասել, օրինակ,
որ ամիսներով չօլերումն եմ քնելը սարերի գոշերին ու ծե-
րերին եմ քնել... Քեալբալայ եմ մենակ գնացել ու եկել...

(Շուրբիւր աղան վրովիր բանում է անհամբերութիւնից, իսկ
Ախունդը կրկին մատնում է եւ խիստ կերպով ասում).
ԱԽՈՒՆԴ

Բաւական է. հեռացիր:

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ
(Մի ձեռքով յիտ պահելով Ախունդին) Օրինակ, ուզում եմ
ասել, որ պէտք է կոտորենք հայերին...

ԱՄԲՈՒԾ

Պէտք է կոտորենք... Պէտք է կոտորենք...

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Պէտք է ջնջենք ամենքին, որ մի հատ հայ չմնայ:

ԱՄԲՈՒԾ

Պէտք է ջնջենք... Սալ կջնջենք...

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Ժողովականներ. ես իմ ասելիքը պրծայ: (Ախունդին)
Ի՞նչ էիր ուզում, օրինակ, ինձանից:

ԱԽՈՒՆԴ

Ի՞նչ էիր յիմար յիմար գուրս տալիս:

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Բա որ զու ու նա (ցոյց տալով Շուրբիւր աղային) Էրկու-
սհաթ դուս էկիք տալիս, էն ոչի՞նչ... Տեսմը, մի էրկու խօսքով
ինչպէս սպառեցրի ամենքին: (Մտնում է հպարտութեամբ ամբո-
խի մէջ):

ՍԵՑԻ ԱՂԱ

(Խօսում է խիստ սպիռութեամբ, շեշտելով եւ զրդուած) Ճշմա-
րիտ մուսուլմաններ... Այս ինչեր են կատարում այստեղ...
Այս ի՞նչ կատարածների մասին է խօսքը... Ե՞րբ է հայը մտա-
ծել մեր վրայ յարձակուելու... Ի՞նչո՞ւ ենք մենք նրանց բնա-
ջնջ ուզում անել, կամ կարողականներ արգեօք... Կամ, վեր-
ջապէս, կարող են արգեօք նրանք մեզ նոյնն անել... Երբէք:
Մատ էք Ես չեմ հաւատում դրան:

ԱՄԲՈԽԻՑ ՄԻ ԵՐԿՈՒՄԸԸ
Ի հարկէ... Շատ զբուստ ա ասում ՍԵՐԻԴ աղան... Շատ
ուղիղ է ասում...

ԱՄԲՈԽԻՑ
ԻՆՉԻ չէ... ԻՆՉԻ չէ... ՄԷՐԻԻՆ սաղ չենք թողնիլ...

Ես չեմ հաւատում: ՄԵՆՔ միայն մեր տունն ենք ուզում
քանդել: Մեր խեղճ մուսուլմանները ոտնատակ կերթան:
Դա վասակար է մեղ ամեն կողմից: Դա դէմ է նոյն իսկ մեր
զուրանին: Իսկ ի՞նչ է յիշեցնում մեղ մեր պատմութիւնը:
Մեր Զինգիս խանները, մեր Խանկթամուրները, նոյն իսկ Շա-
հաբբաններն ու Աղա Մամադ խանները, գեռ շատ շատերն էր,
նոյնպէս ուզում էին հայերին ջնջել, բայց յաջողեցրին ար-
դեօք:

ԱՄԲՈԽԻՑ
Հէնց էդ է որ չնջեցին ու մեր տունը քանդեցին է:
Սէթիդ ԱՂԱ
Այս. եթէ կարողանային՝ կանէին: (Արհ սմարհ սնքով) Հի-
մա գուք էք ուզում այդ անել:

ԱՄԲՈԽԻՑ
ԻՆՉԻ չենք անիլ... ԻՆՉԻ չպէտք ա անենք...

Սէթիդ ԱՂԱ
Սխալում էք: Օրինակներն աչքներիս առաջն են: Տե-
սաք հայերը ինչ իանեցին մեր զումիը թէ Բագում և թէ
Երևանում, և եթէ զօրքը չհանէր, նրանք ի՞նչ օրը կցցէին
մեղ:

ԱՄԲՈԽԻՑ
Ոչինչ չէին անիլ... Ոչինչ չէին կարող անիլ...
Սէթիդ ԱՂԱ

Դուք խօսքով էք ասում, իսկ ես փաստերով: Բայց քա-
նի որ գուք ինձ զիմագրում էք, տեսնենք թէ ինչ է ասում
մեղ մեր սուրբ Ղուրանը: Այդ Ախունդ և Շուրիւր աղանները
լաւ պիտի իմանան: (Աւելի բարձր ձայնով) Եւ սկիւրւած Ղուրա-
նի խօսքով! Ղուրանն ասում է. «Ով մարդիկ, մի թափէք
միմեանց արիւնը չէ որ գուք չէք կարող ստեղծել ամենա-
չնչին մի էակ»... Յետոյ. «Մարդու ստեղծւած է իմ կերպա-
րանքով, իսկ նրա վրա ձեռք բարձրացնելը՝ նշանակում է
ինձ վիրաւորելը»... Յետոյ ասում է. «Ամեն մեղք կարող է
ներւել անկեղծ զղջմամբ, իսկ մարդասպանութիւնը՝ եր-
բէք»: Յետոյ էլ ասում է. «Մարդասպանի բաժինը՝ յաւի-
տենական գծոխըն է»: (Աւելի բարձր ձայնով) «Արգելում եմ
ձեզ, ասում է, մեր սուրբ Ղուրանի 85-րդ սուրայի 2-րդ գըլ-
խում, թշնամութիւն անել քրիստոնեանների դէմ, վիրաւորել

Ն վասել նրանց կեանքին», իսկ ժողովուրդների մէջ թշնա-
մութիւն սերմաննելը, նոյն զուրանով, մարդասպանութիւնից
աւելի վատ է:

ԱՄԲՈԽԻՑ ՄԻ ԵՐԿՈՒՄԸԸ

Ճիշտ է... Ճշմարիտ է...

Սէթիդ ԱՂԱ

Ի՞նչ իրաւունքով ուրեմն դուք ուզում էք ներկել ձեր
ձեռքերը հայերի արիւնով... Ո՞վ է տալիս ձեզ այդ իրաւուն-
քը: Ալլահը—չէ. Մուհամմէդը—չէ. մեր կրօնը—չէ. մեր
Ղուրանը—տեսաք որ չէ: Ի՞նչ իրաւունքով էք ուզում ձեռք
բարձրացնել այն մարդկանց վրայ, որոնց հետ մենք կապ-
ւած ենք ամեն, ամեն բանով. որոնք մասնակից են եղել
միշտ մեր վշտերին ու ուրախութիւններին, մեր քաղցր ու
դառն օրերին: Մենք ապրում ենք նրանցով, նրանք էլ մեզ-
նով: Խղճացէք, այ ուղղափառ մուսուլմաններ, ձեզ, ձեր
ընտանիքներին... Իսկ եթէ մենք նրանց կլոտորենք, նրանք
էլ գրալան մտնող ազգ չեն. նրանք մեղ տասն անգամ աւե-
լու կվասեն:

ԱՄԲՈԽԻՑ

Զեն կարայ... Զեն կարայ... Զէրիք է... Զէրիք է...

ԱՄԲՈԽԻՑ ՄԻ ԵՐԿՈՒՄԸԸ

Սէթիդ աղան դրուստ ա ասում... Շատ ուղիղ է ասում...
(Ամբոխի մէջ իրաւունքումն է նկատում: Թիր և դիմ կար-
ծիրներ ու շարժումներ):

Սէթիդ ԱՂԱ

Ե՞րբ է հայը զսով խել մեր ձեռքից մեր հոգերը, մեր
իրաւունքները, մեր ծիսակատարութիւնները: Սնւտ է: Կամ
ինչու են ասում թէ այս երկիրը միայն մերն է եղել... Նա-
յեցէք նրանց քաղաքների, տաճարների, վանքերի, արքու-
նիքների աւերակներին, որ սփռուած են համարեա ամբողջ
անգրկովկասում, ու շինաւծ են տասնեակ գարերով մեզնից
առաջ և կանգուն են մինչև օրս էլ, այն ժամանակ կհամոզ-
ւէք, որ այս երկիրը մեզնից առաջ, հէնց էն զլիից, հայե-
րինն է եղել և հայերն էլ տիրել են... Իսկ եթէ նրանք փիս
խօսք են ասում մեր նոր մեռածների համար, չէ որ մենք
էլ մուռառ ենք համարում նրանց մեծին ու փոքրին և գէն
ենք ածում մեր ամաններից այն ամենը, ինչին որ կաշում
է նրանց մատն անգամ: Ինչու են ուրեմն զանազան խօսքե-
րով, շփոթեցնում ձեր խաղաղ մտքերը:

ԱՄԲՈԽԻՑ

(Գոռալով) Թող հեռանայ Սէյիզը... Սէյիզը թող հեռա-
նայ... էլ չենք ուզում լսել Սէյիզին...

Սէթիդ ԱՂԱ

Սպասեցէք վիրջացնեմ..., Մի երկու խօսք էլ...

ԱՄԲՈՒՅՔ

Զենք ուզում... Զենք ուզում... Հեռացիր...

ՍԵՅԻԴ ԱՂԱ

Լաւ: Վերջին խօսք միայն... Միթէ իշխանութիւն չկայ
այս երկրում, որ ձեր առաջն առնի... Միթէ...

(Ամբոխի միջից մի քանիսը մօտենում են եւ ոյժով դադարեց-
նում ու յետ են մղում Սէյիդին):

ԱՄԲՈՒՅՔ

Հերէք է... Զենք ուզում լսել Սէյիդին... Հեռացրէք
Սէյիդին: Զենք ուզում... (Սէյիդի հեռանալուց յետոյ) Էղպէս,
այ, էղպէս... Մատուհ ա եկել...

(Մինարէթի բարձրութիւնից հեճաւմ է կեսօրեալ ազանը *):

«Ալլահ հաքապար...

«Աշհագու ան լա իլլահա իլլալլահ...

«Աշհագու աննա Մհամմադ դան բասուլ ուլլահ...

«Հայյեա ալասաւլահ...

«Հայյեա ալալ ֆալահ...

«Հայյեա ալա խէյրուլ ամալ...

«Ալլահ հաքապար...

(Ազանն սկսելուն պէս, բեմում բոլոր հղածները, որոնք ժա-
մացոյներ ունեն, ուզում են ազանի հիտ. շատերն էլ լարում են:

Ազանը երգում է ամբողջութեամբ եւ անկախ բեմի վրայ կա-
տարւած գործողութիւնից:

Առաջին տորբ երգում է չորս անգամ, իսկ հետեւեալ տողերը՝
երկու-երկու անգամ, ամեն անգամից յետոյ փոքրիկ ընդմիջումներ):

ՄԻԹՋԱՆ ԻՒՍՈՒՓ

Է՛յ, մուսուլմաններ, լսեցէք ինձ: (Առութիւն) Սէյիդի
խօսքերը ճէչ: Շուքիւր աղան շատ լաւ նկարագրեց ամեն
բան: Մենք պէտք է մեր անելիքն անենք: Ես ուզում եմ ա-
ւելացնեմ միայն, որ իշխանութիւնից, որի մասին ուզում էր
ասել Սէյիդը, մենք վախենալու ոչինչ չունենք: Իշխանու-
թիւնն էլ է զգաւծ հայերից. նա էլ է ուզում, որ մենք
դրանց հախիցը գանք, որովհետեւ հայերն սկսել են ուռւս մե-
ծամեծներին ու չինովնիկներին սպանուել ու վիրաւորել և
հիմայ ուզում են նոյն իսկ սարն դուրս անել կովկասից, որ

* Ազանը միշտ և ամենայն օր երգում է արաբերէն լեզով ամբողջ
մուսուլման աշխարհի մզկիթների մինարաններից և օրը երեք անգամ—առա-
ւտեան արշալոյսին, ճիշտ կէսօրին և երեկոյեան արեգական մայր մտնե-
լուց յետոյ:

Ազանի խօսքերի թարգմանութիւնը տալիս է Սէյիդ աղան իւր զեր-
չին դիմումի մէջ:

Ազանի ձայնագրած եղանակը կցւած է զբքիս վերջում:

իրենք տիրանան... Ես ուզում եմ տակ, որ իշխանութիւնը
մեր անելիքի դէմ ոչինչ չունի, որովհետեւ Բագւի կոտորած-
ների ժամանակ՝ սկզբում չխառնուեց և թողեց մի լաւ ջարդ
տանք հայերին... Այսպէս էլ արել է երեանումը... Եւ մենք
հէնց զօրքի առաջ անխնայ կոտորում էինք, թալանում էինք
նրանց աներն ու խանութիւնները... աճագին տակառներով նաև թ
էինք տանում ու աներն ածելով՝ կրակ էինք տալիս... Բայց
երբ երրորդ օրը, հայերն սկսեցին մեր առաջն առնել, իս-
կոյն գորքը հասաւ խաղաղեցնելու և դրանով մեզ օգնեց...
Բալախանայից հայերին չթողեցին քաղաք մտնել և բոլորին
խուզարկեցին ու զէնքերն առան, այն ինչ մեր մարգիկը գիւ-
ղերից եկան մեզ օգնութեան՝ առանց մի որ և է արգելքի:

ՄԻ ՄԵԾ ԱՍՏԻճԱՆԸ ԱՄԲ

(Ուաշին կարգից) Տօ գէ ուզիղն ասա, էլի՛: Հէնց ինքը,
իշխանութիւնը մեզ խաղի մէջ գցեց, էլի՛: Ճշմարիտն ասա,
թող ամենքն էլ իմանան, էլի՛:

ՄԻԹՋԱՆ ԻՒՍՈՒՓ

Սյու: Ռւրեմն արեցէք, ինչպէս ասաց Շուքիւր աղան:
իսկ մենք էլ, բոլոր ծառայողներս, խաներս, բէկերս, աղա-
լարներս ամեն կերպ կօգնենք ձեզ, մեր ամենին նպատակին
հասնելու համար:

ԽԱՆԵՐ, Բէկեր, Ազանը ներ են ԱՅԼՆ
ի հարկ է, ի հարկ է... աչքներին վրայ... Մենք միշտ
պատրաստ ենք:

ՄԻԹՋԱՆ ԻՒՍՈՒՓ

(Գրգուած զոռում է իր տեղից, զառնալով բաղմութեանը) Եթէ
դուք չէք լսում ինձ, ով մոլորհալներ, դուք պարտական էք—
անշուշան հպատակեւ ազանի խօսքերին: Դուք լսում էք—
ահա նա հնչում է մինարէթից: Նա ասում է.

«ՄԻԵ է Ասուած...

«Խոստովանում եմ, որ բացի Աստծուց չկայ այլ

Ասուած...

«Խոստովանում եմ, որ Մհամմադը Աստծու մար-
գարէն է...

«Հաւաքւեցէք աղօթքի...

«Հեռացրէք չար ճանապարհներից...

«Կատարեցէք Աստծածաճոյ գործեր...

«Ասուած միծ է...

«Զկայ Ասուած, բացի Աստծուց...

Ահա ինչ է յիշեցնում ձեզ օրը երեք անգամ այս ազանը:
իսկ դժուք ինչ բանի վրայ էք: Սուկացէք, մուսուլմաններ:
Հետեւցէք ազանին: Թողթափեցէք ձեզնից չար, ազգակործան
մտքերը, Հետեւցէք ազանին:

(Բազմութեան մէջ խիստ իրարանցումն է: Մի քանիսին ծհծելի դուրս են անում մզկիթի բակից):

ՄիթջԱ ԻԽՍՈՒԹ

(Կատաղած) Դէն գցէք ձեր մտքերից այսպիսի Սէյիդների խօսքերը: Դուրս հանեցէք այդ տեսակ մարդկանց ձեր միջից: Դրանք միայն պղտորում են մեր ազատ միտքը, մեր ազատ կամքը, մեր այս սուրբ գործը: Դրանք դաւաճանում են իսլամին:

ԱՄԲՈԽԸ

(Զայրացմամբ) Դուրս արէք Սէյիդին... Նա դաւաճան է, դաւաճան է... Դուրս արէք...

(Մի քանի մարդիկ, որոնց մէջն են եւ Թաղի եւ Ռւտուք, առաջ են զալիս եւ Սէյիդին հրելով դուրս են անում մզկիթի բակից):

ՋՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Էյ մուսուլմաններ... Հիմայ տեսնում եմ, որ ձեր մէջ կեանք կայ, կամք կայ, ոյժ կայ, սիրտ կայ... Այսպիսի վճռողականութեամբ սարեր կարող էք շուռ տալ, ծովիք շարժել իրենց տեղերից: Ես տեսնում եմ, որ իսլամի արշարոյսը ծագելու վերայ է. Կարող կլինենք մենք՝ նոյն իսկ արեգակի ծագելուն հասնել... Այն ժամանակ արեգակը կլուսաւորի, կջերմացնի, կլինանորոգի ամբողջ իսլամական աշխարհը: Քաջ եղէք: Ամեն մի մուսուլման, որ կնկնի այս սուրբ պատերազմում, կնշանակի ոսկէ տախտակի վրայ: Զոհեր պէտք են: Ոչ մի մեծ գործ առանց զոհերի չի լինի: Զոհերը միայն պէտք է իշխող դարձնեն իսլամին, նոյն իսկ ամբողջ աշխարհի վրայ: Հասել է ժամանակը և մեզանով պիտի սկսուի: Մրբան բախտաւորութիւն մեզ համար: Մուսուլմանն արիւնից երեք չի վախեցել: Իմացէք, որ իսլամից դուրս մեզ փրկութիւն չկայ:

ԱՄԲՈԽԸ

(Ցնծութեամբ) Մէնք պատրաստ ենք... իսլամից դուրս մեզ փրկութիւն չկայ... Ամենքս մատաղ կլինենք իսլամի համար:

ՋՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ապացուցէք ուրեմն, որ մուսուլմանի թասիրը իսլամի պարծանքն է:

ԱՄԲՈԽԸ

(Համակրութեան վայրենի աղաղակներ, որոնց մեջ յաւում են նաև) Մեր թասիրը մեր պարծանքն է... Կրակն ու սուրբ կլինի մեր հանապարհ բաց անողը...

ՋՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Մահ նրան, ով իսլամի դէմ է:

ԱՄԵՆՔԸ
Մահ նրան... Մահ... Մահ նրան, ով իսլամի դէմ է... Մահ նրան...

(Բիրում են տաննեալիներով կանաչ գրօշակներ: Շատերի ծայրին Ալիի փանջերն են, իսկ շատերին կիսալուսիններ):

ԱԽՈՒՆԴ

(Բարձրանում է խցերի առաջի սանդուխների վրայ): Ո՞վ հաւատարիմ մուսուլմաններ... Երգուեցէք, որ այստեղ՝ ամեն մի խօսք, ինչ որ ասեց, մուսուլմանից դուրս ոչ ոք չի իմանայ:

ԱՄԵՆՔԸ

Երգուում ենք... Երգուում ենք...

ԱԽՈՒՆԴ

Ով որ մի ծպտուն հանի այս ժողովի մասին օտարների առաջ, նամանաւանդ անհաւատ հայերի, նա շէյթան է և գժոխիքի զաւակ:

ԱՄԵՆՔԸ

Նա շէյթան է և գժոխիքի զաւակ:

ԱԽՈՒՆԴ

Ով որ իմանայ թէ մի որ և է մուսուլման բերնից դուրս է հանել մի խօսք, նրա պարտքն է չնջել այդ մուսուլմանին աշխարհի երեսից:

ԱՄԵՆՔԸ

Նա կջնջուի, նա կջնջուի... կջնջուի...

ԱԽՈՒՆԴ

Աստած մի արասցէ որ մի որ և է մուսուլման դաւաճանի մեր այս երգումներին:

ԱՄԵՆՔԸ

Աստած մի արասցէ... Աստած մի արասցէ...

ԱԽՈՒՆԴ

Այդ տեսակ մուսուլմանը թող խորասակւի գժողքի խորքերը և հուր յաւիտենական տապակուի կպրէ կարասի մէջ. ամէն:

ԱՄԵՆՔԸ

Ամէն... Ամէն...

ԱԽՈՒՆԴ

Երգուեցէք այս մէշիդով. Երգուեցէք մեր ո. Ղուրանով:
ԱՄԵՆՔԸ

Երգուում ենք... Երգուում ենք...

ԱԽՈՒՆԴ

Հիմայ կրաժանուեն շատերիդ գրօշակներ և հազարաւոր թղթեր. ամեն տեղ տարածելու համար: Այդ թղթերում

զբւած է, ինչ որ պէտք է անէք և շատ մտնրամասն: Դէ,
ուրեմն, թող առաջ գտն պատգամաւորները, կամուորները,
սէլիդները, գարվիշները. մի խօսքով նրանք, որոնք պիտի
մտնեն մուսուլման ժողովրդի մէջ՝ քարոզեն և տարածեն
ինչ որ այստեղ ասեց, ինչ որ թղթերում դրւած է և առնեն
մի մի հատ սրբազն դրօշակներ:

(Բաժանում են շատիրին դրօշակներ և ամենքին էլ միծ քանա-
կութեամբ թղթեր: Մուրթուզալի բէկն էլ է վերցնում):

Մէկը

Փէ՛ք... ինձ էլ տուէք: Ինձ ի՞նչպէս էք իմանում: Մե-
նակ ես բաւական եմ մի քանի մահալների համար: Ի՞նչ է,
շորերս հին են, համ... ինձ բանի տեղ չէք գնում, համ...
զմիւթիւր Աղը

Տուեցէք զբան էլ, դա արժանաւորակոյններից մէկն է
երկում:
ԱԽՈՒՆԴ

(Կրկին բարձրանալով) Վերջին խօսք էլ, էյ մուսուլման-
ներ: Ահա, տեսնում էք ձեռքիս այս դրօշակը:
ԱՄԵՆՔԸ

Տեսնում ենք... Տեսնում ենք...
ԱԽՈՒՆԴ

Ահա այսպէս կհանէք այս սրբազն նշանները... (Հա-
նում է դրօշակի ծայրից Ալի փանջը (ձեռքի ծիւր). իսկ ում դրօ-
շակի վրայ կիսալուսիննէ, նա պէտք է հանի այդ կիսալու-
սինը... դրեցէք, այսպէս, ձեր ծոցը... ձեր սրտի վրայ...
ԱՄԵՆՔԸ

Շատ լաւ... Շատ բարի... Շատ լաւ...
ԱԽՈՒՆԴ


Յետոյ կհանէք այս կանաչ շորը... այսպէս... իր փայ-
տից և ծալելով այսպէս... կկապէք ձեր մէջքին՝ իբրև գոտի-
ներ... իսկ այս փայտը՝ կլինի ձեր գաւազանը: Այսպէս կեր-
թաք ամեն տեղ: Հէսց որ մուսուլմանների հողերը կմտնէք,
իսկոյն շինեցէք ձեր դրօշակները առաջւան պէս և՝ ձեռքե-
րիդ բարձր բռնած՝ մտէք մուսուլմանների մէջ. բաժանելով
ու տարածելով այդ թղթերը՝ քարոզեցէք, քարոզեցէք մին-
չև ձեր վերջին շունչը և կխոնարհուեն ձեր առաջ բոլոր մու-
սուլմանները. եա Ա՛լի:

ԱՄԵՆՔԸ

Եա Ա՛լի... (Չեռներին դրօշակները բարձր բռնելով) Եա
Ա՛լի... Եա Հազրաթ Աբբաս... Եա Մուրթուզ Ա՛լի...
↔ ♪ ♫ ♩ ♪ ♫ ♩ ↔



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ:



Ա Ն Ձ Ի Ն Ք

ԴԱՍՊԱՐՄԱԿԻ
ՋԱՀԲԱՇ
ԿՈՍՏԱՆԴ, սրա որդին
ԱԶԻՑ
ՄԱՐԿՈՍ
ԳՅՈՒԺԻՄ
ՎԱՆԵՍ
ՄԱՐԻՅԱ
ՄԱՆՈՒԿ
ՄԵԿԸ¹
ՄԻՒԾԸ²
ԵՐՐՈՐԴԸ³
ՀԱՎԻԻ
ՀԵՐԻՔՆԱՉ, Ջահբաղի կինը
ԼՈՒՍԻԿ, սրանց աղջիկը
ՆԱԶԱՆԻ ՏԱՏ
ՄԱԼՅԻ
ԱԼՄԱՍՏ ՔԻՔԻՐ
ՄԻ ԿԻՆ
ՄԻՒՄ ԿԻՆ
ՄԻ ԱՂՋԻԿ
ՄԻՒՄ ԱՂՋԻԿ

Քիւղականներ, կանայք, աղջկունք եւ երեխաններ:

ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՕՐԸ:

Դէպքի տեղը, — Շարուրի և Դարալազեաղի սահմաններում գտնուած զիւղերից մէկը:

II ԳԻՒՂԸ



Եսարանը ներկայացնում է հայ գիւղերից մեկը:
Նախաբենք կազմում է մի փոքրիկ երա-
պարակ, աշ եւ ձախ կողմերը տանում են դե-
պի գիւղական փաղոցներ: Անմիջապէս յետոյ՝
ձգւած է բեմի ամբողջ լայնութեամբ մի պաս,
որը մեջտեղից բաւական տարածութեամբ՝ փլա-
տակւած է, իսկ կողերը կանգնան են՝ ամեն
կողմից 2—6 առշին տարածութեամբ (համեմատած բեմի լայ-
նութեանը), որոնց շարունակութիւնները ծածկում են ծառոս
կուլիսների յետեւում: Պատի փլամֆից երեւում է Շահրապի
տան առաջ պարտեզը, որից յետոյ նոյն պարտիզի միւս պատն
է՝ իւր փողոցի գլուխ: Ազ կողմում երեւում է նրա տան եւ
այլանի մի մասը: Երկրորդ պատից յետոյ, որ ձգւած է գուգբն-
րաց առաջինի նես, փողոց է, ապա գիւղական անկանոն
դասաւորութեամբ ժիմած տներ, իսկ յետոյ գտնազան բարձր
ու ցած կտուրներ եւ տեղ տեղ ծառերի կատարներ: աջ կող-
մում երեւում է գիւղական եկեղեցու մի մասը: Գիւղից յետոյ՝
դաշտեր, իսկ հորիզոնում կապուտակ լեռների մի շղթայ, աջ
կողմում երեւում է Մասիսը:

Պարագոյը բարձրանարուն պէս՝ հնչում են եկեղեցւոյ պատարագի
գերջին զանգակները: Հնչման ձայնագրած եղանակը № 2, կցւած է գրքին
գերջում:

ՏԵՍԻԼ Ա

ՍԱՐԻԲԵԿ ԵՒ ԼՈՒՍԻԿ
ՍԱՐԻԲԵԿ

(Գալիս է աջ կողմից եւ տեսնում է Լուսիկին ձախ կողմի պա-
տառակը ավելելիս՝ մէջքը իրեն գարձրած: Զգուշութեամբ մօտենալով
լուսիկ..)

լՈՒՍԻԿ
(Յանկարծ յիտ նայելով, ժպում է եւ կարմրում) Վայ, վա-
խցայ... (Շփոթւած շարունակում է իւր զորձը):

ՍԱՐԻԲԵԿ
(Կոտրւած) Ի՞նչնից վախում ես, հա՞:

ԼՈՒՍԻԿ
Ի՞նչո՞ւ եմ վախում... Ամա գէ... (Շփոթւած կրկին տւելում է):

ՍԱՐԻԲԵԿ
Ժամից ե՞րբ դուրս էկար, որ չտեսայ:
ԼՈՒՍԻԿ

Մէրս ու հարսս որ ժամ էկան, ինձ տուն զրկեցին, որ
տուն ու մունք սրբեմ: Մէր տանն էսօր ջան զիւլում կայ:

ՍԱՐԻԲԵԿ
Բարով խէրով լինի... (Սիջոց: Առափկը շարունակում է
աւելիր) Լուսիկ ջան, ախր ես գնում եմ...

ԼՈՒՍԻԿ
(Յանկարծ դադարեցնելով իւր զորձը) Ե՞րբ:

ՍԱՐԻԲԵԿ
Էգուց գեռ լուսը չծագած:

ԼՈՒՍԻԿ
Ո՞ւր:

ՍԱՐԻԲԵԿ
Երկան:

ԼՈՒՍԻԿ
(Կոտրւած) Ի՞նչի՞ էգպէս շուտ:

ՍԱՐԻԲԵԿ
Իէ էս երեք շաբաթ ա, ինչ երկանից դուրս եմ եկել.
ինձ երկու շարթով ուղարկեցին երկանու գաւառի գիւղերը.
մի շաբաթ էլ ինձ ժամանակ աւին, որ գամ մօրս տեսնեմ:
Էգուց չէ էլօր՝ պէտք ա երկան լինեմ. թէ չէ կազմակեր-
պութիւնն ինձ տուգանքի տակ կցցի:

ԼՈՒՍԻԿ
Սպասիր. դու ծառայում չես:

ՍԱՐԻԲԵԿ
Չէ. թողի. կազմակերպութիւնի մէջ զինւոր եմ զրուել:

ԼՈՒՍԻԿ
Ծառայութիւնդ լաւ չէր:

ՍԱՐԻԲԵԿ
Ի՞նչի՞ չէ. շատ լաւ էր: Ամմա ամեն մարդ պարտական
ա առաջ իր ազգին ծառայի: Առաջ ոռնիկս 18 մանէթ էր.

հացն էլ, տունն էլ,—ամեն բան. ամմա հիմի՞ հէնց 20 մա-
նէթ ա որ կայ,

ԼՈՒՍԻԿ

Վայ. ի՞նչի՞ որ:

ՍԱՐԻԲԵԿ

Բաս: Հիմի հայ ու թուրք իրար են զիուղում.—Բագու,
Երկան,—ամեն տեղ: Պէտք ա հասնենք ամեն տեղ ու մեր
հայ քրիստոնեաներին օգնութիւն անենք:

ԼՈՒՍԻԿ

Ի՞նչ ասել կուղի: Բաս առաջ ի՞նչ ծառայութիւն ունէիր:

ՍԱՐԻԲԵԿ

Առաջ՝ խոհարարչէի: Յետոյ գնացի սալլաթ: Սալլա-
թութիւնից պրծայչուէլի էկայ խոհարարութիւն արի:

ԼՈՒՍԻԿ

Խոհարարն ի՞նչ ա:

ՍԱՐԻԲԵԿ

Մեծամեծների տանը կերակուր էփոլ:

ԼՈՒՍԻԿ

Աշպաղ էլլու:

ՍԱՐԻԲԵԿ

Աշպաղը որն ա. խոհարար, խոհարար: Աշպաղը մենակ
փլաւ, տոլմայ, քուֆթայ, բողբաշ ա էփում, իսկ ես տեսակ
տեսակ սուփեր, կատէաներ, սուսներ, բորշեր, ըիշտէկոներ,
ժարկոներ, մարօժնա, բլումանժա:—Ի՞նչ ասես:

ԼՈՒՍԻԿ

Եղ ի՞նչ կերակրներ են:

ՍԱՐԻԲԵԿ

Հըմ... Ֆրանցուղի... Այ, որ ինձ առնես, էն վախուր
կիմանաս:

ԼՈՒՍԻԿ

Հիմի զու մօրիցս լաւ քուֆթայ, քեալագէօշ կեփես, հա՞:

ՍԱՐԻԲԵԿ

Ի՞նչ քուֆթայ-բողբաշ, ի՞նչ տօլմայ-փլաւ, ի՞նչ քեա-
լագէօշ... էղ մուժիկների կերակուր ա, լուսիկ ջան. Երկան-
նու էն մեծամեծները—սաները, նենց հայերից շատերն էլ՝
իսկի էդ չեն ուտում: Իմ եփած կերակուրները պրօկորներն
են ուտում, նաչալնիկները, պրիցմէստրը, զես գուրելնատն
էլ... Բաս պլօմբիրը ես ինչպէս եմ պատրաստում, պլօմբի-
րը.—Պնտ պէտք ա ուտէիր:

ԼՈՒՍԻԿ

Ի՞նչ բան ա որ:

ՍԱՐԻԲԵԿ

Պլումբիրը մի էնպէս բան ա որ, որ զրանից լաւ բան
աշխարքում չկայ: Ամա չէ. զրանից լաւը, զրանից քաղցրը,
դրանից սիրո հովացնողը—մենակ դու ես, Լուսիկ ջան:

ԼՈՒՍԻԿ

(Յանկարծ կարմրելով եւ ամօթով) Վա: Ի՞նչ ես ասում:

ՍԱՐԻԲԵԿ

(Գրաւելով գէպի ինքն) Ասածու մի անունը վկայ: Ես քեզ
չեմ փոխիլ սաղ աշխարքի կերակրների հետ: Դու մի ինձ
առ ու տես: Տես ինչ զայֆայ ու շակալադ պիտի խմայնեմ
քեզ, ինչ կերակրներ պիտի ուտեցնեմ քեզ, ինչ զառ ու զառ
բար պիտի հազցնեմ քեզ... Տես ինչպէս իմ մատներս մի-մի
ճրագ շինում ու քու առաջին պահում, որ քու էս նախշուն,
զարաֆիլի նման աչքերիդ, քու էս վարդ վարդ թշերիդ, դէմ-
քիդ ու շնորքիդ վրայ՝ ողջ աշխարքը պէլացած մնայ, քար
կորի:

ԼՈՒՍԻԿ

Բա որ էպակս ա, էլ ուր ես ինձ թողնում ու գնում:

ՍԱՐԻԲԵԿ

Ա,իր չի լինի, ջէյրանս, ասեցի որ ամեն զինւոր պար-
տական ա առաջ իր ազգին ծառայի, հայ քրիստոնեաներին
փորձանքից աղատի ու, յետոյ...

ԼՈՒՍԻԿ

Էդ շատ կքաշի:

ՍԱՐԻԲԵԿ

Ի՞նչ ասեմ—մի քանի ամիս կքաշի. ով գիտի տարի էլ
քաշի. մինչև որ էս թուրք ու հայի թշնամութիւնը վերջանայ:

ԼՈՒՍԻԿ

(Լացի ձեւով) Բա ես էդքան-ի՞նչպէս մնամ. սիրոս կճա-
քի առանցի քեզ:

ՍԱՐԻԲԵԿ

Բա ես առանցի քեզ կարամ. բայց ի՞նչ արած. Այ,
Բագու՝ էն անօրէնները չորս-չինդ հարիւր հայ սրի քաշեցին
ու էրեցին, երեան՝ հիթսուն-վաթսուն հայ մորթոտեցին...
Հմի էլ Նախչեանի հմար են ասում... Բա զրանց արինը
գուլը պիտի զնայ... Այ, հմի մենք էլ նրա համար ենք, որ
թուրքերի առաջն առնենք, մենք էլ նրանց հախիցը գանք,
որ բանը շատ չմեծանայ. թէ չէ կոտորածն ամեն տեղ կ'ընկնի
ու հայ քրիստոնեան ձեռաց կերթայ:

ԼՈՒՍԻԿ

Դէ որ էպակս ա, Սարիբեկ ջան, տաս տարի էլ կմնամ
ու քեզ կսղասեմ: Գնա, Աստած քեզ հետ: Գնա մեր հայ

Քրիստոնեաներին օգնական եղիր: Բայց իմացիր, Սարիբեկ,
որ ամեն աեղ էլ ես մտքով քեզ հետ եմ. թէ քնած լինես,
թէ զարթուն, թէ նեղ օրի լինես, թէ լին, ամեն ժա-
մանակ միտքս միշտ քեզ հետ կլինի:

ՍԱՐԻԲԵԿ

(Ոգեւորւած) Է՞նմ, Լուսիկ ջան. դու ինձ մի նոր մարդ
շինեցիր, Աստածը վկայ ա, դու ինձ ասլան դարձրիր. Մա-
սիս սարի նման՝ դու իմ եակին կանգնեցիր: Էս սուրբ Համ-
բարձումի օրը վկայ՝ քու անունը պէտք ա լինի իմ սրբու-
թիւնը, իմ մեռունը, իմ աւետարանը, իմ խաչը. սրանից գէ-
նը արար աշխարքը ինձ համար հէջ. քու անունը պէտք ա
տամ ու ընկնեմ ջրի ու կրակի մէջ, հազար հազար գնդակ-
ների առաջ: Քու մի անունը ինձ կփրկի ամեն փորձանքից.
դու իմ ազատարար հրեշտակը կլինես, Լուսիկ ջան... Դու իմ...
չերկնաղի ձայնը.—Լուսիկ, Լուսիկ... Վա, ուտեղ ես...

ԼՈՒՍԻԿ

(Վեր թռչելով) Վայ, վայ, ժամը դուրս ա էկել: (Գաղ-
տուկ նայելով դէպի իրենց պարտէզը, ուր վիտում են կանայք իւ
աղջկունք ամեն հասակի): Մնաս բարով, հիմի մէրս մազերս կը-
պըճոկի: Փախիր:

ՍԱՐԻԲԵԿ

(Շտապով կրկին դրելով Լուսիկին եւ ամեն բարից յետոյ համ-
բուրելով) Մնաս բարով, իմ յոյսու... իմ ապաւէնս... Մնաս
բարով... Ինքը ծածկում է:

ՏԵՍԻԼ Բ

ԼՈՒՍԻԿ, ՀԵՐԻԲՐԱԶ, ԿԱՆԱՅԻՆԸ ԵԽ ԱՂՋԿՈՒՆԸ

ՀԵՐԻԲՆԱԶ

Լուսիկ, այ Լուսիկ... Ուր ա կորել էս աղջիկը...

ԼՈՒՍԻԿ

(Շփոթւած եւ արագ սրբելով պատի մօտերը) Էս ա գալիս
եմ, նանի, էստեղ եմ:

ՀԵՐԻԲՆԱԶ

Ի՞նչ ես շինում էսքան ժամանակ, քմա:

ԼՈՒՍԻԿ

(Սրբելով) Պատաստակն եմ սրբում, վերջացնում:

ՀԵՐԻԲՆԱԶ

Բա, ի՞նչ սրբելու ժամանակ ես գտել, պրճոկւած. ջան-
գիւլումաւորը քեզ ա սպասում ալիր:

ԼՈՒՍԻԿ

Պրծայ, նանի, պրծայ. գովիս եմ: (Աւելը ձեռքին՝ փլածքի

վրայով անցնելով՝ իրենց պարտէքր: Զանգիւլումաւորներին) Բարով
հաղար բարի... էս սհաթին, նանի:

Հերիքնը

(Բարիկացած) Քա, պլճոկւես ոչ զու, որտեղ ևս դրել.

ԼՈՒՍԻԿ

Էս սհաթին, նանի. պահել եմ, որ չփողանան... (Խոկոյն
արագապէս ծածկում է աջ եւ նոյն արագութեամբ երեւում է ծաղիի
բրուրը ձեռքին, որի բերնին դրած է մի մեծ ծաղկեփունչ. զնում է
պարտէզի մշտեղը) Հ'չը, համեցէք:

ԱՄԵՆՔԸ

(Ուրախ եւ ծափով) Նաղանի տատի, Նաղանի տոտի, ջան
կիւլումը քեզ առպառում... Նաղանի տատի...

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Բաժանելով միւսներից եւ առաջ զալով) Էս սհաթին, ձեզ
կուրբան... (Վօտենալով ծաղկէվիճակի բրուղին): Դէ, էղէք, թոփ
էլէք, պառաւներ ու ջահելներ, կնանիք ու աղջկերք, հարս-
ներ ու կեսուրներ... էկէք, չորս բոլորը շարուցէք, ձեր վի-
ճակն իմացէք, Աստծուն փառք տուէք, Աստծուն օրհնե-
ցէք... ջան սաղութիւն լինի ձեր ամենին,—մեծերին, պու-
ճուրներին, արար աշխարքին:

(Բոլորը սրտատրով մօտենում են եւ կիսաբոլոր կանգնում Նա-
ղանի տատի յիտեւում, երեսները դէպի հանդիսականները զարձրած):

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Հերիքնազին) Դէ, էրեխոն բերէք: (Բերում են մի 5—8
տարեկան երեխայ, նստեցնում են բղուղի յիտուր, երեսը դէպի հա-
սարակութիւնը զարձրած: Գլխին մի հաստ թօղ են զցում, այնպէս որ
ծածկում է ինչպէս երեխային, նոյնպէս եւ բղուղին: Յետոյ թօղը բար-
ձրացնելով, Նաղանի տատի հանում է բղուղից ծաղկեփունչը եւ մի
մի հաստ ծաղիկ բաշելով, տալիս է շրջապատսպներին, իսկ ինքը վեր-
ցնում է ամրադ մնացած փունչը): Դէ, ջահելներ ու անելներ,
ձէն պահէք: (Երգում են):

Արազը հեշտացել ա, ջան, կիւլում, ջան, ջան*)
ձամմիէքը կոշտացել ա, ջան, ձաղիկ, ջան, ջան:
իմ նանիս խարար տարէք, ջան, կիւլում, ջան, ջան
Մուշտարիս շատացել ա, ջան, ձաղիկ, ջան, ջան:

(Կիմելով երեխային) Դէ, հանի, բալէս, էղ բղուղիցը...
Մի զատ հանի. ինչ լինում ալ լինի: (Երեխան հանում է լի
քոնով իրեր): Զէլաւ, չէլաւ: (Ընդհանուր ծիծաղ եւ բրբիչ): Եղ

*) Ինչպէս այս տան առաջին և երրորդ տողերից յետոյ երգում է
«ջան, գիւլում, ջան, ջան», իսկ երկրորդ և չորրորդ տողերից յետոյ՝ «ջան,
ձաղիկ, ջան, ջան». նոյնպէս անհամատ պիտի երգել նաև ամեն աների տա-
կերից յետոյ: 2այնազբած եղանակը—գրքիս գերջում, № 3.

դցի տեղը. էղպէս. հիմի գրանցից մի զատ հանի, բալէս,
ինչ լինում ալ լինի, ամմա մի հատ լինի: (Երեխան հանում է
մի մատնոց): Այ, էղպէս, շատ ապրես, բալէս: (Վառնալով շրր-
ջապատպներին) Էս ում մատնոցն ա: (Աղջիկանցից մէկը կար-
մրելով ձեռքը մնկում է եւ վերցնում: Ընդհանուր ուրախութիւն):
Ասուած տայ, բալէս, Ասուած մուշտարիքդ դնա շատացնի:
(Երգում են):

Շաղիկ եմ քաղել նարսչի,
Այ տղայ, վեր արի, փնջի.
Մէրս քեզ աղջկի չի տայ.
Քանի ման զաս, եավաջի:

(Կիմելով երեխային) Հիմի էլ մի զատ հանի, բալէս: (Երե-
խան հանում է մի կոտրած զանակ): Էս ումն ա: (Առսիկը ձեռքը
մնկում է ու առնում): Էհ, Ասուած քու բանն աջողայ, բա-
լէս: Իսչի՞ էղպէս զուս էկաւ, քուանամ հս... Դէ, էլի ձէն
պահէք. թէ չէ կթողնեմ, կերթամ. ձեր մուրազը ձեր փո-
րում կմայ, հա:

Նախրատափին խնկի ծառ.
Խնձոր քաղեմ, արի, տար:
Ուրբաթ, շարաթ քեզ մոհաթ,
Լիս կիրակի արի տար:

(Երեխան հանում է մի օլ. Զերբիցն առնելով): Էս ումն ա,
մէջտեղ գայ: (Մի աղջիկ առնելով տատի ձեռքից օղը, ծածկում է
աղջկանց մէջ): Այ, ինչ եմ ասել, բարով գայ տանի, ջանի
ջան, բարով գայ տանի:

Վերնաքամին գալիս ա,
Թիկնամեջքիս տալիս ա.
Մէյզան արէք անց կենամ,
Կարօտ եարս գալիս ա:

(Երեխան այս անդամ առանց ասելու ուրախ ինքն է
հանում մի պղնձէ մատանի): Էս ում մատանիքն ա, քամ. տէրը
գուրս գայ, մի տեսնեմ էղ ժամ եարն ա գալի: (Վօտենում է մի
աղջիկ եւ կարմրելով առնում): Աղջի, քու եարն ա գալիս, հմ...
Շատ ապրես, բարով գայ ու տանի: (Ամենին էլ ուրախ ուրախ
ծիծաղում են): Դէ, ձէն պահէք ասում եմ, թէ ոչ համա...
Զան գիւլում կասեմ, կշարեմ,

Տոպրակ կածեմ, կկարեմ.

Կտրէ կտուր ման կզամ,

Քանց քեզ լաւը կ'ձարեմ:

(Երեխան հանում է մի կոմակ): Էս ումն ա... թէզ արէք...
(Մի կին է առնում: Փափոցն ընկնում է կանանց մէջ. իսկ ինքը
քրքչում է): Դէ, ծափ տէք է... Իսչի՞ չէք ծափ տալիս... ջան-
գիւլումը առանց ծափի չի սազում: (Երգը հետ ծափ են տալիս):

Ճրագ դնեմ լիսացու,
Կարմիր խառէն քիսացու.
Ես քու մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու:
(Երեխան տալիս է մի բանալի): Ես մւմ ա, մէջտեղ գայ:
(Առափկը խուռ է տատի ծեռքից բանալին): Այ, ինչ եմ ասել,
շատ ապրես...

ՀԵՐԻՔՆԱԶ

Քա, աղջի, էդ ինչ ա. ախր քու վիճակը գուրս էկաւ:

ԼՈՒՍԻԿ

((Թաղնելով աղջկերանց մէջ) Նանի, չեմ իմանում, իմ արեւը. ես բեխաբար՝ ջիրիցս աընկել մէջը: (Ամենը ծիծաղում են):

ՍԱԼԲԻ

Քա, ա կնիկ, ի՞նչ անենք, ջահել չի... Աչքդ լիս. լաւ գուրս էկաւ էս մէկը, հա: Բաղդը գոանը կանգնած ա:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Աստւած մուրազներդ կատարի:

ՄԻ ՔԱՆԻՑԼ

Ամէն, ամէն:

ՀԵՐԻՔՆԱԶ

Շատ սաղ լինես. Աստւած քունոնքն էլ պահի: Աստւած ձեր մուրազին էլ հասցնի:

ՍԱԼԲԻ

Շատ սաղ լինես:

ԱՄԵՆՔԸ

Շատ սաղ լինես:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Դէ, աղջկերք, ձէն պահէք, զալրութիւն մի տրէք: Քա, զորթ, լաւ ծափ տուէք է. զժումէլ էք, ի՞նչ ա. վա: (Երդն ու ծափը աւելի աշխատավ):

Գետը նի մտայ, խոր ա,
Քաթան շապիկս նոր ա
իմ նանին խարար տարէք,
Ես օլքեայ, օլքեայ կորայ:

(Երեխան տալիս է մի չափամասի քար: Մինչեւ Նազանի տատի էս ուժն ա“ ասիլը, Սալբին նրա ծեռքից խուռ է):

ՍԱԼԲԻ

(Խիստ կոտրւած) Դէս տուր, դէս տուր... Էս իմ անբախտ գլուխը գետինը մտնի, լաւ չի:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Քա, ա կնիկ, ամանչում չիս. էս տեսակ բանիցն էլ մարտէ իր սիրտը կկոտրի: Աստւած քու թագաւորացու աղէդ պահի:

ԱԼՄԱՍՏ ՔԻՔԻԲ

Քա, վառք Աստծու, էրեխայ հօ չես, որ էս վիճակները բանի տեղ ես դնում:

ՀԵՐԻՔՆԱԶ

Դէ, բան ա էլի. ջահէների համար ա, մեզ համար չի հօ:

ՍԱԼԲԻ

Բա ես ջահէլ չունեմ... ես եմ, մինումար տղայ, նրա վիճակն էլ էսպէս դուրս գայ:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Քա, վոյ, հողն իմ գլխին. սկզ էր իմանում, որ քու տղինը պէտք ա դուրս գայ:

ՍԱԼԲԻ

Զէ, հէնց բայզուշ ես, բայզուշ. մի խէր բան չես ասիր:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Բայզուշ էլ ես ու հլա մի զատ էլ աւելի: Լերթաքաշ:

ՍԱԼԲԻ

Իմ լերթաքաշութիւնը որբակ ես տեսել բենամուս:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Դէ, դէ... լեզուդ քեզ քաշի: Բենամուսը հէնց դու ես, որ կաս:

ՍԱԼԲԻ

Դու իմ բենամուսութիւնն հըրը ես տեսել, ասա. հէնց սրանց մէջն ասա, թէ չէ մուջասամդ գլխիդ կտոր կտոր կանեմ:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Լեզուդ քեզ քաշի, ասում եմ, թէ չէ հիմի մազերդ կը պրճոկեմ. բէհայա:

ՍԱԼԲԻ

Դու ես բէհայան, մեծով պուճուրով էլ էք բէհայա. քու հօթն պօրտն էլ ա բէհայա. հիմի իմացար:

(Նազանի տատը վրայ է զալիս Սալբու վերայ, Սալբին էլ նրա վերայ, բայց շրջապատղները, որք տատի կողմն է սրահում եւ որք Սալբու, չին թողնում կուրը միծանայ):

ՄԻ ԿԻՆ

Քա, ի՞նչ էք իրար եախից ձաւար հաւաքում:

ՄԻՒՄ ԿԻՆ

Էս ջան գիւլում չէլաւ, խայտառակութիւն էլաւ:

(Սալբին զնում է, նրա հետ էլ մի բանիսները):

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Սալբու յիտիից) Բնմ, գետինը մտնես դու:

ՏԵՍԻԼ Պ

ՆՈՅՆՔ, ԱՄԱՆՑ ՍԱԼՅԻԻ ԵՒ ՄԻ ՔԱՆԿԱՐԵՐԻ
ՄԻ ԱՂՋԻԿ
Աման, ՀՈՎՈՒԿԻՆՔ մենք էս տեսակ վիճակն ու ջան-
գիւլումը:
ՄԻՒՄ ԱՂՋԻԿ
Ո՞վ ա տեսել, որ ջան գիւլումին իրար միս ուտեն:
ՄԻ ԿԻՆ
Գնանք, գնանք, թէ չէ խաթէն մեղնից ձեռք չի քաշիւ:
ՄՆԱՑԱՆԵՐԸ
Նազանի տատի, նազանի տատի ջան, քեզ մատաղ,
ջան գիւլումը մնաց:
ՆԱԶԱՆԻ ՑԱՑԻ
Գնացէք, գնացէք. Նազանի տատը չէ ձեզ համար ջան-
գիւլում ասող չի. թող ձեր ծակծակւած Մալբին ասի: (Գնում է):
ՄԻՇ ՔԱՆԻՍԻԼ
Նրա յիտեւից զնալով) Տատի ջան, տատի ջան...
ՀԵՐԻՔՆԱԶ
Ես ի՞նչ ելաւ, քա. Հիմի խալին ի՞նչ կասի. էս խախկ-
խայտառակութիւն էլաւ հօ:
ԱԼՄԱՍ ՔԻՔԻՐ
Խեղջ ջահէների մուրազները սրաներում մնաց, քա:
ՄՆԱՔ բարով: (Գնալով) Ո՞ւփ, քա դէ եսիմ է:

ՏԵՍԻԼ Պ

ՃԱՅԲԱԶ, ԿՈՍՏԱՆԴ ԵՒ ԲՆՏԱՆԻՔԸ

ՃԱՅԲԱԶ

(Առասանդի նետ զախս են պարտէցի յիտին դոնով: Խնիան)
Հ՞ը. ջանգիւլումաւորդ մուր են... Հիմի խալին ի՞նչ կասի:
ՀԵՐԻՔՆԱԶ
Խախկ-խայտառակութիւն, էլի: Են քրքրւած Մալբին
արեց է: Ո՞չ իր մուրազին հասնի:
ՃԱՅԲԱԶ

Էղպէս էք է. հերիք ա, որ մի տեղ մի երկու-երեք
կնանիք հաւաքւէք, ձեռաց իրար միս կուտէք: Բա պատրաս-
տութիւնդ:

ՀԵՐԻՔՆԱԶ

Ել ի՞նչ պատրաստութիւն, սաղ զնաց կորաւ, էլի:
ԿՈՍՏԱՆԴ
ՄԻ ԱՊԱՍԵԿԷՔ. Մալբու զլուկը ես էն օյինը գամ, որ
խսկի չմոռանայ: Նա իմ ջանգիւլումը տակն ու վրայ անի՞:

ՃԱՅԲԱԶ

Դէ, դէ, ձէնդ: Ես քու հոգին կհանեմ, թէ մի բան ևս
արել: Երեկ մեր ջան գիւլումն էլ էսպէս պէտք ա լինէր:
Գնանք մենք մեր բանին: Դէ, առաջ ընկէք:
(Բոլորն էլ զնում են տուն):
(Հեռուց լուսմ է ջան գիւլումի երգը):

ՏԵՍԻԼ Պ

ՄԱՐԻԲԵՂ, յետոյ ԼՈՒՍԻԿ

ՄԱՐԻԲԵՂ

(Գալիս է աջ կողմից մտանալ) «Զաղացի աջի կուռը, կրպըն-
դայ մէջի գիւլը. վայ իմ կորած բլբուլը. քաշեցին խանի
գուռը»... (Միջոց) Լաւ, աչքս լոյս... Իմ սիրած բլբուլը քա-
շեցին խանի գուռը... Ընմ, Աստած վկայ ա, սաղ աշխար-
քը տակն ու վրայ կանեմ. քար քարի վրայ չեմ թողնի...
Մպասիր, տեսնենք լուսիկի վիճակն ի՞նչ ա զուրս էկել...
(Նայում է աջ՝ կանգուն պատի մօտից դէպի պարտէվի տան կողմը
կուչ ու ծիգ անելով, որպէս զի լուսիկի ծնօղներից չնկատու: Տեսնե-
լով լուսիկին այլանում) Լուսիկ, լուսիկ... ուսիկ... Տեսու:
Չհորով կանչելու շարժում է անում): Գալիս ա:

ԼՈՒՍԻԿ

(Երեւալով պատի մօտ՝ աջ կողմում) Դու Բու:

ՄԱՐԻԲԵՂ

ՀԵՐ:

ԼՈՒՍԻԿ

Իմացար:

ՄԱՐԻԲԵՂ

(Անհանգիստ) Ի՞նչը. իմ վիճակը:

ԼՈՒՍԻԿ

Զէ: էկ յիտոյ: — Մեր խայտառակութիւնը:

ՄԱՐԻԲԵՂ

(Վախեցած) Ի՞նչ. մնց:

ԼՈՒՍԻԿ

Մեր ջան գիւլումը քանդեց:

ՄԱՐԻԲԵՂ

(Անհանգիստ) Ի՞նչպէս. չի՞նի՞ ձեր ծաղկէ բղուզը գողա-

ցիւ են:

ԼՈՒՍԻԿ

Զէ. կոիւ ընկաւ ու ամեն բան քանդեց:

ՄԱՐԻԲԵՂ

Բաս քու վիճակը:

ԱՐԴՅՈՒՆ
Իմ երկուսն էլ դուրս էկաւ, յետոյ քանդւեց:
ՍԱՐԻԲԵԿ
(Յոտապով) Դէ որ քոնը դուրս ա էկել, ջնանդամը, ո՞ր
քանդւեց: Ի՞նչ դուրս էկաւ քեղ, քեղ մատաղ, շուտ ասա:
ԼՈՒՍԻԿ
Լաւ: Առաջինն, ասենք, աւելի ոչինչ: Էս էր. «Ծաղիկ
ևմ քաղել նարընջի, այ տղայ, վեր արի. փնջի. մէրս քեղ
աղջիկ չի տայ. քանի ման գաս, եաթիջի»:
ՍԱՐԻԲԵԿ
(Վախեցած) Ի՞նչպէս թէ... Միթէ քեղ ինձ չեն տալու:
ԼՈՒՍԻԿ
Կտան, կտան, միամիտ կաց. մէրս էլ կտայ, հէրս էլ.
ամենքով էլ՝ քեղ կտան: Հէրս քեղ շատ ա սիրում:— Էս մէ-
կը՝ հէչ:
ԲԱՍ ՄԻւԱԾ:
ՍԱՐԻԲԵԿ
Հօր: Ինչի՞ մթնեցիր... զրա համար միամիտ եղիր: Հա-
միւսն էլ էս. «Ճրագ դնեմ լիսացու, կարմիր խառէն քիսա-
ցու. (արագ) ես քու մօրը հարսնացու, դու իմ մօրը փեսացու»:
ՍԱՐԻԲԵԿ
Այ, ինչ եմ ասել ես քու հոգուն մեռնեմ... Ամմա...
մի քիչ... երկու վիճակը իրար չեն բռնում:
ԼՈՒՍԻԿ
Բան չկայ. մենք կըսնացնէնք: Բաս քոնն ինչ ա. մէրդ
ի՞նչ ասեց:
ՍԱՐԻԲԵԿ
Հէնց բանը գրանումն ա է... Մէրս մէջքս կոտրեց:
ԼՈՒՍԻԿ
Ի՞նչպէս թէ... մի ասա, տեսնեմ:
ՍԱՐԻԲԵԿ
(Այքերը ցած զցելով եւ մթնած) «Զաղացի աջի կուռը, կը
դնդայ միջի գիւլը»...
ԼՈՒՍԻԿ
(Վախեցած, արագ շարունակիլով) «Վայ իմ սիրուն բլրու-
ը, քաշեցին խանի դուռը»...
ՍԱՐԻԲԵԿ
(Իբր յանցաւոր) Հա:
ԼՈՒՍԻԿ
Վա... (Մտքերի մէջ է ընկնում):

ՍԱՐԻԲԵԿ
(Պոթափելով մտքերը) Զէ, Լուսիկ ջան, ես քեղ չեմ թող-
նի. ով ա իմանում թէ ինչ ա գալու գլուխներս...
ԼՈՒՍԻԿ
Ի՞նչպէս:
ՍԱՐԻԲԵԿ
Շատ-շատ՝ ինձ մի ամիս ժամանակ տուր: Ինչպէս որ
լինի ես կազմակերպութիւնից էլի ժամանակ կառնեմ, թէ-
կուղ հինգ օրով. որ չթողնեն էլ՝ կփախչեմ ու թոչունի թե-
ւերով կթաշեմ, կհասնեմ քեղ. հէնց էն օրն էլ կպսակւենք ու
առանց եա զցելու քեղ կտանեմ երեան: (Վառողաբար) Ես քեղ
էստեղ չեմ թողնի: Հերկինազի ձայնը տանից.— Լուսիկ... Լուսիկ...
ԼՈՒՍԻԿ
Էկայ, Էկայ:
ՍԱՐԻԲԵԿ
(Յոտապով) Իրիկունն էստեղ երեա, հա:—
ԼՈՒՍԻԿ
Լաւ, լաւ: Մնաս բարով: (Գնաց):

ՏԵՍԻԼ Զ

ՍԱՐԻԲԵԿ, յետոյ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԻԲԵԿ

(Մենակ: Նայելով նրա դէպի տուն վազելուն): Գնաս բարով,
իմ մարալը, իմ կաքաւը, իմ շակալագը... (Գալով նախարեմ)
Գնաց... է՛հ... Զէ. պէտք ա սրան էստեղից փախցնել, թէ
չէ... ով ա իմանում... ով ա իմանում թէ թուրքերը վրայ
չեն տայ մեր էս զեղին ու... «Վայ իմ կորած բլրուլը քաշե-
ցին խանի գուռը»... (Իբրին սիրու տալով) Ասենք էս վիճակնե-
րին էնքան էլ հաւատալ չի լինի... ամա գէ ով ա իմանում...
Էլաւ՝ էլաւ. էն վախտը... ժամանակն ա վատ... Մեր էս
գեղականները չեն էլ մտածում... որ... որ... հրացաններ
առնեն... որ թուրքերը կարող են իրենց էլ վրայ տան ու
ինչ ասես անեն... (Զերբը զիսին է զնում եւ արմունկով յինուում
է ծառին՝ իիստ մոտանցութեան մէջ):
(Հեռուից լուսում է ջան պիւլումի եւզը):
ՄԱՆՈՒԿ
Հը. Սարիկէպ... Ինչի՞ վրայ ես մտածում: Զլինի՞ ու-
զում ես իմանալ թէ սարերի փշերի ծերերն ով ա սրել,
ՍԱՐԻԲԵԿ
(Զարժւելով) Է՛հ. դու էլ...

ՄԱՆՈՒԿ

Բաս ինչի՞ ես էգակէս միջնդել. էն էլ էս Համբարձման
օրը: Լսում ես, այ, սաղ գեղը ջան գիւղում ա տոռում. այ...
լսում ես: Ամա զու էնպէս երես ես բաներ, որ, կասես, աշ-
խարքի կոռ ու բեգեառը քեզանից պիտի առնեն:

ՍԱՐԻԲԵԿ

Ի՞նչ կայ զարմանալու. ես էլ իմ ցաւերն ունեմ:

ՄԱՆՈՒԿ

Է՛ս, եղբայր. ինչքան էլ մտածես, էլի հարլորի կէսը
յիսուն ա. — ոչ աւել, ոչ պակաս:

ՏԵՇԻՔ Է

ԵՂՅՅԱՅ ՀԻԿԱՆԵՑՐ

(Հետզնատէ աջ ու ձափ փողցներից հաւաքւում են գիւղական-
ները այս փորբիկ հրապարակը. որը պազում է, որը ման է զալիս,
որը յինում է ծառին, - որը նստում է՝ նրա բնին մէջը տւած, որը
շիրում է բաշում, կամ պատրաստում է բաշելու):

ՄԱՆՈՒԿ

Հը՞ ի՞նչ ա էլել որ:

ՍԱՐԻԲԵԿ

Իսկի բանից խարար էք:

ՄԱՐԿՈՄ

(Վալուստին) Ասում են սրանց (ցոյց տալով դէպի Շահբա-
գենց կողմը) ջանգիւղումը քանդւել ա:

ԳԱԼՈՒՍ

(Քթի տակ ծիծաղելով) Գիտում եմ. լսեցի:

ՍԱՐԻԲԵԿ

Սակ աշխարքը, կասես, տակն ու վրայ ա լինում. մար-
դիկ են կոտորում, մարդիկ են կոտորում. բայց իսկի ձեր
վէջը չի:

ԳԱԼՈՒՍ

Ի՞նչի՞ էլ ինչ ա էլել:

ՍԱՐԻԲԵԿ

Այ քու տունը շէն՝ էլ ի՞նչ լինի: Բագու, երեան... այ,
հիմի էլ նախիջևանիցն ա փիս հոտեր գալիս... Տեսնում էք՝
ճամբէքն էլ կտրւել են. էլ գեղից գեղ մարդ չի կարողա-
նում դնայ, որ նախիջևանից բանուման իմանայ:

ՄԱՆՈՒԿ

Դէ, քու էդ ասածը քաղաքներումն ա. մէնք ինչ անենք:

ՍԱՐԻԲԵԿ

Ես չեմ ասում. թէ մեղաւորը դուք էք. բայց դէ բանն

էլ հէնց նրանումն ա, որ ամենքդ էլ պատրաստ պէտք ա-
լինէք է:

ԱԶԻՋ

Սպասիր. ի՞նչ պէտք ա անենք, որ պատրաստ լինենք:
ՍԱՐԻԲԵԿ

Դուք պէտք ա նոր զէնքեր ունենաք: Ինչ էլ որ ունէք՝
հիմի՝ պէտք չեն դայ: Էնպէս պէտք ա անէք, որ ձեր
թշնամին վերսու ու կէսից, մի վերսարից աւելի չթողնէք ձեզ
մօտիկանայ, թէ չէ... Ախր էս խանակութիւնը քաղաքնե-
րից գեղերն էլ կարող ա մտնի՝ չէ:

ՎԱՆԽՍ

Սպասիր. ինչի՞ համար ա էդ նոր զէնքերը որ:
ՍԱՐԻԲԵԿ

Բաս ես ի՞նչ եմ ասում. ականջդ մրտեղ էր: Պէտք ա
ունենաք, որ՝ թէ որ թուրքերը ձեր գեղին վրայ տան՝ նրանց
հալածական անէք: Թէ չէ...

ԳԱԼՈՒՍ

Թէ չէ ի՞նչ... Ի՞նչի՞ են վրայ տալիս որ:
ՍԱՐԻԲԵԿ

Այ հէնց բանը զրանումն ա է: Մեր կազմակերպութիւ-
նը ասում ա, որ էս խմորը զեռ շատ ջուր վեր կառնի. պէտք
ա, ասում ա, պատրաստ լինենք ամեն փորձանքի: Որովհետեւ
թուրքերը...

ՎԱՆԽՍ

Ի՞նչ թուրքերը. մեզ ի՞նչ կարան անեն որ:
ԳԱԼՈՒՍ

Մենք նրանց հետ ի՞նչ ունենք բաժին բաժին անելու:
ՎԱՆԽՍ

Էգակէս մի ասա, քաւոր. թուրքը որ ոսկի լինի ջբդ
մի զցի. էդ հօ իմանում ես:

ԳԱԼՈՒՍ

Իմանալն, ասենք, իմանում եմ...

ՎԱՆԽՍ

(Ընդմիջելով նրան) Ես որ թուրքին չդիպչեմ, նա մեզ
ի՞նչ կարայ անի:

ՍԱՐԻԲԵԿ

Էգակէս մի ասէք. մեր կազմակերպութիւնն ասում ա...
ՎԱՆԽՍ

Տօ դէ ձեր կազմակերպութիւնը զլուխը քարովն ա տա-
լիս, որ ասում ա:

ՍԱՐԻԲԵԿ

(Կատաղած) Գնաւ ես զլուխդ քարովը տալիս: (Պաշոյնը հա-

Նելով եւ վրայ զալով, բայց դիւղականներն իսկոյն մէջ են բնկում և
քաժանում): Էս բոպէին փորդ կթափեմ. անտուն:

Գիշականներ

Սպասիր, տօ...

Սպասիր, էյ...

Գժէլ էք, ի՞նչ առ...

Էս Համբարձման օրը՝ արիւնն էք պակաս:

ՄԱՐԴՈՍ

Վա, տօ, էս օրւայ Համբարձումը զալմաղալիցն ա
ԲՈՒՆՔԻ:

ՄԱՐԻԲԵԿ

Էգուս ա: Մեր կազմակերպութիւնի համար, ոչ ոքի
չեմ թողնի, որ մի ծպտուն հանի:

ՎԱՆԽԱ

Դէ լաւ, լաւ... ջահէլ էր՝ ասեց...

ՄԱՐԻԲԵԿ

Իրա ջահէլ գլուխը պատովը տռեց:

ԿԱԼՈՒՄՑ

Տօ, դէ, հերիք էլաւ է...

ՄԱՐԻԲԵԿ

Ախր չէր իմանում, —մեր կազմակերպութիւնը զիշեր,
յերեկ չունի. հանգստութիւն չունի. ինչ զէնքիր ասէք՝ բե-
րիլ ա տալի, ամենքին ծախծախում ու զէնքի տէր շինում.
ամենքին հասկացնում ա, թէ ինչ ա, համա... զգուշ կինան,
իրանց լոյս հաւատը թուրքի ձեռք չզցեն... Բայց սրա պէս
ախմախներ...

ՄԱՆՈՒԿ

(Խր իրան չկոտրելով) Աղա, դէ լաւ է... Հանաք էի անում
էլի, վաս...

ՄԱՐԻԲԵԿ

Ես քու հանաքը չանաք կանեմ. գիտում ես թէ չէ:

Գիշականներ

Դէ լաւ, լաւ...

Տեսնում ես, որ հանաք էք անում, էլի:

Դու, աւելի լաւ, պատմիր ձեր կազմակերպութիւնից:
էզ աւելի լաւ կլինի:

Դու քու խօսքն ասա, քու խօսքը:

Կազմակերպութիւնն էլ ինչ ա ասում:

ՄԱՐԻԲԵԿ

Էն ա ասում որ՝ շատ վատ հոտ ա զալիս էս բանից:
Թուրքերի միտքը շատ ծուռն ա: Նբանք ուրիշ բաներ են
մտածում. շատ վատ բաներ:

ՄԻ ՔԱՆԻՄԸ
(Աւելի հետաքրքիր) Ի՞նչ, ի՞նչ բաներ:

ՄԱՐԻԲԵԿ

Եապօնացիք, ասում ա, նեղն են լծել ոսներին. այ,
որանք էլ, թուրքերը, իրենց զլուխն են բարձրացրել և ու-
զում են կոսորել բոլոր հայերին, կամ մեզ էն օրը զցել որ
մենք վախենանք, թողնենք ամեն բան ու քաշւենք ուրիշ
երկրներ: Թուրքերն էստեղ ուզում են մենակ մնան, տիրեն
մեր ունեցած-չունեցածին, հողերին ու սիրուն-սիրուն դաշ-
տերին, սարերին ու ձորերին... ու մեր էս սուրբ երկիրը,
հայաստանը՝ թուրքի երկիր շինեն... Մեզանից յետոյ էլ, յի-
մարաբար, մտածում են ոսներից բանեն... վախցնեն նրանց
էլ էստեղից ու իսլամի տիրապետութիւնը հաստատեն:

ՎԱՆԽԱ

Լաւ... բա տէրութիւնը:

ՄԱՐԻԲԵԿ

Տէրութեան վրայ էլ ամենեին յոյս չպէտք ա զնենք,
ասում ա: Ի՞նչ արեց, ասում ա, Բագուի, Երևանի կոտորած-
ներից յետոյ, որ հիմքի ինչ անի: Դեռ թէ ուզում էք իմանալ՝
տէրութիւնն, ասում ա, ինքն ա թուրքերին թև ու թիկունք
գառել... Մէնք, ասում ա, ինքներս պէտք ա մեզ պաշտպա-
նենք. մեր զիսի ճարը մինք ինքներս պէտք ա անենք, որ
վերջն, ասում ա, ոչխարի նման չկոտորւնք:

ՎԱՆԽԱ

Էզ ամենն էդպէս... Բաս հիմի մենք ի՞նչ անենք:

ՄԱՐԻԲԵԿ

Ինչպէս թէ ինչ անէք: Պէտք ա զէնքեր ունենաք. ու-
վոլվէրներ, խանչալներ, հրացաններ: Սազ գեղը զէնքերով
պէտք ա լցնէք: Զահէլ ու ահէլ, միծ ու պստիկ պէտք ա
զէնք ունենաք ու նրա բանացնելն իմանաք, որ թշնամուն
քշեք. թէ չէ վայ ձեզ:

ՎԱՆԽԱ

Լաւ. էզ ամենը մրտեղից ձեռք բերենք մենք:

ԱԶԻԶ

Մէնք միը աղքատութեան ետեիցն ընկնենք, թէ զէն-
քերի:

ՄԱՐԻԲԵԿ

Էզ հիմի ձեր բանն ա: Թէ ամենքով էլ չունենաք, բաս
ձեր գեղի կէսն էլ չպէտք ա ունենայ:

ՎԱՆԽԱ

Ախր, այ Սարիբէկ ջան, մրտեղից ախր, ուր ա փողը...
Փող, փող... Հասկանում ես փողն ինչ ասիլ ա:

ՍԱՐԻԲԵԳ
Բաս թուրքերը սրտեղից են գաճում, էնպէս էլ դուք
ճարեք:

ՄԱՐԿՈՍ

Ախր էս կու ու բէզեառը, էս նալօգներն ու հարկերը.
մեր շունչն են կարում. իմանում ես, թէ չէ:

ՍԱՐԻԲԵԳ

Բաս թուրքերն էդ չունեն. բայց էլի ճարում են, չը.
— նրանք բերում են բազար իրենց խալին ու կարպետները,
ոչխարն ու տաւարը՝ ծախում են ու զէնքի տալիս: Էզպէս
էլ դուք արեք:

ՎԱՆԵՍ

Զէ, ախտէր, էդ քու ասած զէնքերի համար ես իմ տաւարը չեմ ծախի: Ի՞նչ լինում ա, թող լինի:

ԱԶԻԶ

Տօ դէ, ինչիս ա պէտք է:

ՄԱՐԿՈՍ

Զոսով, զոսով թուրք ու հայ իրար կպցնելու համար
ա էլի:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Ռւրիշ ոչինչ:

ԳԱԼՈՒԾ

Մինչև էսօր սր թուրքն ա մեր հաւին քըշ արեւ, որ
հիմի անի: Եւ ինչի՞ սրանից յետոյ պէտք ա անի:

ՄԱՐԻԲԵԳ

Դէ հիմի դուք էք իմանում: Մէկ օր վայ կտաք ձեր
գլխին, բայց ուշ կլինի.

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

(Վեր կինալով նատած տեղից) Այ խալիսը, ես հօ մինչև հիմի չէի խօսում. ոչ լաւ, ոչ վատ: Դուք էլ ձերն էիք ասում, ձեր խէրն ու շառը խօսում. ամա իմացէք, որ էս բանի վերացը շառ ա համ... Սիրտս սրբի պէս վկայում ա ու ճմլումք (Չիրուկը թափ տալով եւ զրաբանը զնկով): Դէ հիմի էլ ինձ լսեցէք: (Հաւաքում են նրա շուրջը): Հէնց էս զիշեր երազումս...)

ՄԷԿԸ

Է՞ս, դու էլ ու քու երազները:

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

Հա բալաս. ես ու իմ երազները: Մի քիչ համրերութիւն ունեցէք, լսեցէք... էս իմ երազը՝ երազ չի, հրաշք ար, հրաշք, ամսիւք ա, մարդարէութիւն ա:

ՎԱՆԵՍ

Քաւոր ջան, երազդ ասա տեսնենք:

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ
Սսա, ամի, ասա տեսնենք:

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

(Յատ խորհրդաւոր դէմք բնդուներով եւ իրը աշխատերով ճիշտ յիշել ամեն մանրամանութիւն): Իրը թէ ես ու էս (ցոյց տալով մէկի վերայ) մէր սանահէք Մկօն կանգնած էինք մի բարձր, բարձր տեղ... էս Մասիսն էլ մեր առաջին, էնպէս երկում էր... Գլխի ձինը պլազում էր, էսպէս, (ձեռքի շարժենով) ոնց որ հարիւր հազար ալմասաներ լինէին թափած... Ներքեն էլ, դաշտերումը երեսում էր մախմուրի նման բուսականութիւնը կանաչ-կանաչ, ինչպէս մի գրախա... Երկինքը էնպէս պարզ, ինչպէս որ... ինչպէս որ... ի՞նչ ասեմ... ինչպէս մէկ ամենալավ վիթուզ... Արեն էլ, ասես ոսկի էր շաղ տուել արար աշխարքի վրայ... ու մեր չորս կողմն էլ անուշ անուշ տաքցնում էր, կեանք էր մտցնում ամեն տեղ... Յանկարձ... (սոսկալով) ես ու էս մեր սանահէք Մկօն, լսեցինք, որ Մասիսի միջից մի գոզուց, մի գոզուց ա գալիս որ, որ ինչ ասեմ... ինչպէս որ մի սար շուռ գայ, ինչպէս որ էս զեղի չափ լիս քարեր ու քարափներ իրար դիպչելով, իրար վրայ թափւելով զրդիկուր լինէին շատ շատ բարձրից ներքին ներքին:

ԳԱԼՈՒԾ

Վա...
...

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

Սպասեցէք: Յետոյ էլ տեսնենք, որ Մասիսի զլուխը բռնեցին սկ սկ ամպեր, շատ սկ ամպեր ու ձեռաց ողջ երկինքը մթնեց, մթնեց ու ամպերի զուզուցցն ու կայծակը աշխարք վերկալաւ:

ԱՄԵՆՔԸ

(Սարսափած) Յիսուս ու Քիւստոս:

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

Էզպէս ամպերի զուզուցց ու կայծակը կայծակի վրայ վրայ խփելը՝ մեր հայրերից ու պապերից ոչ լսել էինք, ոչ էլ տեսել... Բայց էդ զես ոչինչ:

ԱՄԵՆՔԸ

(Նոյնպէս) Ի՞նչ, ի՞նչ... էլ ի՞նչ...

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

(Աւելի սարսափած) Յանկարձ Մասիսի զլուխը ճագեց ու կրակ. կրակ, ի՞նչ կրակ... սկ մուխ ու ծուխ... գոզուց, ճըթճթոց, պմ, պմ, պմ... (Գլուխի բանելով) կրակը, կրակը... Ի՞նչ կրակ... ինչպէս որ վասած, կրակ վասած ցեխ... կրակ ցեխ. կրակի տիւ... բարձրանում էր, էսպէս, (ցոյց տալով զոյց ձեռքերով շատ բարձր) ասազերին դիպչելով ու էնտեղից պլազէն թափւում, թափւում էր աշխարքի վրայ:

ՄԻ ՔԱՆԻՍԲ

Վայ քու տունը շէն...
Էղ ինչ անբախտութիւն ա, տօ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Բայց, որտեղ որ թափում էր է, ճեռաց կրակ ու աւերակ, քիւլ ու մոխիր էր դառնում էն տեղը: Ել ծառեր, էլ այգիներ, էլ ձորեր, էլ սարեր, էլ գեղեր, էլ քաղաքներ... ամեն, ամեն բան:

ՄԻ ՔԱՆԻՍԲ

Տէր, մեղայ քեզ...
Դու մեղ փրկիր, Տէր Աստւած...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Դեռ լսեցէք մի, դուք ու ձեր Աստւածը... Մարդիկ, եղներ, կովեր, գոմէջներ, հորթեր, ոչխարներ—ամենը խառնում էին իրար, փախչում էին իրարից, ով ուր կարողանում էր... փախչում էին, ինչպէս էին փախչում ու ծակ ու ծուկ մտնում... Բայց ամեն տեղ էլ, ամենքին էլ հասնում էր էն կրակ-ախլք. ամենքին էրում, փոթոթում ու մոխիր շինում:

ԱՄԵՆՔԸ

Էղ ինչ ա, տօ...

Տէր, դու փրկիր մեղ ամեն փորձանքից...
Էղ ինչ անբախտութիւն ա...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Դէ սպասեցէք մի վերջացնեմ է...

ՄԵԿԸ

Տօ, գէ բաւական աէ... ջաններս, կասես, փշերով ծակ-ծակեցիր...

ՄԻՒԾ

Զէնդ կարի մի տեսնենք է...

ՄԵԿԸ

Ախր...

ՄԻՒԾ

Զիսկնում: Զես ուզում լսես, գնա քու բանին: Ամի ջան, ամի, վերջացրու:

ԱՄԵՆՔԸ

(Սարսափած) Յետիյ

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հա: Մէկ էլ ինչ տեսնենք... Աստծու զուլումը մեր գեղի վրայ էլ եկաւ... Մէկ էլ տեսանք. որ Մասիսից դուրս թռած ցեխ-կրակից, ինչպէս մի երկար լեզու էլ եկաւ, թափ-աց մեր գեղի վրայ ու աւերն սկսեց... Մեր գեղն էրվեց,

Էրմեց ճթճթալէն, ճռճռալէն ու մեր ըոլոր գեղականների մէջը առ ու փախն ընկաւ...

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Տէր Աստւած, Տէր Աստւած, դու ողորմիր մեղ...

Վայ քու տունն աւիրսի, ամի... Բաւական ա. էլ չենք ուզում լսել...

Ով չի ուզում լսի, թող զնայ... Ամի, ասա. մինչև վերջն ասա...

Մինչև վերջը, մինչև վերջը...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Ամի սարսափով) Առ ու փախն ընկաւ, ինչպէս ընկաւ:

Տէրը սրգուն ուրացաւ, մէրը՝ աղջկանը... Փախան, փախան, առանց եա նայելու ու էղ փախչողների չարէքն էլ չպրծաւ... Լայն ու կոծը, շների զուզան ու ոռնոցը, կենդանիների բասանչոցն ու մռնչոցը՝ աշխարք վերկալաւ... Մարդկանց ատամների կրծառցն ու անդադրում անէծքները ծածկում էին գժոխային քահ-քահ ծիծաղով, որ գալս, հասնում էր մեղ ինչ որ հեռու տեղից, շատ հեռուից...

ԱՄԵՆՔԸ

(Սասարիկ յուզմունքով) Տէր Աստւած, Տէր Աստւած...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Ահ առ զարգանդիցս զարթնեցի. քափ ու քրտնքի մէջ; վեր թռայ տեղիցս ու... երսս խաչ արի, ու չոքեցի ալօթաքի... (Ազերին ու ձեռքիրը վերև բարձրացնելով) Տէր, դու փրկեա զմեղ ի փորձութէննէ և ամենայն վտանգից մերոց...

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Տէր, դու փրկեա զմեղ ի փորձութէննէ և ամենայն վտանգից մերոց...

(Ընդհանուր լուսթիւն: Բոլորն էլ սարսափած եւ կաշկանդւած դրութեան մէջ ին):

Զափ կոզմից լաւում է ջան գիւլումը

ԱՄԵՆՔԸ

(Մօտինալով) Մարիբէգ:

ՄԱՐԻԲԵԳ

ՀԸ

ԱՄԵՆՔԸ

Դու մի ինձ ասա՝ էղ զէնքը, որ ասում ես, ինչպէս ձեռք բերենք:

ՄԱՐԻԲԵԳ

Փող հաւաքիր, արի երևան: Մեր կազմակերպութիւնն էլ ունի, ուրիշներն էլ: Մի բերզանկան 50—60 մանէթ ա. հարիւր փամփուշտն էլ՝ 15 մանէթ:

ՄԱՆՈՒԿ

Փամփուշտն ինչ բան ա:

ՍԱՐԻԲԵԳ

Պատրոնները, գիտում ես, նրա գնդակները, Պահ քու
տունը շէն. էդ էլ չես իմանում:

ՄԱՆՈՒԿ

Ո՞րտեղից իմանանք. մեր հրացաններն էդ չունեն. Մենք
ինքներս բարութով...

ՍԱՐԻԲԵԳ

Իմանում եմ, իմանում. զրանով շատ բան չես անի.
մինչև դու մէկը կցես, թշնամիդ հարիւրաւոր գնդակներ
կթափի վրադ. Փամփուշտը պատրաստ բան ա, զիր հրացա-
նի մէջն ու զցիր: Մի վերատի վրայ եղան վեր կցես:

ՄԱՆՈՒԿ

Է՛ճ.

ՍԱՐԻԲԵԳ

Իմ արկը: Դրանից լաւերն էլ կան՝ թանգ են: Հա, Մա-
նուկ, դու սրանց խելքին մի ընկնի. ինչ ունես-չունես՝ ծա-
խի ու զէնք առ: Այ, որ ձեզ սալգաթ են տանում վայ ու
վույլ զցում էք... Սալգաթ գնացէք է... թէ մի 20—30 քեզ
պէս տղերը սալգաթ էլած լինէին է, սարեր շուռ կտային,
թրիստորը վկայ ա... Ամմա դէ էլածն էլ, ինձ պէս, իրանց
աներում չեն նստում, գնում են քաղաքներ կամ ոռւսառ-
տան... Հա, թէ ուզում ես, արի գնանք իմ բերդանկան ու
փամփուշտները տես:

ՄԱՆՈՒԿ

(Ուրախացած) Գնանք: (Գնում են):

ՏԵՍՔԼ Բ

ՆՈՅՆՔ, ԱՄԻՒՆՑ ՍԱՐԻԲԵԳԻ և ՄԱՆՈՒԿԻ

ՄԱՐԿՈՍ

(Կաշկանդւած դրութիւնից իբր աղատւելով) Աստւած քու
տունն աւիրի ոչ, ամի: Էդ ինչ ասեցիր դու...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Բաս ինչ էք իմանում. էս թուրքերի դալմաղալը մեղ
պէտք ա չհանի:

ՄԵԿԸ

Սարիրէզը բաս չի իմանում ինչ ա ասում:

ՄԻՒՋԸ

Երեան ամենքն էլ հէնց էդ էին խօսում, էլի:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Աստւած մեղ աւելի վատիցն աղատի: Ես մեր էս գե-
ղից, էնպէս, շատ եմ վախում:

ԳԱՆԽԱՐ

Է, լաւ, սպասեցէք. հիմի բնչպէս անենք:

ՎԱՆԽԱՐ

Ուզենք-չուզենք՝ պէտք ա զէնքերի ճար անենք. թէ
չէ վայ մեղ. դրուստ որ վախենալու ա:

ԱԶԻՔ

(Քարկացած) Թողէք ի սէրն Աստւածու է. աշխարքը տակն
ու վրայ հօ չէլաւ:

ՎԱՆԽԱՐ

Ոլ ա իմանում. բաս մեր պատրաստութիւնը չտեսնենք:

ԱԶԻՔ

Դէ տես, հը՛: Ես որ էպակս յիմար բաների հետ գլուխ
չունեմ. ինչ ուզում էք, արէք:

ՄԱՐԿՈՍ

(Քարկացած առաջին կանգնելով) Ինչի չունես. ես էս աղ-
քատ անդուխ որ պէտք ա պատրաստութիւն տեսնեմ, գու
ինչի պէտք ա չտեսնես:

ՎԱՆԽԱՐ

Իհարկէ: Դու էլ պէտք ա զէնքեր ունենաս, ես էլ, սա
էլ, սա էլ, նա էլ, հէնց սա էլ... հէնց ամենքս էլ պէտք ա
ունենանք, որ բան դառնայ, բաս: Թէ չէ մի հատով, երկու
հատով ինչ կանափ:

ՄԱՐԿՈՍ

Սպասեցէք, մի բան ասեմ: Էկէք տանուտէրին ասենք,
որ մի հարիւր հատ բերդանկայ առնի ու գեղական ծախքե-
րի մէջ զցի:

(Այսաեղից սկսած գիւղականիրի ծայներն սկսում են բարձրա-
նալ, նոյն իսկ զուզուցի հասցնել: Ընդհանուր շարժումներ ու աղ-
մաւկ թեր եւ դէմ կարծիքների, նաև նրանց մէջ, որոնք չին մաս-
նակցում բանակաւին):

ԱԶԻՔ

Ինչպէս թէ... էղպէս բան կլինի՞...

ՄԻՒՋԸ

Դէ ասա տուններս քանդենք, էլի:

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Խառն ի խուռն մէկը միւսի հետ միաժամանակ վիճելով)

Ի՞նչպէս թէ... Փիա...

Բաս ինչ շատ լաւ ա ասում...

Մենք էղպէս ծախսեր կարող ենք անել, տօ...

Բաս ոչխառի նման կոտորելնք...
ինչի՞ որ... ի՞նչ էլաւ որ...
Աշխարքը տակն ու վրայ էլաւ...
Բատէր ու տիրական չկայ...
Տօ, ի՞նչ ես ասում, ի՞նչ... ողորմելի...
Բաս տէրութիւնը կթողայ որ մեզ կոտորեն...
Թուրքերն իրանցը կանեն ու...
Յետոյ էլ գնա ու տէր ու դատաստան ման արի:
Են էլ թէ կենդանի մասցիր...
Է՛ս, ինձնից յետոյ թէկուղ աշխարքը տակն ու վրայ
մինի...

ԵՐՐՈՐԴԸ

Մենք առանց էն էլ չենք իմանում ինչպէս գլուխ պա-
տէնք, — էս էլ նոր ծախսեր...

ՄԱՐԿՈՍ

Չէ, թողնենք որ մեզ կոտորեն:

ԱԶԻԶ

(Մարկոսին) Ի՞նչ ես լորի լորի գուրս տալիս, այ դդում.
Իսկի համկանում ե՞ս:

ՄԱՐԿՈՍ

Դդում էլ, դարման էլ: Գինու տիկ:

ԱԶԻԶ

Դէ, զէ, խելքդ գլուխդ հաւաքիր:

ՄԱՐԿՈՍ

Դու ինքդ խելքդ գլուխդ հաւաքիր: Ուզում ես որ մեզ
մորեխի նման կոտորեն:

ԳԱԼՈՒՍ

(Ազիզին) Ով որ խօսայ խօսայ, դու դեռ մի խօսա:

ԱԶԻԶ

Է՞դ ինչի: Ինչի ես չպիտի խօսամ:

ԳԱԼՈՒՍ

Տունն էլ ունես, այզին էլ ունես, տաւարն ու ոչխարն
էլ ունես: Մենակ հէնց դու կկարողանաս տասը բերդանկայ
առնել:

ԱԶԻԶ

Հա, իհարկէ, ջէբերդ լէն բաց արէք:

ՎԱՆԵՑ

Բաս ի՞նչպէս... Տարեկան չորսհինգ կարաս պինի՝ մե-
նակ դու ես խմում: Այ, հիմի, հէնց էս բողէիս տկիցդ զի-
նու հոտ ա փչում. էլի մի ձեռաց բութուկը շուռ ես առել էս
(խիելով նրա փորին) տոպլակդ:

ԱԶԻԶ

Խմել եմ, թէ չեմ խմել քեզ ինչ... թէ խմել եմ, իս
(կրծքին խիելով) ունեցածն եմ խմել գողոթիւն հօ չեմ արել:

ՎԱՆԵՑ

Այ, ես էլ հէնց էլ եմ ասում է: մեզանից շատերը
տարւայ մէջ մէկ բոթի էլ չեն խմում, բայց զու՝ մինչեւ իրի-
կուն գեռ տասը կխմես: Այ, քան թէ էղքան խմում ես՝ ծա-
լիքը, զէնքերի տուր: Դեռ գեղին էլ օդնիր:

ՄԵԿԸ

Բաս որ երեսուն կարասն էլ ծախում ա:

ԱԶԻԶ

Ես ոչինչ չեմ տայ ու ոչինչ էլ ոչ ոքից չեմ ուզի:

(Ազիզը բարկացած զնում է: Արան հետևում են զիւղականնե-
րից մի երկուսն էլ):

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Երանց յետելից) Հհ, ըհ, ըհ...

Ես էլ մեր զեղի իշխանները:

ՃԵՄԻԼ Ժ

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՑ ԱԶԻԶի եի Մի ՔԱՆԻՍՆԵՐի

(Հեռուից, ձախ կողմից բառում է հաւարի ձայն):

ՄԻ ՔԱՆԻՍՆԵՐ

Մպասեցէք, սպասեցէք... (Առութիւն է տիրում: Լսողներն
ականջները գէպի ձախ կողմն են դարձնում, եւ ամբողջապէս լսորւ-
թիւն դառնում, իսկ միւսները լուռ ու հետաքրքիր նայում են նրանց
երեսին): Հաւար են տալիս, տո... Լսում էք...

(Երաբանցումն ընկնում է զիւղականների մէջ: Մի փոքր առաջ
զնացաներն իսկոյն յետ են զալիս: Մի բաննար փառում են գէպի ձախ,
բայց շուտով ներս են զալիս հովիր հետ):

ՃԵՄԻԼ Ժ

ՆՈՅՆՔ եւ ՀԱՎԻԻ

ՀԱՎԻԻ

(Ներս վազելով) Հաւար... Զեր զիսի ճարն արէք. նախի-
քը տարան:

ԱՄԵՆՔԸ

Ի՞նչպէս թէ... ով... ի՞նչ... մեր նախիքը...

(Յահրագինց պատի մօտ երեւում են Հերիքնազը եւ Լուսիկը: Ամեն կողմերից հաւաքում են կանայք եւ երեխաներ եւ, իմանալով անցրի մասին՝ սաստիկ շփոթում են, իրար հետ խօսում եւ միծեռք՝ շուտ շուտ ծնկներին խրում: Պայխ են շտապով Յահրագն ու Կոստանդր):

ՀԱՎԻՒ

Հա, հա... Սաղ տաւարը քշեցին, տարան: Ինձ էլ ուշում՝ էին սպանէին... լաւ պրծայ. գնդակը կռանս դիպաւ, այս...

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Գնդակը...
Էսպէս էլ բան կլինի...
Քուրդերն են...
Թուրքերն են...

ՀԱՎԻՒ

Թուրքերն են, թուրքերը:

ՋԱՀԱԶ

Բանի հոգի են:

ՀԱՎԻՒ

Տաս-տասնեհինդ հոգի:

ՋԱՀԱԶ

(Կատաղած) Է՞ս ինչ կնշանակի...

ՄԻ ՔԱՆԻՍԼ

Դէ. ով ինչ զէնք ունի դուրս բերի...
Հասէք... թէ չէ հետքները կկորցնեն...
Շուտ արէք... հա...

(Ոնդնանուր իրարանցումն: Շատերը գնում են դէպի ձախ, մի քանին էլ վազում են զէնքի):

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՈՅՆՔ, ՍԱՐԻԲԵԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ

ՄԱՐԻԲԵԿ

(Բերդանք ձեռքին եւ պատրնտաշը խաչաձեւ կապած կրծքին՝ ներս է վազում): Ի՞նչ կայ, ի՞նչ ա պատահել:

ՄԱՆՈՒԿ

(Նոյնպէս հրացանով) Ի՞նչ ա պատահել:

ԱՄՐԻԲԵԿ

Թուրքերը վրայ տւին:

ՄԻ ՔԱՆԻՍԼ

(Համարեա միաձայն) Մեր նախիքը տարան... Մեր տունն աւիրեցին...

ՄԱՐԿՈՍ

(Դիմիլով միւսներին) Դէ, էլ ինչք ենք կանգնել...

ՋԱՑԵՐԸ

Գնանք, շուտով մենք էլ...

ՄԱՐԻԲԵԿ

Ապասեցէք, սպասեցէք... (Դիմիլով իր հասակալիցներին) Տղերը. մի հինգ-վեց հոգի ինձ հետ էկէք. էլ ուրիշ մարդ պէտք չի. շուտ:

ՋԱՀԱԶ

(Որդուն) Բաս դժւ ինչի ես կանգնել, Կոստանդ:

ԿՈՍՏԱՆԴԻ ԵՒ ՈՒՐԻՑՆԵՐԸ

(Վազելով դէպի իրենց տները. Սարիբէզին) Ես բոպէիս մենք գալիս ենք, դու գնա: (Դնացին):

ՄԱՐԻԲԵԿ

(Եռու է զալիս որ գնայ, ասելով) Մանուկ, հասիր ինձ. շուտ. ճանապարհին ձիաներ կգանենք: (Այդ բոպէին աչքն բնկնում է Լուսիկին, որը առանձնացած իրայիններից, կանգնած է կիսով չափ պատից բարձր, պարտէզի կողմից եւ հպարտութեամբ ու սիրազգիով հետեւում է Սարիբէզին: Ենր երկուսի աշքերը հանդիպում են իրար՝ Լուսիկն աննկատի ամենքից՝ ոգիւրուած խաչակնքում է նրան: Սարիբէզն այդ նկատելով, խորյն գտնում է զիւլացիներին) Զեր տաւարից մի հատն էլ չի կորչի. միամիտ կացէք. խաչը մեզ հետ ա: Մանուկ, թուչենք... (Վազում է դուրս դէպի ձախ):

ՄԱՆՈՒԿ

(Նոյնպէս) Թուչենք:

(Բոլորիքին զնում են նրանց յետեւից դէպի ձախ: Կոստանդը հրացանը ձեռքին տանից դուրս է վազում եւ ծարպիկ թուժիվ պատի վլածքից նախարիմ, մի ակնթարթում անհնատում է ձախ կուլիսներում: Սրանից յետոյ երկու երիտասարդ, նոյնպէս զինւած, վազում են աջ կողմից եւ հապնեալով ձածկում են՝ ձախ կուլիսների մօտ զուալով. „Ճանապարհ“: Կանայքն էլ են գնում նոյն ուղղութեամբ):

ՏԵՍԻԼ ԺԱ

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ ԵՒ ԼՈՒՍԻԿ

(Մարդկանցից մնում է միայն Պասպար ամին):

(Լուսիկը, մինչեւ վարապոյրի լիջնելը, շարունակ նայում է դէպի ձախ):

Հեռուից լաւում է քան դիւրսմի երգը:

ԴԱՍՊԱՐ ԱՄԻ

Էհ... ասում եմ ախր... էս գեռ սկիզբն ա... (Միջոց)՝
Հըմմ... Շատերը գեռ չեն իմացել գլխներիս էկածը... Զան-
գիւղում են ասում... (Գլուխը կափ զցած՝ մօտենում է ձառին,
նստում է նրա թնի մօտ, եւ նրան յինուելով խոր, խիստ խոր եւ
նշանակալից բացականչում է) Օօժֆֆֆ...

ՎԱՐՍՎԱՋՈՅՔ ԱՍՄԱՅ ԽԶՆՈՒՄ Է:

ԶՄԿՋՄ

ՅԵՅՐԱԿԱՆ

ԱՅԱ ԱԿՐՈՅՑ

ԶԱՅԱՅ

ՄԱՅՐԱ ԱՅՐԱ ՔԵՐԵՐԱ

ԶԱՅԱՅ



“ՃԵՅԹԱՆԻ” ԳՈՐԾԵՐԻՑ

ՄԱՍՆ ԱՄԱԶԻՆ:



ԱՆՁԻՆՔ

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ
ՃԱՅԲԱՋ
ԿՈՍՏԱՆԴ, սրա որպին
ԳՎԼՈՒՍ
ՎԱՆԵՍ
ՄԱՐԿՈՍ
ՄԱՆՈՒԿ
1
2
3

ՀԵՐԻՔՆԱԶ, ԶԱՒՐԱԳԻ ԿԻՆԸ
ԼՈՒՄԻԿ, սրանց աղջիկը
ՆԱԶԱՆԻ ՏԱՏ
ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ
ՄԱՄԱԳ, սրա մտերիմ ծառան և թիկնալահը

ՄՈԼԼԱ
ՍԵՑԻԴ
ՀԱՍՏԱ
ՕՐՈՒՅ
ՆԱԶԱՖ
ԱԼԻ

1
2

1
2

1
2

Հայ գիւղականներ երկու սեղի, զինորանի, խուռ-
քեր, խուռ կանայք, աղջկունը եւ 8 տարեկանից
սկսած խուռ երեխաններ, սէյիդներ, դարվիճներ:

ՄԱՅԻՍԻ 30-Ն Է 1905 Թ.

— 80 —

Ա ՁՎԱՅՑ

III

„ՇԵՅԹԱՆԻ“ ԳՈՐԾԵՐԻՑ



Եսարանը ներկայացնում է երկրորդ արարուա-
ծի նոյն գիւղը եւ նոյն տեղը:
Փոքրիկ հրապարակը լցւած է գիւղական-
երով:

ՏԵՍԻԼ Ա

ԴԻՀՂԱԱԱՆՆԵՐ
ՃԱՅԲԱՋ

Տօ ջանում, էս ի՞նչ փորձանք ա է... էս սալդաթների
կոռ ու բեկեառն էլ մի կողմից աւելացաւ: էս ի՞նչ զուլում
էլմա:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Զուլում ասիր, պրծմբ:

ՎԱՆԵՍ

Մելքոննեց արարէն ջարդ ու փշուր արին, կոտրատե-
ցին, ճղճղեցին ու դրին իրանց կերակրի պղնձի տակը, թէ
ինչ ա՝ ցախ չունեն:

ԳՎԼՈՒՍ

Բաս: Դեռ լաւ էր, տանուտէրը դրանից յետոյ ձեռաց
ցախի ճար արաւ, թէ չէ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Գրանք, ինչպէս տեսնում եմ, մեր գլուխը շատ օյիններ
են բերելու:

ԱՄԲՈԽԻՑ

Էլի էկան անօրէնները:

ՎԱՆԵՍ

Դուզ գէսն են գալիս:

ՃԱՅԲԱՋ

Տղէրք, հօ վրաներիդ բան չկմյ:

ԱՄԵՆՔԸ

Զէ, չէ:

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆՔ և ԶԻՆԻՈՐՆԵՐԻ

(Երեսում են ձափ կողմից մի քանի զինուորներ սույնուոր հրացաններով):

ԶԻՆԻՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

(Կոստանդին) Կանգնիբ:

ԿՈՍՏԱՆԴԻ

ՀԸ:

ԶԻՆԻՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

ՉԵՐՔԵՐԴ բարձրացրու:

ԿՈՍՏԱՆԴԻ

(Բարձրացնելով) ՀԸ՛:

ԶԻՆԻՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

(Յօշափում է Կոստանդին ձևորիից սկսած մինչև ստուբը: Ամբոխին): Դժուք ինչպէս: ԶԵՆՔԵՐ անմէր:

ԲՈԼՈՐԸ

(Չորսուր բարձրացնելով) Զէ, չէ, բէ՛ր. էկէր, տեսէր:

(Գինուորներ միանուագ խուզարկում են մի քանիսին):

ԶԻՆԻՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Էաւ. բաւական է: (Ամբոխին) Յըւեցէք, շնոր: Հաւաք-
ելու իրաւունք չկայ:

(Ընդհանուր շարժում: Շատերն սկսում են բաժանուել փողոցները: Երբ զինուորները գնում են, տմբոխն ամեն կողմից կրկին հաւաքում է):

ՏԵՍԻԼ Պ

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ԶԻՆԻՈՐՆԵՐԻ

ԱՄԵՆՔԸ

Ի՞նչ ա... ի՞նչ ա պատահել...

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՒՂԱՑԻՆ

Զիրուխը ջիրէս հանեց:

(Պուղարկուածները իսկոյն շօշափում են և իրենց գրպանները):

ԳԱԼՈՒՍՅ

Ի՞նչ չեն անում, չանում. դեռ կմանքոնցն էլ են կըմ-

ՋԹում:

ԱՄԵՐՈԽԸ

(Վրդոված) է՛... յիտո՞յ...

ՃԱՀՅԱՋ

Ճարներս ինչ: Ի՞նչ կարանք անենք:

ԳԱԼՈՒՍՅ

Ախր սրանց ինչի են զրկել մեր ջանին... մեր ո՞ր մեղ-

քի ճամար ա, ախր, էս էկզէկուցիէն:

ԳԱՆԽԵՄ

Նրա համար, որ Սարիբէզն ու մեր ազերքը գնացին,
մեր նախիրը եղ բերին ու մի հինգ-վեց թուրք էլ սպանեցին:

ՄԱՆՈՒԿ

Քանի անգամ Սարիբէզը կոռաց թուրքերին, որ նու-
խիրը թողնեն ու զնան, քանի անգամ ասեց, որ մենք մար-
գապանութիւն չենք ալում... բայց նրանք զնդակներ էին
թափում մեր վկան:

ԿՈՍՏԱՆԴԻ

Սարիբէզի զնդակներից ոչ մէկն էլ զուր չկորաւ:

ՄԱՆՈՒԿ

Նրանց ամենքի հրացաններն էլ բէրդանկաներ ու մօ-
սինի էին:

ՄԵԿԸ

Էս ժամանակ թողին մեր նախիրն ու հեռացան, երբ
նրանցից հինգ-վեց հոգի սպանեցին:

ԳԱՆԽԵՄ

Դէ էղ ա էլի: Թուրքերն էլ, երեխ, զնացել են զան-
գասաւել, թէ իրանք իրանց ճանապարհով զնալիս, հայերը
կրայ են տեղ նրանց ու ընկերներին էլ սպանուել: Սպան-
ւածներն էլ տեղն ու տեղն ընկած: Ու... էկզէկուցիտ:

ՄԵԿԸ

Իրանք մեզ վրայ են տալիս. նախիրը քշում են. իրանք
էլ գանգատի են գնո՞ւմ:

ՃԱՀՅԱՋ

Սատանան զիտի թէ ինչ են անում: Նախիրն ես ապա-
սում, էկզէկուցիտ:

ԱՄԲՈԽԸ

Լաւ բառ մեր ճամբն ինչ ա լինելու:
ԳԱԼՈՒՍ

Տօ դէ բան չկայ է: էս սալզաթներն ի՞նչ պէտք ա ա-
նեն մեզ: Պատիճ ա, կըաշենք էլի:
ՉԱՅԲԱԶ

Էլի լաւ ա, որ թուրքերը մեր նախիրը չարան:
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հիմբ ինչ էք ասում. էս բանը մեզ պիտի էժան նատի:
ԱՄԲՈԽԸ

Ինչ նատում ա, թող նստի:
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Թուրքերը մեր ջանիցը բաս չեն հանելու:
ՄԱՆՈՒԿ

ԶԵ՞ն կարալ... նրանք մեր զարբը տեսան:
ՎԱՆԻՍ

Խօսք կայ... Դեռ էսքան սալզաթն էլ հլա էստեղ:
ԿԱՍՏԱՆԴՐ

Տօ դէ ի՞նչ պէտք ա անեն է:
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Օ՛հ... էս սալզաթներից խէլքս խմիլի բան չի կտրում:
ՎԱՆԻՍ

Տօ դէ ի՞նչից պէտք ա վախենանք է... Դուք էգ ասէք,
Նախշեանիցն ինչ խարար կայ:
ԳԱԼՈՒՍ

Սպասիր: Մարկոսը Բաշորաշէնից չեկամ:
ՄԻ ՔԱՆԻՍԸ

Էկել ա, էկել:

ՄԵԿԸ

Էս մի սհաթ կլինի, ինչ որ նրան տեսայ:
ՉԱՅԲԱԶ

Այ, նա շատ բաներ կիմանայ:
ԳԱԼՈՒՍ

Ընդ. էս էլ ինքը, այ, գալիս ա: (Ամենքը նայում են դէ-
պի աջ): Տօ մի շուտ արի է:

ՏԵՍԻԼ Պ

ՆՈՅՆՔ, ՄԱՐԿՈՍ ԵՒ ԿԱՆԱՅՔ

ՄԱՐԿՈՍ

(Կուլիսից երեսլով) Գալիս եմ էլի: (Սա խրատ Թթւած է:
Սորան շրջապատում են):

(Հետզհետէ, հաւաքւում են եւ կանայք, Նադանի տատը, Սալ-
բին, Հերիքնազը եւ այլն: Լուսիկը ու հարս երեսում են պատի մօտ):

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Հը. Մարկոս. Ի՞նչ խարար. Երբ ես էկել:
ՄԱՐԿՈՍ

Մի երկու սհաթ չի լինի:
ԳԱԼՈՒՍ

Ի՞նչ ա լուսում Նախշեանից:
ՄԱՐԿՈՍ

Ել ի՞նչ լուի: Ղարախարարից գուլու ի՞նչ էք ուզում:
ԱՄԲՈԽԸ

Ի՞նչ... Ո՞նց... Մի ասա, տեսնենք:
ՄԱՐԿՈՍ

Էրեկ մի մարդ էր էկել Նախշեանից... (Գլուխը բռնելով)
Տէր Ասուած... ինչէր էր ասում... ինչէր էր ասում... ին-
չէր են պատմում Էնտեղի համար... Սիրտ պէտք էր, որ գի-
մանար:

ԳԱԼՈՒՍ

Ասում են թէ թուրքերը սաղ Նախշեանը տակն ու
վրայ՝ են արել: Դրուստ ա:

ՄԱՐԿՈՍ

Գայ քու տունը շէն: Տօ, Նախշեանն ևս ասում. բա-
զեղերը... էլ թազափեղ, էլ Հաջիվար, էլ Զահըի, էլ Ալագի,
էլ Թմբուլ, էլ Նորաշէն, Նազարարաթ, երկու Մազրաները...
Առինջ չեմ գիտում, Ապրակունիս, Մորվան... Մի խօսքով,
սաղ, սաղ... ինչքան հայ գեղեր կան... սաղ կրակ են տուել,
սաղ քարուքանդ արել, սաղ աշխարքը սրի են քաշել, աւի-
րել ու թողել:

ՉԱՅԲԱԶ

Եյ քեզ բանն...

(Բոլորն էլ քարացած մնացած են):
ԳԱԼՈՒՍ

Էդ ա որ սաղ ճամբէքը աւազակներով լցւել ա է...
ՎԱՆԻՍ

Էդ ա սոր սաղ աշխարքից մենք կարւած ենք մնացել է:
ՉԱՅԲԱԶ

(Մարկոսին) Յետա՞յ, յետա՞յ...

ՄԱՐԿՈՍ

Նախշեանի հայերի սաղ գուքանները թալանել ու կրակ
են տուել, տէրերին հէնց մէջներին են էրել...

ԱՄԵՆՔԸ
Վա, վա... Ինչպէս թէ...
Էղ ի՞նչ ես ասում, տօ...

ՄԱՐԿՈՍ
Սաղ բաղամլու գեղի հայերին թուրքացրել են. տէր-
տէրներին էլ նրանց հետ:

ՄԻ ՔԱՆԻՑԸ
Այ քեզ բան...
Այ քեզ անաքանդութիւն...

ՄԱՐԿՈՍ
Էլ վից-գուրենատրը, էլ մեր առաջնորդը, էլ Երևանու-
քաղաքագլուխը... գնացել են Նախշեան:

ՄԻ ՔԱՆԻՑԸ
Բաս յետոյ... Յետոյ ի՞նչ...
ՄԱՐԿՈՍ
Հա. մէկ էլ ասում են թէ՝ Երևանում էլի են թուրքե-
րը հայերին վրայ տուել մի եօթ ութ օր պառաջ...

ԱՄԵՆՔԸ
Վա, էլի...
Էլի...
ՀԱՅԲԱԶ

ԿԱՄԵԴ ի՞նչ են արել:
ՄԱՐԿՈՍ
Երևանի հայերը թուրքերին էն օրն են զցել. որ մին-
չ էսօր, ասում են, գուրքանները փակուել ու մտել են ծա-
կերը, էլ դուրս գալու ճար չունեն:

ՄԻ ՔԱՆԻՑԸ
Այ դոչչաղներ:

ԳԱՅԲԱԶ
Տօ Երևանայ բանն ուրիշ ա... Դու Նախշեանիցն առա-
նախշեանից:

ԳԱԼՈՒԽԸ
Հէնց գլխիցն ասա, գլխիցը Նախշեանում լի՞նչպէս ա-
սկուել կոտորածը:

ՄԱՐԿՈՍ
Ո՞վ ա իմանում: Ասում են վրանից մի քանի օր առաջ
հայերը մի ինդի հաջու են սպանել:

ՋԱՏԵՐԸ
Խեղ ցաւի գայ, խեղ գարդի, հը...

ՄԱՐԿՈՍ
Էն էլ իբր թէ նամակ անելիս: Հէնց վրանից էլ սկուել ա-

ՃԱՅԲԱԶ
Սպասիր. մինչեւ հիմի բաս հայի ձեռքով իսկի թուրք չի
սպանուել:

ՄԱՐԿՈՍ
Գես ասում են, որ սպանւածից բարեկամ մի մօլլա, թէ
սէյիդ, ասել ա թէ հաջուն հայերը չեն սպանել. նրան սպա-
նողը թուրք ա, որին ինքը լաւ ա ճանաչում. բայց լսողն
ով ա: Թուրքերը մատներին փաթաթան են քարել—հայերն
են, որ հայերն են:

ՃԱՅՆԵՐԸ
Վայ դրանց սիրաը հրեղէն սուր մտնի հը...
Աստւած ազատի մեզ թուրքի շառից:

ՄԱՐԿՈՍ
Դրանից յետոյ, հայերը իրանց դուրքան բաղարը սաղ
փակուել են: Նրանք իմացել են, որ թուրքերի միտքը ծուռն
ա, վրայ են տալու... Էս էլ պէտք ա ասեմ, որ հէնց էդ
օրը էստեղ եղած զօրքին քաղաքից դուրս են տարել:

ՃԱՅԲԱԶ
Էդ հօ մոքով են արել տօ:
ՄԱՐԿՈՍ
Բաս ի՞նչ: Լսեցէք մի: Յետոյ խանն ու Երևանից
էկած ուռւ մեծաւորը դուրս են գալիս քաղաքն ու՝ հայերին
զոռում են, որ դուրքան բազարը բաց անեն, իրանք էլ հա-
ւատացնում են հայերին, թէ ոչինչ չի կարող պատահի...
Խանն էլ իր կողմից ասել ա թէ թէ ձեզ մի բան պատահի,
ես եմ պատասխանատու, ասել ա:

ԳԱԼՈՒԽԸ
Բաս էլ ի՞նչպէս ա էդ անաքանդութիւնն էլել:

ՄԱՐԿՈՍ
Դէ հայերն էլ հաւատում են վրանց ու դուրքանները
բաց անում... Զի քաշում կէս սհաթ մի սհաթ, յանկարծ ա-
մեն կողմից նշան են տալիս, թուրքերը վրայ են տալիս
հայերի դուրքան բազարի վրայ, թալան թրաշը զցում,
փոթում ու ամեն բան կրակին տալիս:

ԱՄԲՈԽԸ
(Աղջած ու սարսափած) Վասա... Այ քեզ բան...
ՄԱՐԿՈՍ

Մեր առաջնորդն ու Երևանի քաղաքագլուխը հազիւ
հազ են սպանուելոց ազատել:

ԱՄԲՈԽԸ
(Նոյնպէս և յուսանատ) Փիամամ...

ՄԱՐԿՈՍ
Եղ դեռ քիչ ար. Եղ անօրէններն էկել հասել են մինչեւ
մեր Մարտիրոս գեղը, հա:

ԳԱԼՈՒՍ

(Երկիւղով) Դէ որ էզպէս ա, կամաց կամաց մեղ էլ կը-
հասնեն, էլի:

ԳԱՄՊԱՅԱՐ ԱՄԻ

Զարմանալու բան կլինի, որ մեղ չհասնեն:
ՎԱՆԻՍ

Ել դէս ու դէն գցիլ չկայ... պէտք ա տանուտէրին ա-
սենք, որ մի երկու հարիւր հատ հրացաններ ճարի, թէկուդ
մէկին երկու տայ ու հասցնի մեղ:

ՋԱՏԵՐԸ

Պէտք ա, պէտք ա...
Ել ուրիշ ձար չկայ:

ԿՈՍՏԵՆԴ

Էս... թէ ձեռքս մի այնալու կընկնի, կամ բերդանկայ...
ՄԱՐԿՈՍ

Հըմ... ձեռքներս թող մի գէնք ընկնի...
ՋԱՏԵՐԸ

Տաս հազարի գէմ դուրս կդանք...
Բա որ ասում էինք մեղ գէնք ա հարկաւոր...
Ես օրւայ համար էինք ասում, այ...

ՄԵԿԸ

Բա որ էս սալդաթները գլխներիս տան առնեն:
ՋԱՏԵՐԸ

Ինչի՞ մեր ձեռքերը փլաւ են ուստիւմ. բաս մեր խելքն
ուր ա. չենք կարող էնպէս պահենք, որ սատանէն էլ չգանից
ՄԱՆՈՒԿ

Էնպէս կպահենք:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Սալդաթները հօ մինչև վերջը չեն մնալու էստեղ:

ՄԱՐԿՈՍ

Տղերք, էլ սալդաթից վախենալու ժամանակ չի. ով
ինչ ունի, թաքուն պատրաստի. իսանչալներդ սրեցէք, հրա-
ցաններդ կարգի բերէք... ով գնդակ ունի, բարութ ունի
մէջտեղ բերի:

ՎԱՆԻՍ

Դուք ու ձեր Աստւածը, էլ մի ուշացնէք... ու էնպէս
արէք, որ սալդաթները չտեսնեն հա:

ՆԱԶԱՆԻ ՑԱՏԻ

(Մէջ է դալիս լոցով) Աման ձեղ մատաղ, հսկում արէք...

Ժամ՝ պատարագ արէք, սաղ գեղականներով մատաղ արէք...
Վատ երազ եմ տեսել էս գիշեր, շատ վատ երազ:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Էլի էղ զահրումար երազը:

ՄԻՒՄՆԵՐԸ

Դէ էնա, ոչ ըլնի, տեսնում էք կատարում ա էլի:
Երրորդները

Տատի, դժւ ինչ ես տեսել:

ՆԱԶԱՆԻ ՑԱՏԻ

(Լացով ու ծնկներին խրելով եւ նեարդային շարժումով) Մեր
գեղը ձեռաց պիտի գնայ... մեր գեղը ձեռաց պիտի գնայ...
Մատաղ արէք, հսկում արէք, ձեզ դուրբան, ձեզ մատաղ...

ՎԱՆԻՍ

Դէ մի պատմիր երազդ, տեսնենք է:

ՆԱԶԱՆԻ ՑԱՏԻ

Էս գիշեր երազումս սաղ գեղականներով դուրս էկանք
գեղից դուրս՝ ու մէկ էլ տեսանք, որ հազար հազար թուր-
քեր ու քուրքեր վրայ են տալիս մեզ... Մեր ջանէներն էլ
իրար հտեսից հա կրակում էին նրանց վրայ...

ՄԵԿԸ

(Երա խօսքը կտրելով) Հրացանների ձէնը լսեցիր. տափի:
ՆԱԶԱՆԻ ՑԱՏԻ

Ակաջներս քառանաս, լսեցի, լսեցի...
ՋԱԼՈՒՍ

(Փորհրդաւոր) Բաս էս անգամ շատ վատ բաներ ենք լսե-
լու, կամ տեսնելու. զգոյշ կացէք:

ԳԱՄՊԱՅԱՐ ԱՄԻ

Լաւ երազը չի կատարում. վատը—ամեն անգամ:
ՆԱԶԱՆԻ ՑԱՏԻ

(Իբր յանկարծ յիշերով եւ նեարդային երկիւղով) Հա, հա...
տեսայ սուրբ Մարիամ Աստւածածնին... (Խաչ է անում երե-
սին. կանայք եւ շատերը նոյնպէս): Սուրբ Աստւածածնը, (կրկն
խաչ անելով երեսին. բոլորն էլ նոյնպէս) մեռնեմ ես նրա զօրու-
թիւնին, էսպէս, ձեռքերը բաց, բարձր բռնեց ու մեղ, էսպէս
պահում էք... Մէկ էլ ինչ տեսնենք—նրա ձեռքերն, էսպէս,
թուրքերի գնդակներից ծակծակուել էք ու արինն, էսպէս,
թափում էք... (Իարձնալ լսցով ու ծնկներին խրելով) Դուք ու
ձեր Աստւածը, այ խալիսը,—ժամ գնացէք, աղօթք արէք,
հսկում արէք, պատարագ արէք, մատաղ արէք...

ԲՈԼՈՐԸ

(Վախեցած եւ կաշկանդուած): Պէտք ա, պէտք ա...

ԿՈՍՏԱՆԻ
(Մօտենալով Մանուկին) Մանուկ, դնանք,
ՄԱՆՈՒԿ

ԲՈՒՐ:

ԿՈՍՏԱՆԻ

Էս հարեան գեղը: Ես էնտեղ մէկի մօտ հրկու քերդան-
կայ ևմ տեսել: Գնանք բերենք. մէկն ինձ, միւսը քեղ:

ՄԱՆՈՒԿ

(Ուրախացած) Դրժւստ: Գնանք:

(Գնացին արագ):

ՏԵՇԻԼ Ե

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ԿՈՍՏԱՆԻ ԻՆ ՄԱՆՈՒԿԻ

ՃԱՀԲԱԶ

Մարդար, էստեղ արի:
Երկրորդ գիրզացին

(Մօտենալով) ՀԸ:

ՃԱՀԲԱԶ

Գնա, էս սհաթին մի ոչխար բեր:

ԲՈԼՈՐԸ

Եղը, եղը, ոչխարը որն ա:

ՃԱՀԲԱԶ

Թող եղ լինի: Մի լաւ մատաղի պատրաստութիւն տես:
Տէրտէրին էլ ասա... Զէ, չէ, գու գնա քու բանին: (Երկրորդ
զիւրացին զնաց: Ամրակի միջից մէկին առաջ բաշելով): Դու էլ վտ-
փի, տէրտէրին ասա, որ հէնց էս սհաթին ժամերը տայ...
Գեղականները պէտք ա հաւաքւեն հէնց հիմի աղօթքի. ասա
ժողովուրդն ա ասում. իրիկունն էլ հսկում պէտք ա անի,
էկուց էլ՝ պատարագ: (Երա յիտելից) Շնուտ: (Եա իսկոյն զնաց):

ԲՈԼՈՐԸ

Զէ, պէտք ա, պէտք ա: Յեսոյ սազ գեղականները ծախ-
ուը կբաշեն:

ՎԱՆԻՑ

Ի հարկէ, ի հարկէ, որ սազ գեղականները պէտք ա
քաշեն:

ԳԱԼՈՒԾ

Այ, ժամի բակում կիսուանք:

ՄԱՐԿՈՍ

Այ, խալխը... (իբր նոր յիշելով) սպասեցէք... Բաշնորա-
շէնից որ զալիս էր, տեսայ էն հեռում ինչ որ սիին էր
տալիս, էսպէս երգար տեղ էր բանել... մի էնպէս էլ թող էր
բարձրացել որ... Կոտորած սարքովները չինէին...

ԲՈԼՈՐԸ

(Թուրները կպած) Վայ քու տունը շէն...
Ի՞նչ ես ասում, ած...
Թուրքիր էին:

ՄԱՐԿՈՍ

Աստւածը վկայ... Ես կարծեցի թէ ոչխարի, կամ տա-
ւարի սուրու պէտք ա լինէր: Էլ բանի տեղ չդրեցի:

ՄԻ ՔԱՆԻՄԸ

(Թիմելացած) Թուրքներս կպցրիր, ած...
Աստւած քու թուրքը ոչ կպցնի, հը...

Եկեղեցոյ զանգակթերի հնչիւններ:
(Ամենքն էլ ջերմուանդութեամբ եւ երկիւզածութեամբ խաչ են
անում երեսներին):

ԳԱՍՊԱՐ ԸՄԻ

Թէ, այ խալխը, ասաջ ընկէք. մեծով, փոքրով—ամեն-
քով էլ ժամ գնանք, աղօթք անենք... Թող Աստւած փրկի
մէղ ամեն փորձանքից: Գնանք:

ԲՈԼՈՐԸ

(Արկին երեսները խաչ անելով) Գնանք, գնանք...

(Ըսդհանուր շարժովմ: Այս միջացին խիստ հաւարի ձայն է գալիս:
Բոլորը սաւչում են իրենց տեղերում: Ներս է վակում սարսափած երկորդ
գիւղացին):

ՏԵՇԻԼ Ե

ՆՈՅՆՔ և ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԶԱՑԻ

ԲՈԼՈՐԸ

(Սրտագատառ և հիւալով) Հարմաճ... մեր տունն աւիր-
ւեց... փախէք...

ԲՈԼՈՐԸ

(Ահապատառ) Ի՞նչ ա, տօ, ի՞նչ ա պատահել:

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԶԱՑԻ

Թուրքերը վրայ են տալիս մեր գեղին... Մեր հանդա-
տորներին սպանուեցին... Հարմաճ... Գիւններիդ ճարը տե-
նէք...

(Ընդհանուր իրարանցումն: Լաց ու կոծք, երկիւղն ու սարսա-
փի տիրում են ամենքին):

ՄԻ ՔԱՆԻՄԸ

Ո՞նց... ո՞նց... ի՞նչ...

Բու տունը շէն, ի՞նչ ես ասում:

Շատ ե՞ն, տօ, շատ ե՞ն...

(Երկրորդ զիւրացուն կանգնեցնելով) Տօ մի սպասիր է:

Մի կարգին ասա տեսնենք է...

*) Այս և հիւեալ տեսները շատ տրագ են կատարում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՒՂԱՅԻ

(Սարսափից հաղիւ կանգնելով) Հարիւր հազար հոգի. հարիւր հազար... Փախէք—ով կարայ՝ փախչի... (Խնքը նոյնպէս հաւար տալով փախում է դէպի աջ) Փախէք... փախէք...
Հատ հետուից հաղիւ լուռում են մի քանի երացանձնեւը

ՄԵԿԸ

(Լեղապատուան ներս փաղելով ծափի կողմից) Այ խալխը, ձեր զլիսի ճարմն արէք... Ով կարայ, թող փախչի... (Խնքը փախում է դէպի աջ) Շուտ արէք...

ՏԵՍԻԼ Է

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ ԻՒՐ ՄԱՐԴԻԿՆԵՐՈՎ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Արագ ներս փալով ծափի կողմից) Սպասեցէք, մի փախէք, մի վախենաք... ես եմ, ես... ինձ հաւատացէք... ետ էկէք... էստեղ էկէք... Ոչինչ չի լինի... Գլխովս եմ երգւում... Տեսք, ինչ եմ ասում... մի էստեղ լսեցէք...

(Կամաց կամաց փախածներից շատերը յիտ են դալիս սարսափի եւ անորոշ զրութեան մէջ, զուտն կանգնն, թէ փախչեն; Աներեւակայելի յուզմունք է տիրում):

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Հէսց որ իմացայ թէ ձեր գեղին վրայ են տալիս, իսկոյն ձիս նստեցի ու հասայ, ամբոխին կանգնեցրեցի. նրանք հիմի սպասում են ինձ: Դէ, լսեցէք ինչ եմ ասում:

ԱՄԲՈԽԸ

Ասա, բէկ, ասա...

Ի՞նչ ես հրամայում, հրամայիր...

Ազատիր մեղ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼ ԲԵԿ

Ես ձեր հացը շատ եմ կերել: Մենք ամենքովս էլ իրար հաց կերել ենք: Են հացը ինձ քուացնի, թէ ես ձեր վասն եմ ուզում... Շուտ արէք. շուտ մի տասը հազար մանէթ փող հասցրէք. հաւաքեցէք իրար մէջ, շուտ, որ տանեմ սեւցնեմ իրանց ու ձեզ կոտորածից պրծացնեմ... Շուտ արէք, թէ չէ ամեն բան կորած է:

ՊԱՆԵՍ

(Արագ) Այ քու տունն Աստւած շինի, բէկ, էս զրութեանը մրտեղից, ախր ճարենք... հիմի սաղ գեղականներին ինչպէս հաւաքենք...

ՄԻՒՄՆԵՐԸ

Եղքան վողը մրտեղից...
Ել ինչպէս գեղականներին հաւաքենք...
Առ ու վախին բնկաւ, ախր...
Դրա համար, ինքդ գիտես, որ ժամանակ աղէտք...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Եդ արդէն ձեր բանն ա: Շուտ արէք, անմիտներ, ազատեցէք ձեզ ու ձեր ունեցած չունեցածը: Տաս-տասնուհինդ հազար մարդ ա հաւաքւել, ախր: Նրանց հետ հանաք անիլ չի լինի:

ՃԱՅԲԱՋ

Ես իմ ունեցած երկու հարիւր ութանառուն եօթ մանէթն եմ տալիս: Ով ինչ ունի բերի, շուտ, ժամանակ չկայ... (Խնաց):

ՄԱՐԿՈՍ

Դուզ մի հարիւր էլ ես եմ բերում:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Սպասեցէք, սպասեցէք. էպէտով բան չի դառնայ: ԳԱԼՈՒՄՑ

Մուրթուզալի բէկ, զլիսիդ մեռնենք... Զեռաց մի հազար մանէթ տար տուր իրանց, թող վրայ չտան. մինչև իրի կուն մի չորս հազար մանէթ էլ՝ ինչպէս որ էլ մենի՝ կհաւաքենք...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Դէ լաւ, լաւ... Մի կերպ բանը գլուխ կբերեմ: Դէ, թէ կուզ հազարը տեսցէք:

ՄԻ ՔԱՆԻՄԸ

Աստւած քեզ կեանք տայ...

Աստւած քու բանն յաջողիւ...

Աստւած քեզ մեր զլիսիցն անպակաս անի...

(Գիւղացիները մէկը միւսի յետելից, ով ինքան կարող է, փողիր են բերում եւ տալիս Մուրթուզալի բէկին):

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Դէ, շուտ արէք է... Աստւած վկայ, նրանք չեն սպասիլ ու ինձ էլ էն ժամանակ չեն լսիլ: Էնպէս արէք, որ նրանք զեղին չհասնեն: (Համարելով փողիրը) Ամենը 690 մանէթ ա: Շուտով մնացածը տւէք, թէ չէ՝ էլ ես պատասխանառու չեմ:

(Գիւղացիները հետալով դարձեալ փողիր են բերում եւ տալիս նրան):

ՄԵԿԸ

Ազա ջան, իմ ունեցած չունեցածն էլ էս ա, իրեք մանէթ հինգ շահի... էս էլ առ. Քնչ արած...

ՄՈՒՐԹՈՒՉԱԼԻ ԲԵԿ
 (Առանալով) Հէ, բէ, քոստո... երեք մանէթ հինգ շահով
 բան չի դառնայ: (Համարելով նոր սացածները) իս էլ 250.—
 940 էլաւ: Վաթուն մանէթը բերէք. շուտ է: (Պիտօ) Ի՞նչ է.
 հանար էք անմեմ... Դեռ շատ պէտք է քաշ տաք ի՞նձ...
 (Դրամ բերողների ծայրը կտրում է: Ամենըն էլ սրտատրոփ
 եւ սպրոնած իրար երես են նայում:
 Երկու երեք հոգի էլ բերում են 60 մանէթը):

ՋԱՅՐԱԳ
 (Առնելով նրանցից եւ տալով Մուրթուղալի բէկին) Այ, բէզ,
 էս էլ քու 60 մանէթը.—Ռւզիզ հազար:
ՄՈՒՐԹՈՒՉԱԼԻ ԲԵԿ
 (Դրամները դրանն ածելով, իւր տղիրանց) Գնանք: (Ամբու-
 խին) Դէ, որ էդպէս է, հիմայ միամիտ եղէք. ձեր բանին կա-
 ցէք: Հինգ հազարը լրացրէք համ, որ կոպէկ պակաս չինի:
 Ինչքան շուտ ճարէք՝ ձեզ համար լաւ: Ինչքան շուտ բերէք,
 էնքան էլ շուտ նրանց համապարհ կդնեմ, ձեր հոգին կա-
 զատեմ:

ԲՈՂՈՔԸ
 Աստած քեզ հաստատ պահի...
 Աստած քու մինը հազար անի...
 Աստած քեզ ումբը ու արե տայ...
 Աստած քեզ մեր զլիիցն անպակաս անի...

ՄՈՒՐԹՈՒՉԱԼԻ ԲԵԿ
 Դէ, մնացածը ձեր բանն ա: Հա, էլ փախչելու մասին
 չմտածէք: Որ գեղին էլ վրայ տան՝ էլի մի վախեցէք. իսկոյն
 ես նրանց առաջը կառնեմ: (Խրայիններին) Տղեք, զնանք
 շուտ համենք նրանց:

(Շուակով դնում են):

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆ ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐԸ

ՋԱՅՐԱԳ

Դէ, այ խալիս, էս պատիժը մի կերպ զլիներիցս հե-
 ռացրինք: Գնացէք հիմի գեղականներին կանչեցէք: Ռւզար-
 կեցէք նրանց ետևիցն էլ որոնք որ փախել են սարերը: Տանու-
 աէրին էլ: Մի ձեռաց հաւաքւենք, տեսնենք ինչ ենք անում:

ՄԱՐԿՈՍ

Բաս մւը ա էսպէս խառը ժամանակ մեր տանուտէրն
 է. ինչի՞ չե երեռմ... էլ ո՞ր օրւայ համար ա:

ՎԱՆԵՑ

Դէ նա էլ սալղաթներովն ա ընկած:

ՋԱՅՐԱԳ
 Գնացէք նրա ետևից: էլ ի՞նչ էք կանգնել: (Մէկին) Այ,
 չէնց զու վազիր, ի՞նչ ես բերանդ բաց արել ու կանգնել:
 (Նա զնաց: Երա յետելից) Շուտ հա:

ՄԱՐԿՈՍ

(Մէկի օճիքից բռնելով) Բաս դու ինչ ես իշխ նման ականջ-
 ներդ կախ արել. զու էլ վազզի, (միւսն) զու էլ... (երրորդին)
 զու էլ... շուտ վազնեցէք ու բոլոր գեղականներին հաւաքե-
 ցէք էտեղդ: (Նրանք զնացին աչ եւ ծախ): Շուտ, հա:

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

(Յուսահատ) Այ խալիս, ես էնպէս եմ իմանում, որ ոչ
 գեղականները մի բան կշինեն, ոչ էլ ձեր տանուտէրը: Պա-
 տիճքը մեր զլիին կանգնած ա, կանգնած... Երկինքն էլ ա
 մեր զլիին խսով գալու... Այ, տեսնում էք (ցոյց տպով նորի-
 զնին կողմը) ամպերը... Տնաքանդութիւնը մեր զլիին իրար
 ետեղից ա գալու: Աչքներդ բաց արէք:

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Նոյելով հորիզոնին) Պահ, էս անգամ մեր տունն աւիրւաւ:
 Հանդ ու հանդաստանը վեր կառնի...:

(Գիւղականները նայում են նորիզոնին երկիւղով եւ իբրեւ թշտ-
 ռութեան եւ անմարտեան նշան, որը զլուխն է շարծում, որը ծըն-
 կանն է խփում եւ որը սղօթք է մրնչում):

ՎԱՆԵՑ

Շատ վաս կարկուտի ամպեր են... Վայ մեր օրին...

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

Հիմի ես էդ կարկախն էլ եմ շնորհակալ... Ես զնդակի
 կարկուցն եմ վախում, զնդակի կարկախ:

ՄԻ ԵՐԿՈՒՄԸ

Ինչ վաս բերան ունես, ամի:

ԳԱՄՊԱՐ ԱՄԻ

Ինչ անեմ, որդիք, սիրաս ա վկայում... իմ էս սիպ-
 ակ մազերիս հաւատացէք:

ՄԱՐԿՈՍ

Տօ գէ, ամպեր են, կգան էլ, կերթան էլ: Մէկիս տունը
 կքանդւի, մէկինս էլ կպրծնի: Դուք էս ցաւի նարն արէք:
 Էս օր, հէնց էս սհաթին, չորս հազարի նարն արէք, չորս
 հազարի:—Այ որտեղ ա պատիժքը:

ՎԱՆԵՑ

(Յուսակտուր) Ո՞րտեղից պէտք ա ճարենք...

ՋԱՅՐԱԳ

Ի՞նչպէս թէ որտեղից... Հէնց հազարը, կիսդդէնք Ազի-
 զից կառնենք:

ԴԱԼՈՒՄԾ

Ի հարկ է: Նա էր ասում թէ մեզ դէնքեր պէտք չեն:
Երբթռըդլ

Թէ թող հիմի ամնքն երկարի ու փողերը համբարի:

ԶԱՀԲԱՋ

(Գնալով) Ես էս բողեին գալիս եմ:

ԶԱՏԵՐԸ

Ուր ես գնում, ուր... առ:

ԶԱՀԲԱՋ

Ես ա գալիս եմ: Ազիզի ամնքիցը պէտք ա բոնեմ ու
քաշ տամ բերեմ: (Գնաց):

Ճառ հեռուից հաղիւ լսելի որոսմանի:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Որոտմանքի ազդեցութեան տակ): Այ խալիս, սիրաս շատ
վատ շուռ էկաւ... կասես էստեղ (ցոյց տալով իւր կուրծքը) մի
բան կորւեց... Սիրաս ասում ա, որ Աստւածային ու մարդ-
կային պատիմները վրայ են գալիս մեզ: Սիրաս վկայում ա,
որ էն անհաւատ Մուրթուզալի բէկը համ փողներս տարաւ,
համ էլ մեզ քնացրեց ու մի լաւ էլ մեզ վրայ ծիծադեց...

ԶԱՏԵՐԸ

Ի՞նչպէս թէ...

Նա էղպէս բան չի անի, տօ...

Նա մեր հացով երգում կերաւ...

Նա իր գլխովն երգում կերաւ ախր...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Երդուով եւ անելի հաւատացած) Աստւած վկայ ա, նա
մեզ խարեց... Աստծու մի անունը վկայ, նս մեր գլխի տաշ-
կը կակող բարձ գրեց, որ մի անգամից ամինքիս էլ կոտո-
րել տայ... (Անելի համոզւած): Այ խալիս, այ բալեքս, ձեր
զլիսի ճարը տեսէք: Ով ինչ զէնք ունի՝ վերասնի ու փախչի
մեր էս սարի գոշը: Նոր էլ մեր գեղը չենք կարող պահել:
(Անելի սարսափով) Կնանիքանցդ ու երեխիքանցդ փախցրէք,
գուք ու ձեր Աստւածը:

ՄԻ ՔԱՆԻՄԸ

Տօ ինչ ես ասում, ամի...

Էղպէս էլ աչքակապութիւն կլինի...

Էղպէս բան կլինի...

Բաս էլ նրա երեսը մեր երեսին գիտչելու լի:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Անելի գողակով եւ նեարդային ցնցումներով) Աման, այ խալ-
իսը, ժամանակը ձեռքից մի փախցրէք... Ամեն մի բողէն

թանգ ա... Մեր ջահէներն ափսոս են... (Ճարր կորած) Ընը...
(շուռ է գալիս փախչելու) Էս ես... հէնց առաջինը ես եմ փախ-
չում... (Գոռալով եւ փախչելով դէպի աշ) Փախէք... փախէք...

ՏԵՍԻԼ Թ

Զախ կողմից լսում է հարայ-եռց. մի ինչ որ անբնական բան
է կատառաւմ այն կողմերում:

ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Զախ կողմից ներս վաղելով եւ անարեկւած՝ բիմի մրայից
փախչելով դէպի աշ ու զոռալով) Վրայ տւին, վրայ տւին... սպա-
նուեցին... փոթոսեցին... փախէք... փախէք...

Զախ կողմից երացանեների ձայներ են լսում:

Բեմի վրայ առ ու փախ է: Բոլորն էլ սրապատռ փախում են աջ
«Հարայ, հաւար... փախէք» զոռալով:

Զախ կողմից հետզհետէ լսում են աւելի պարզ բաւրենի ձայներ:
«Տեսէք... Խըբէցէք...»

Նսրանոր գիւղականներ, նոյնակո, սրտապատռ, բայց լուս փախում
են բեմի վրայով աջ կողմը—մի մի կամ երկու երկու և կամ մի քանի հո-
գով իրար յետից, իբր կամենալով ազտաել միայն իրենց գուխները:
Նրանց մէջ կան և կանայք, և երեխաներ:

ՏԵՍԻԼ Թ

ԹՈՒՐՔԵՐ

(Միանգամայն զագոնացած եւ բաց դաշոյններով) Խփեցէք...
Տէցէք... Փոթեցէք... Ոչ մէկն միք խնայիր... (Անցնում են):

Երկում է մարդկանց փախաւաս նաև յետել փողցում: Թուրքեր-
ից մի երկուսը բաց գաշոյններով, որը փողցի գոնից և որը փլածքից
մանում են զանազան տառներում: Լուսում է ինչպէս կոռաւասում, ջարում
են նրանց տան գրները: Բաց զաշայններով և զազանային դէմքերով զնտ-
գնեանէ երկում են նորանոր թուրքեր, որոնք հարւածելով վայր են զցում
ամեն մի պատահած փախչող զիւղականի և անցնում են դէպի աշ: Նոյնն
Փոխարքային և Կաթոլիկոսին:

Միրջը իիշութիֆ

Հա, հա—իսկոյն: (Գրում է):

ՃՈՒՅԻՒԹԻՐ ԱՂԱ

(Չորրորդ) «Շուշի». Ծհը՝, տեսնենք: «Խաչէն գիւղը պատ-
րաստում էր վրայ տալ մեր թուրք գիւղերին և մենք հիմ-
նայատակ արինք այն. խոկ հիմայ միւս հայ գիւղերն են նա-
խիրներս քշում և աշխատում են մեզ զուրս քաշել: Համբե-
րութիւնից զուրս գալով թուրքերը վրայ տուեցին և մի քա-
նի հայ գիւղեր էլ քարուքանդ արեցին: Մանրամասնութիւն-
ները՝ վաղը. Իրզա»: Աֆֆարիմ. աֆֆարիմ. ամեն ինչ կա-
տարեալ է. վարպետութեամբ էլ գրել է: (Հինգրորդ) «Թիփ-
լիկ. Բորչալում մուսուլմանների մէջ նկատում է խիստ
անհանգիստ տրամադրութիւն. սաստիկ վախենում են հայե-
րից. Օրուջ»: Ընդ. բրավօ, Բօրչալուն էլ:

Միրջը իիշութիֆ

Այ, թէ յաջողուի մեր ծրագիրը—Թիփլիկին էլ վրայ տան
հա: Այ բան կլինէր...

ՃՈՒՅԻՒԹԻՐ ԱՂԱ

Միթէ կասկածում ես: Գործը շատ հիմնաւոր է գրած.
միամիտ եղիր: (Վեցերորդ) «Դէրբէնդ. մեծ պատրաստութիւն
է տեսնում հայերի մէջ. մտադիր են յանկարծակիր բերել
մեզ և ամենիս կոտորել. կաշխատենք դէմն առնել. թէն սար-
սափի մէջ ենք. Ալի»:

Միրջը իիշութիֆ

• (Ծիծաղ) Վարպետութեամբ է գրել. զոչչաղ:
ՃՈՒՅԻՒԹԻՐ ԱՂԱ

(Եօթերորդ) «Զուլֆի. Պարսկաստանից բազմաթիւ հայեր
են երկացել. բոլորն էլ լաւ զինւած և թուրքերի հագուս-
տով»: (Ծիծաղ): Էս մէկը շատ լաւ էր... «և պիտի Արագն
անցնեն ու զնան գէպի Ղարաբաղ հայերին օգնութեան.
Զուլֆիկար»: Ա.ֆֆարիմ, (ծիծաղ) աֆֆարիմ:

Միրջը իիշութիֆ

Երկելի երգիծարան է երկում:

ՃՈՒՅԻՒԹԻՐ ԱՂԱ

Այ, վարպետութիւն: Թողլ հայերն այսպիսի գոկումնու-
ներից օգուտ քաղեն: Մարհաբբա: (Վեր է թոջում տեսլից և
խիստ ոգեւորւած ու ձեռքիրը տրսելով ման է դալիս):

ՏԵՍԻԼ ԺԵԲ

ԹԱՂԻՆ ԲԵՐՈՒՄ Է ՄԻ ՆՈՐ ՀԵՄՄՈՒԲԻԲ

ՃՈՒՅԻՒԹԻՐ ԱՂԱ

(Խալոյն խիելով նեռազիրը): «Շուշի»... Ծհը, տեսնենք...
«Տեղի ունեցաւ հաշտութիւն. մեր մարզիկը կոտորւեցին»...
(Գարմացած) Ինչպէս թէ... (Նայում է ստորագրութեան) Ո՞վ է
զրում այս... (Ուրախ) Հա, Քեարիմն է, տեսնենք:

Միրջը իիշութիֆ

Նա շատ վարպետն է:

ՃՈՒՅԻՒԹԻՐ ԱՂԱ

(Կարդալով) «Մեր աները այրւեցին, թալանւեցին. մենք
հազիւ կարողացանք մի չորս հարիւր հայի տուն այրել...
(Երկու էլ ծիծաղում են ուրախացած) վնասները ահագին են.
զօրքը խուզարկում է. (ծիծաղ) զինաթափ են անում. զիմե-
ցէք համեստնեկին. Քեարիմ»: Մարտզէց: (Վերջապնելուց յևոյ
մի երկու անգամ ման է զալիս ինքնազնութեամբ եւ ապա խելոյն
մօտնում է սելանին): Հա, հիմա հարկաւոր է մի լաւ հեռագիր
կազմել թուսական հեռագրական գործակալութեան համար:
(Գրում է) «Հայերն ասպատակում են: Եւլափից մինչև Շուշի
երթեկութիւնը միանգամայն կարւած է աներևակայելի կո-
ղոպատումների և սպանութիւնների պատճառով: Բազարում սրա-
ծութիւն և հրդեն: Թուրքերը ինդրում են հաշտութիւն. մերծ-
ւած է: Շուտափոյթ օգնութեան մեծ կարիք կայ»: Հա, Միր-
ջը իւսուփ, այս մի նեղութիւն կրիր, տար տուր արտագրեն
մաքուր և խոկոյն ուղարկիր հեռագրատուն: (Միրզա Խւալիքը
շտապով զնում է: Նրա յևուից) Շէյխի հեռագիրը չմոռանաս:
(Մատհալով նեռախօսին. սրգնալ): Քաղաքավութիւն Ռեպրազումն
է: Շուրքիւր աղա: Դէ, շուտով ինդրեցէք տէլէֆօնին մօտե-

նայ... (Սպասում է, սիզնալ): Դու ես... Դէ լսիր: Վերին աստիւ-
ճանի հետաքրքիր տեղեկութիւններ: Մեր գործերն անսպա-
սելի յաջող են: Հը... Հա: Դարս, Ախալցիա, Բորչալու
սկսում են եռալ: Շուշիում և գաւառներում—սպասածից վեր
է: Դու իսկոյն մի հետազիր պատրաստիր փոխարքայի անու-
նով, ամենամութ ներկերով նկարազրիր մեր իրը անելանելի
գրութիւնը և շուտափոյթ պաշտպանութիւն պահանջիր: Գրիք
—մուսուլմանները ձեռաց զնացին: Հը... Գամմ միստին գրենք:
Լաւ: Հիմա գալիս եմ: (Գարով առաջ եւ ուրախ): Այս էլ այս-
պէս: Հրաշալիք: (Մորերով զբաղւած): Եւ այդպէս... սկսում է...
Ամենայն տեղ, ամենայն ինչ կատարեալ է... Պատկերն ան-
նկարազրելիք: (Գիւական ծիծաղ): Դժոխք գարձրինք նախիջե-
ւանն ու նրա գիւղերը... գժոխք գարձրինք ամրող Շարուրն
ու Գարազեազը և շատ ու շատ տեղեր... Մուխի և ծուխի
մէջ ըիւրաւոր լեզուածի բոցերով պլազմում է այժմս Շուշին...
Աւերակ են դանում քաղաքներն ու գաւառները... և շու-
տով, շատ շուտով նորից գժոխք պիտի գանայ և Բագուն...
Բայց մի մյնպիսի գժոխք՝ կը աւ և աւերածութիւն, կողո-
պուտ և սրածութիւն,—որ ոչ լսւած լինի և ոչ էլ տեսնւած:
Նոյն իսկ պատմութեան մէջ չակնարկուած մի գժոխք...
Դժոխք, որի առաջ պիտի սոսկայ, սասանի ամրող մարդ-
կութիւնը. գժոխք, որի մասին պիտի չկարողանայ ձեակեր-
պել ամենալայն երեակայութիւնը... (Գիւական ուրախութեամբ)
Ամրող անգրկովկասը բռնվում է, ճոնչում է... հրդեհը
հետպհետէ բարձրանում է, բարձրանում է և պիտի կլանի
ամրող երկիրը, ամրող երկինքը, ամրող տիեզերքը... Այս.
այս ծովը շարժում է, փոթորկում է, ուռչում-բարձրանում
է իր փրփրագէզ վիթխարի ալիքներով և շուտով մի որոսն-
դոստ խուժմունքով պիտի չեղեղի ամեն տեղ, իր շուրջը...
կլանելով ամեն ինչ իր ճանապարհին, իրքն մի զոհի, մի կա-
տաղի մոլեզնութեամբ... Եւ ահա... այս բոլորից յետոյ պի-
տի միայ մի զբախտանման երկիր, որի սարերի կենդանա-
բար բարձունքներին իսլամը կկանգնեցնի իր յաղթական
գրօշակը ամուսը, ամուսը, անխորստակելիք... Հըմ... Երմոլովն
ասել է հպատակուիր, Կովկաս, գալիս է Երմոլովը... իսկ եռ
հիմայ կասեմ՝ հպատակուիր, Կովկաս, կանգնում է հսլամը:

Ի Ն Տ Է Ր Վ Կ Ի Ւ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ԵՐԵՎԱՆԻ

Հայոց առաջնորդության մասին պատճենական հայոց առաջնորդության մասին



Եսարանը ներկոյացնում է հայերի ինքնապատվանութեան կազմակերպութեան կենսական գործութիւնը:

Մեծ բնիքարձակ սենեակ Երկրորդ յարկում, վայելուց կահաւուրւած: Եթեք սեղան,

Ազ եւ ձախ՝ դոներ։ Խօրհում՝ լուսամուտներ, ոռոնցից երեսով են փողոցը եւ հանդեպի սները։

SUPPLY

Միքայել և Սարոհիկը

(Միաբանութեան և Սարտուկեան նախած իրենց սեղանների առաջ ստորագրում են Թղթեր, կարդում են գրագրութիւններ և ստացած հնագրները: Միացոյ):

ԱՐԵՎԻԿԱՆ

Հըմ. տեսնալում ես, Միքայելան, այս թուրքերի արածը:
Արքանքիւն

(Հարցական նայում է նրա վրայ):

ՄԱՐԶԻԳԵԱՆ

Այս հեռագրի մասին է խօսքս, որ ստացւեց Բագրից Հայոցու անունով։ Նեղ տեղն ընկան թէ չէ—իսկոյն հաշտութիւն։

ՄԻՐԱԳԵԱՆ

Խնդրել հաշտութիւն, կնշանակէ՝ գիտակցիւ պարտութեան:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Զէ, հիմայ էլ գեռ չփակցեն։ Այն դիմագրութիւնները, որ մերոնք ցոյց տվին թէ Շուշում, թէ Բագուսմ և թէ Երևանում, այն կուփ դիբեկը, որ շարունակ խլում են մերնք թարքերից, այն կոսորածն ու աւելմունքը, այն շանթ

ՀԱՅՈՒԹԻ
ՄԻՒԱՐԵԱՆ
ՄԱՐՈՒԴԵԱՆ
ԼԻՆՏՈՆ
ԱՐՄԵՆԵԱՆ
ՀՄԱՅՆԵԿ
ԶԻՆԻՈՐ

ପ୍ରକାଶନ

Digitized by srujanika@gmail.com

Անցեմբերի սկզբանը. 1905 թ.

፩፻፲፭



ու կայծակները, որ մերոնք տեղում են նրանց զլիխն՝ նրանց
արածի հանդէպ. և, վերջապէս, այն եռապատիկ ու քառապա-
տիկ աւելի վնասները, որ մերոնք հասցրին նրանց, թէ տնտե-
սականապէս և թէ մարդկային զոհերով—այդ բոլորը զիւրին
չէր և բաւականին ապացոյցներ են, որ թուրքերը պէտք է
ընկճէին:

ՄԻՐԱՔԵԱՆ

Ժամանակաւորապէս՝ այս: Այդ պատճառով էլ հաշտու-
թիւն են խնդրում:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Բայց միթէ այլպիսի հաշտութեանց վրայ պիտի յոյս
գնել և այսուհետեւ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Երբէք: Փորձերը միշտ հակառակն են ցոյց տալիս: Շու-
շիում հէսնց այս օրերս երկու անգամ կոտորած սկսւեց և եր-
կու անգամ էլ հաշտութիւն կնքեց: Իսկ հետեանըը: Հետե-
անըն այն եղաւ, որ թուրքերն այնուամենայնիւ զինւած
ոյժերով բռնեցին Եւլափից մինչև Աղդամ տարածութիւնը և
մորթուսեցին ու մորթուսում են երթեւելող հայ արանց, կա-
նանց և երեխաներին:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Իսկ եթէ մեզ յաջողուի նոյնն անել թուրք ճանապար-
հուրդների հետ՝ Ասկեաբեանի տարածութիւնը բռնելով՝ Աղ-
դամից մինչև Շուշի: Այն ժամանակ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Այն ժամանակ գարձեալ առաջ կդան, ինչողէս և ամեն
անգամ, շողոքորթութիւն, քծնութիւն, «Շէյթանի գործ» և
հաշտութեան խնդիրներ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Իսկ այսուհետեւ կրկին նոյն խաղը:

ՄԻՐԱՔԵԱՆ

Անշուշտ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Աւելի քան տարօրինակ է, որ չեն կարողանում հաշու-
առնել իրենց սյժերը: Ի՞նչպէս չեն հասկանում, որ հայերից
օգուտ չեն կարող տանել և որ իրենք քառապատիկ աւելի
են տուժում:

ՄԻՐԱՔԵԱՆ

Խաժամուժ ամրոխի և զագանաբարոյ խոժանի յան-
կանիչն է այդ: Վրապ յարձակւող զագանին, որքան հարւա-
ծես, նաև, փախչելու փոխարէն, աւելի կատաղաբար կ'յար-
ձակւի վրաղ: Բայց այդ չէ խնդիրը: Հետաքրքիրն այն է,
թէ մինչև Երբ մենք պիտի խաղանք այդ «հաշտութիւն»
անւանւած խաղը, այդ տրագիկօմեդիան:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Վ.րդոված) Զգիտեմ: Այդ պիտի հարցնել Հայոցուց:
Միրաքեան

(Եղինակէս) Եւ կ'հարցնեմ:

ՏԵՇԱԽԱՆ Բ

ՆՈՅՆՔ եւ ՀԱՅՈՒՂԻ

ՀԱՅՈՒՂԻ

(Գալով ձախից բարեւում է երկուն և մտերմաբար): Առկեա-
րիանի անցքը մասին զեռ տեղեկութիւն չկայ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Եւ ոչ մի:

ՀԱՅՈՒՂԻ

Օհ, միթէ մինչև հիմայ մերոնք չկարողացան բռնել
այդ անցքը: Դա խիստ անհրաժեշտ է: Կրկնեցէք հեռագրով
այդ պահանջը: Ուրիշ ինչ կայ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Ահա նոր աեղեկութիւն: Տաճատից: Այս չորրորդ անձն
է, որ կրկնում է Բորչալուի թուրքերի մասդրութիւնը:

ՀԱՅՈՒՂԻ

Ճարձակւել Թիֆլիսի վրայ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Այս:

ՀԱՅՈՒՂԻ

(Մտածմոնքով) Տարօրինակ է...

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Զի կարելի ուշադրութիւն չգարձնել:

ՀԱՅՈՒՂԻ

(Եղինակէս) Այս...

ՄԻՐԱՔԵԱՆ

Մինք պէտք է ծրագիր կազմենք և այդ յարձակման
դէմ: Կարող ենք յանկարծակիլի զալ:

ՀԱՅՈՒՂԻ

Կազմեցէք ուրեմն և ինձ ցոյց աւելի: Իսկ ձեզանից ով-
ունի այս անգամ նոր ծրագիր առաջարկելու ինքնապաշտ-
ապանութեան համար:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Ես ունեմ:

ՀԱՅՈՒՂԻ

Շատ լաւ: Մէծ է:

ՏԵՍԻԼ Պ
ՆՈՅՆՔ և ԱՐՄԵՆԻԱՆ

ԱՐՄԵՆԻԱՆ

(Գոյիս է աջ զննից): Պէտք է յայտնեմ ձեզ, որ զէնքերի ապառիկները չեն ուղարկում գավառներից. Կայնինչ դրանք ահազին դումարներ են կազմում:

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Լաւ է յիշեցրիք: Հեռագրեցէք իմ անունից, որ հստակ պատճենում եմ, այլ ևս ոչ մի բոպէ չուշացնել այդ գումարները: Մենք կարող ենք ենթարկել շատ անհաճելի դրութեան: Դրամը պէտք է զէնք դառնայ և զէնքը՝ զրամ:

(Արմենիանը զնաց):

ՄԻՐԱՔԵԱՆ

Ի գետ: Սարիքէկը թողել է մեր կազմակերպութիւնը և Դարալազիազում ինքնապուխ է գործում: Կազմել է իւր համար երեք խմբակներ:

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԵՄ ՀՅ ԳՈՐԾՈՒՄ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Ոչ: Բայց...

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Մենք կորուստ չունենք: Այդպիսիներին զեռ պէտք է խրախուսել: Ես անձամբ ճանածում եմ նրան: Եւ հասկանալի է նրա հոգեբանութիւնը: Ամբողջ Դարալազեազը կհաւաքի իր ձեռքը և մենք, այդ գաւառի կողմից, միանգամյն ապահոված կլինենք: Մեր կարգագրութեանց մասին նրան եւ տեղեկութիւններ տալ:

ՏԵՍԻԼ Պ

ՆՈՅՆՔ և ԶԻՆԻՈՐ

(Զինորը բերում է ծախ կողմից հետազներ: Միբարեանն իսկոյն առնելով կարգում է: Զինորը զնում է):

ՄԻՐԱՔԵԱՆ

«Ուղարկեցէք անմիջապէս զանէ երեսուն բուրլի: Սուվաման կլինեմ մինչեւ հօթ օրը: Բարեկամներից ոչ մի յոյս Բաղէն»:

ՄԱՐԱՒԴԻՒԹԵԱՆ

ՈՉ ԲԱԿԵՂԻ ՃԱՐԵՆՔ հիմայ այդ երեսուն հրացանը:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Արդում է միւսը) «Շուշի. այս երկու օր է, ինչ Ասկեա-

րեանը բանւած է. թուրքերի երթևեկութիւնը ընդհատած է. մնացել են անզօր. այսօր հաշտութիւն են խնդրում: Տնօրինեցէք»:

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Ահամ... Վերջապէս: Բնուեց Ասկեարեանի տարածութիւնը և... հաշտութիւն: Հեռագրեցէք գրանց, ինչպէս և Բագու և ամեն տեղ.—միշտ ընդունել հաշտութեան ամեն մի առաջարկ...

ՄԻՐԱՔԵԱՆ

(Արդում) Բայց...

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Դու միայն առաջ ես ընկնում, Միբաքեան: Բայց զրեցէք, երբէք չհաւատալ այդ հաշտութիւններին: Քուրզի հետ եղբայրացիք, փայտ ձեռքից վայր մի զցիր: Սա հայկական առած է, իիստ հետեւ սրան:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Երբորդ) «Եզրօրս ասէք՝ անմիջապէս ուղարկի գոնէ 60 բուրլի: Դրութիւններս կրիտիքական է. Վարսայ:»

ՄԱՐԱՒԴԻՒԹԵԱՆ

(Գլուխը բոնելով) Դարձեալ հրացան:

ՄԻՐԱՔԵԱՆ

ՈՉ ԲԱԿԵՂԻ ՎԵՐՋԱՊԷՏ:

ՄԱՐԱՒԴԻՒԹԵԱՆ

Ճար չկայ, մեր այսակղի զինուորների զէնքերը պիտի ուղարկել: Յեատաձեկն անկարելի է:

ՄԻՐԱՔԵԱՆ

Ի՞նչպէս: Մեր զինուորներին թողնենք առանց զէնքի:

ՄԱՐԱՒԴԻՒԹԵԱՆ

Մի առժամանակ, այս: Այստեղ կկոտորւեն, իսկ այս տեղ զիս ոչինչ չէ նախատեսնում:

(Հայոցին խիստ մտախոն է: Հեռախօսի ազդ: Մարտզիանը խակոյն մօտենում է, եւ նոյնպիսի ազդով պատասխանում):

ՄԱՐԱՒԴԻՒԹԵԱՆ

Մարտզեան... Ի՞նչ կայ... 27 բերդան փամփուշներով:

ՀԱՅՈՒԹԻՒՆ

(Խիստ վրդոված) Բոնել են:

ՄԱՐԱՒԴԻՒԹԵԱՆ

ԵՐԲ... ԵՐԵԿ... Ի՞նչի՞ էիք քնել:

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Կաշառել: Թէկուզ իրենց զնի չափով: Թէկուզ աւելիով:

ՄԱՐՈՒԴԻԵՍՆ
 Կաշառել ինչ գնով և լինի... Հը... Ռաշ է... Արդէն
 օրինական ընթացք են տւել:
ՀԱՅՈԳԻ

Թուհ: Ինչի՞ էք այդպիսի էշերի կանգնեցրել այնուեղ:
 Այս քանի՞ երրորդ անգամն է: Տեսնում էք որ իշխանութիւնները մեզ չեն ինայում: Ասել եմ, որ մենք պէտք է խիստ զգոյշ լինենք և հնաենք թուրքերի օրինակին՝ կաշառել միշտ և կաշառել առանց ինայելու: Մի այսպիսի ժամանակ միշտ և կաշառել առանց ինայելու: Մեծ տուգանքի ենթարկել դրանց:

ՄԱՐՈՒԴԻԵՍՆ
 (Մոտենալով աջ դռան) Հմայեակ: Եկ այսուեղ: (Սրանց) Դրա տեղը հիմայ են եռապատիկը կանեմ:

ՏԵՍԻԼ Ե

ՆՈՅՆԾ ԵՆ ՀՄԱՅԵՅԵԱԿ

ՄԱՐՈՒԴԻԵՍՆ
 (Հմայեալին) Ուստիկանատան պահեստում կան մօտ վաթուն արագածիդ հրացաններ:

ՀՄԱՅԵԱԿ

Կան:

ՄԱՐՈՒԴԻԵՍՆ
 10—15 հատ էլ այս օրերս են գրաւել քաղաքացիներից:
ՀՄԱՅԵԱԿ

Այս: Մինչև անգամ աւելի:

ՄԱՐՈՒԴԻԵՍՆ
 Մեր խուզարկու խմբին կապատիրեն: Քսան և չորս ժամաց ընթացքում, որ այդ գէնքերը մեր պահեստում լինեն:

ՀՄԱՅԵԱԿ

(Գնալով) Իսկոյն: (Անմիշապէս դառնալով) Իսկ եթէ սումբերի կարիք լինի՝ ամբողջ ոստիկանութեան ուշքը գրաւելու համար զէպի զանազան կողմեր:

ՄԱՐՈՒԴԻԵՍՆ

Եթէ միայն կարիք լինի: Բայց անվաս սումբեր, որունդոստ:

ՀՄԱՅԵԱԿ

Այդպիսի սումբեր պատրաստի ունենք:

ՄԻՐԱՔԵԱՆ

Առաջ մի կամ երկու անգամ արձանակ արձակի օդի մէջ, որ փողոցի մարդիկ փախչեն և յետայ սումբերի դիմել:

ՀԱՅՈԳԻ

(Խիստ) Բայց ամենակարևոր գէպքում... (Աւելի խիստ):
 Ոչ մի մարդկային զոհ կամ մի որեկ վնաս:

ՀՄԱՅԵԱԿ

Միամիա եղեք: Դուք իրաւոնքը առէք, իսկ մնացածի համար՝ ես զիսովս եմ պատասխանատու: (Վնաց):

ՄԻՐԱՔԵԱՆ

Հրաշտակ միաք: Բազէնին և Վարսովին կարելի կլինի գոհացումն տալ:

ՀԱՅՈԳԻ

Իսկ Ալէկոպուից զես աեղեկութիւն չկայ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Ոչ:

ՀԱՅՈԳԻ

Զարմանալի է...

Ճնախօսի ազդ. Միրաքեանը մօտեցաւ:

ՄԻՐԱՔԵԱՆ

Միրաքեան... (Լուսմ է երկար): Շատ լաւ իսկոյն: (Հայուղուն) Սնովիական լրագրի թղթակիցը եղել է խմբագրատանը: Մի քանի տեղեկութիւններ է ստացել այնուեղ: Խմբագրը խորհուրդ է տւել, որ ձեզ հետ անձամբ տեսնեի: Հիմայ գալու է:

ՀԱՅՈԳԻ

(Մտագրադ) Լաւ:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Հեռախօսին) Ուրիշ... Թուրքերը յարձակւեցին... Ինչպէս... Ռուսական և մալականների գիւղերի վրայ... Մեծ աւերմունքներ պատճառեցին... Լաւ: (Հեռանում է):

ՀԱՅՈԳԻ

Ահա: Գաւշակութիւններս կատարում են: Ուրիշ կերպ չէր կարող լինել: Իշխանութեանց սարքած փոթորիկներն իրենց գիւներին են կուտակում:

ՀՄԱՅԵԱԿ

Իշխանութեանց առաջ զրւած է հիմայ մի ալտէրնատիւ. կամ իսկոյն զսպել թուրքերի գրգռած ախորժակները և կամ՝ անզօր ձեանալով տանել ամբողջ խայտառակութիւնը:

ՄԻՐԱՔԵԱՆ

Անկասկած վերջինն է լինելու:

ՀՄԱՅԵԱԿ

Որովհեան իշխանութեանց ամբողջ գաղտնիքը թուրքերի ձեռքին է:

Ճնախօսի ազդ. Պատենում է Միրաքեանը:

ՄիրԱքեան

Ո՞վ էք... Մարզպար... Ի՞նչ կայ... Ապանեցին մի թուր-
քի... Այս բոպէիս...

ՀԱՅՈԳԻ

(Գուալով) Ո՞վ համարձակւեց:

ՄիրԱքեան

Ո՞վ է... Փալանդուղը:

ՀԱՅՈԳԻ

Խլել ձեռքից նրա զէնքը և աքսորել Կովկասից:

ՄիրԱքեան

Աւգարկել նրան այստեղ:

ՀԱՅՈԳԻ

Ասւած է մի անզամ ընդ միշտ. ոչ մի թուրք չպէտք է
ընկնի հայի ձեռքից՝ առանց կուրի: Իսկ մեր զինւորի—ևս
առաւել:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Այս օրերս գալու է Երևանից Նաջափ Ալի խանը: Լուսամ
է նրա կեանքի զէմ էլ փորձ է լինելու:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Գլուխները քարոզի են տալիս: Այզպիսի բան լինելու
չէ: Իմանալ երը է գալու և հետևող զինւոր կարգել նրա
անձի պաշտպանութեան համար: Գրեցէք նոյնաէս բոլոր կօ-
միտէտներին, որ ոչ մի տեղ հայերը առանց պատճառի
թուրքի ձեռք չտան, ինչպէս և նախայարձակ չինեն և ան-
տեղի արիւն չթափեն: Հայերը պիտի միմիայն պաշտպանո-
ղական դիրք բռնեն:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Արդէն գրւած է:

ՀԱՅՈԳԻ

Կրկնել: Մեղառքներին ամենախիստ պատժի ենթար-
կել: Գրեցէք նաև, որ պէտք է ամենուրեք կազմակերպել
լրտեսների խմբակներ: Սրանք պիտի գանազան շորերով և
զէմքերով մանեն թուրքերի գիւղերը և գուրս քաշեն նրանց
գործողութեանց գաղտնիքները: Այսպիսով հնարաւորութիւն
կունիսանք նրանց ապազայ անսկիքները իրենց սաղմերի
մէջ խեղդել:

ՄիրԱքեան

Վերջապէս մինչև Երը չկատարել և ներդորձական դեր
ու կեղծ հաշտութիւններով բաւականանալ:

ՀԱՅՈԳԻ

Մինչեւ որ մենք կուի համար պատրաստ կլինենք, իսկ
թուրքերը չեն գաղարիլ իրենց գաղանութիւններից: Զի կա-

րելի մի գիւղի պատրաստութիւնով զոհել տառնեալ գիւղեր:
Չմոռանաք նաև, որ մեր ապազայի յարձակումները լինելու
են միմիայն այն թուրք գիւղերի վրայ, որոնք յայտնի կլի-
նեն իրենց անփիղ աւերմունքներով և պատրաստելիս կլի-
նեն նորանոր կոտորածների: Խաղաղ թուրքերի քիթն ան-
գամ արևելու չէ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Խաղաղ են նրանք, որոնք ճար չունեն և կազմում են
փոքրամասնութիւննայերի մէջ:

ՀԱՅՈԳԻ

Այդ միհնոյնն է:

ՄիրԱքեան

Բոլորովին միհնոյնը չէ: Նրանք ոչ մի տոկիթ ձեռքից
չեն թողնում պատահած հայ մարդուն այսպէս թէ այնպէս
ոչնչացնելու:

ՀԱՅՈԳԻ

Ռւրեմի:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Նոյնը պիտի անենք և մնեք:

ՀԱՅՈԳԻ

Իսկ մենք ինչով պիտի զանազանենք նրանցից:

ՄիրԱքեան

Ի՞նչ զանազանութիւն և ինչու: Ատամ ցոյց առողին
պիտի զէմ անել վագրի ատամներ:

ՀԱՅՈԳԻ

Դագրի ատամներ ցոյց տուր քո զէմ զինւած ամրութիւն,
բայց ոչ անդէն անհատին:

ՄիրԱքեան

Ամբոխը անհատներից է կազմւում:

ՀԱՅՈԳԻ

Սպանիր անհատին, եթէ նա յարձակում է վրայ զէն-
քով:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Այդպէս չեն անում թուրքերը:

ՀԱՅՈԳԻ

Իսկ մենք այդպէս պիտի անենք:

ՄիրԱքեան

Ոչ, ներողութիւն: «Ակն ընդ ական, տառմն ընդ ատա-
ման»: Դա է մեր միակ փրկութիւնը:

ՀԱՅՈԳԻ

Դու ըմբոստ հս, Միրաքեան:

ՄիրԱՔԵԱՆ
Սա ըմբուստութիւն չէ, սա ժամանակի պահանջ է: Եթէ
մենք Շուքիւր աղայի մօտից ճեռանալիս, խոկոյն չհանէինք
մեր ստրծանակները, ծառան երկուսիս էլ տեղն ու տեղը
կթողնէր թէ չէ: Այդպէս չէ, Մարուգեան:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ճիշտ է:

ՀԱՅՈՒ
Բայց ինչու դուք նրան չարեցիք նոյնը:
ՄԻՐԱՔԵԱՆ

ԻՆՉՈՒ

Այս ինչու: Դժւար թէ դուք վախենայիք նրանից: Ու-
շեմն նրա համար, որ նա վայրենի բնազդներով էր զեկավար-
ում, իսկ դուք՝ խելքով: Ահա մեր երկու ազգերի տարրե-
րութիւնը: Ահա կուլտուրայի և խաւարի գանազանութիւնը:

ՄԻՐԱՔԵԱՆ

Կուլտուրա... Մեր տունն այդ կուլտուրան քանդեց:
ՀԱՅՈՒ

Ոչ. մեր տունը կուլտուրան շինեց: Զմոռանաս, որ դու-
մի ամբողջ կուսակցութեան գլուխն ես. պէտք է գործես
խելքով:

ՄԻՐԱՔԵԱՆ

Հէնց այդ հիման վրայ ես չեմ կարող համաձայնել, մի-
թուրք սպանելու համար, խել իմ զինքը և աքսո-
րել նրան կովկասից:

ՀԱՅՈՒ

(Խիստ) Հայողին ես եմ, ես այդպէս եմ կամենում:
(Խորին լոռութիւն):

ՏԵՇԻԼ 2

ՆՅՅՆՔ, ԶԻՆԻՈՐ և յետոյ ԹՂԹԱԿԻՑ

(Գալիս է զինորը և տալիս է մի այցելում Հայողուն):

ՀԱՅՈՒ

Ներս հրաւիրիր:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ո՞վ է:

ՀԱՅՈՒ

Անգղիական մի լրազրի թղթակիցը:
ԼԻՆՑՈՒՆ

(Գալով ձափս կողմից եւ վայրկենական հայհացը զցելով երեքու-

վրայ): Պարոն Հայողին: (Միրարեանը և Մարուգեանը շարժումով
ցոյց են տալիս Հայողու վրայ): ԼԻՆՈՏՈՆ:

ՀԱՅՈՒ

Ուրախ եմ: (Բարեւում են: Ծանօթացնելով Միրարեանի և
Մարուգեանի հնա) Գործակիցներով՝ պ. Միլաքեան, պ. Մարու-
գեան: (Սեղմում են ձեռքեր): Համեցէք խնդրեմ:

ԼԻՆՑՈՒՆ

Կարսդ եմ յուսալ, որ չիք զլանայ հաղորդել ինձ մի
քանի տեղեկութիւններ:

ՀԱՅՈՒ

(Մարզպան) ԽԱՆՊԻՒՆ:

ԼԻՆՑՈՒՆ

Միջոց կունենայիք արգեօք բացապեր ինձ Հայ-թա-
թարական այս ընդհարումների պատճառները:

ՀԱՅՈՒ

(Դժւարութեամբ) Դրա համար պէտք է դիմել այդ հար-
ցի պատճական մասին:

ԼԻՆՑՈՒՆ

Գա շատ հետաքրքիր է մեր լրազրի համար: Զէիք կա-
մենալ արգեօք գէթ մի թուցիկ ակնարկ զցել և այդ պատ-
ճութեան վրայ, որ կարուցանացի զալ մի ամփոփ եղբակացու-
թեան, Անշուշտ, եթէ չեմ խում ձեր թանգարին բողէները:

ՀԱՅՈՒ

(Մի փոքր մտածելուց յետոյ): ԻՆՉՈՒ չէ: Համեցէք: (Նոյն-
ութիւն): Հայերն, ի վագուց հետէ, կորցրած լինելով իրենց պե-
տութիւնը, ընկել էին իսլամ ազգերի բանագետութեան տակ:
Նրանք միշտ ձգտել են մի քրիստոնեայ ազգի հովանեսի տակ
լինել: Նրանցից շատերը թողնելով հայրենիքը զազթեցին
լինել: Նրանցից երկրներ, ի միջի այլոց լինաստան և թրիմ: Նա-
զանազան զարից սկսած՝ իրենց յոյսը գրեցին Ռուսաստանի
խանցեալ զարից զրկանքներով ու տառապանքներով,
վրայ: Աներեալայելի զրկանքներով ու տառապանքներով,
խելքով ու արբենով օգնեցին նրան նախ՝ տիրելու թրիմին
խելքով ու արբենով օգնեցին: Այդպիսով հայերի մի մասը ապա-
հա ապա՝ Անգրեկովկասին: Այդպիսով հայերի մի մասը ապա-
հա ապա՝ Համազարամանում միծամանու-
հովից իր կացութիւնը նոյնը էր մտաւ: 1861 թւին՝ Զէյթունի
թեան զրութիւնը նոյնը էր մտաւ: Զէյթունի
հայերը ստիպւած եղան զէնքով ապատամբել: Դուրս վրանցի-
հայերը ստիպւած զօրքին կիլիկիայից՝ ինքնավարութիւն հաստա-
լով տաճկաց զօրքին կիլիկիայից՝ ինքնավարութիւնը դիմեց զանազան
տեցին այնտեղ: Տաճկաց կատավարութիւնը դիմեց զանազան
խողերի, հաւաստիացումների և նենդ քաղաքականութեան:
Պաղպասիրտ հայերը հաւաստացին: Զօրքը կրկին ներս մտաւ:
Անցան ապահներ: Հետոհետէ Մուլթանի քաղաքականութիւ-
նը փոխւց, իստացաւ, ճնշումները ծայրայեղութեան հստան:
Նոյնպիսի զրութիւն ստեղծւեց Հայաստանի և միւս մասե-

բում: Հայերի զբութիւնն այնտեղ անտանելի դարձաւ: Այնչինչ Տաճկաստանի կողքին, Կովկասում, հայերը շատ զոհ էին ռուս կասավարութիւնից: Գոհ մինչ այն աստիճանի, որ ոչ մի հայ, հացի ժամանակ, թէ իլ տանը և թէ հրաւէրքներում, չէր վերցնի իր առաջին բաժակը, եթէ նա չըարեմազթէր մուսաց Կայսեր կենաց համար, Նրա Գահի հաստատութեան, Նրա սրի զօրութեան համար:

Լին80ն

Եւ գուք ուզեցաք մի այզպիսի զբութիւն էլ ստեղծել հայերի համար նաև Տաճկաստանում:

ՀԱՅՈՒԹԻՒ

Անշուշտ: Վերջացաւ Ռուս-Տաճկական պատերազմը: Ամեն ինչ խաղաղւեց: Բայց Տաճկական բռնապետութիւնը հայերի վերաբերմամբ աւելի ևս խստացաւ: Նախ՝ որովհետեւ հայերը թե ու թիկունք էին դարձել Ռուսաստանին՝ Նրա և այդ պատերազմական յաջողութեան համար և ապա՝ Սան-Սականոյի գաշնազրի մէջ յայտնեց 16-րդ յօդւածը, իսկ Բերլինի՝ 61-րդ:

Լին80ն

Այս, այս...

ՀԱՅՈՒԹԻՒ

Եւ ահա Կովկասում ստեղծեցին յեղափոխական կաղմակերպութիւններ հայերից: Նրանք սկսեցին մարդիկ ուղարկել Տաճկաստան և ժրաշան պրօպագանդայով ոսքի կանգնեցրին այնտեղի հայերին. սկսեց համարես մի բացարձակ կուր:

Լին80ն

Տաճկաստանին տիրելու համար:

ՀԱՅՈՒԹԻՒ

Ոչ, սէօր: Դրա մասին ոչ ոք չէ էլ մտածեր: Այդպիսով միայն ուզեցան գարձնել լուսաւորեալ Եւրոպայի ուշագրութիւնը հեծեալ հայ ժողովրդի վրայ, յուսալով, որ այդ Եւրոպան կմիջամաէր տանելի գարձնելու նրա կացութիւնը Տաճկաստանում:

Լին80ն

Բայց:

ՀԱՅՈՒԹԻՒ

Բայց չարաչար սիալեցին: Անգղիական նաւասորմիզը, նենդ Սօլիզրէրիի խօսքերով, չէր կարող բարձրանալ Փոքր Ասիայի բարձունքները, իսկ Բիսմարկի համար, գարիս այդ չար ոզաւ, ամբողջ հայկական հարցը չարժէր Բրանդէնբուրգի մի զինւորի փառած սկսուներին:

ՄԻՐԱՔԵԱՆ

Այս: Նրանց յայտն Անգլիան էր և նա դաւաճանեց նրանց:

Լին80ն

(Կուկիր կախելով) Այս... Ճիշտ է...

ՀԱՅՈՒԹԻՒ

Ճնշւածների պաշտպան՝ երջանկայիշատակ Աղեքսանդր Ա Կայսրը վաղուց չկար: Նա ըսկել էր չարագործների կաւերից: Իսկ Աղեքսանդր Ա-ի նոր քաղաքականութեանը ձեռնուու չէր հայերի այս արթնանալը: Սա ուսնակոխ արեց հայերիս մասին արձակած Խուս Կայսերների բոլոր հրովարտակներն ու արտօնութիւնները: Հետպհետէ առաջ բերեց խստութիւններ, ճնշումներ, խուզարկութիւններ, բանաեր և հալածանք: Լօրանով-Մաստովկու քաղաքականութիւնն էր, որ նպաստէ է ունեցել ձեռք ճգել «Հայաստանը առանց հայերի», Տաճկաստանում Բարգուղիմէսունան «ցերեկներ» ուռաջ ըերեց. կոտորւեցին այնտեղ մօտ 300,000 հայեր: Իսկ Կողկասում ստեղծւեց հայերիս համար մի ինկիզիցիական ոէժիմ:

Լին80ն

Օրինակ:

ՀԱՅՈՒԹԻՒ

Օրինակ. սկսեցին հալածել մեր եկեղեցին. մեր Կաթուղիկոսական իրաւունքները հասցրին զէրօյի. մեր Սինօդը զարձրին իրենց պրօկուրօրների համար մի կանցելիարիա. մեր ուսումնարանները փակեցին. փակեցին նաև մեր բարեգործական, հրտարակչական ընկերութիւնները. անասելի ճնշումների ենթարկեցին մեր լրագրութեանը, մեր թատրոնին. հայոց լեզուն, հայ հոգին արմատախիլ արին եղած ուռամսարաններից. հետպհետէ մի քանի տասնեակ հայ պաշտոնակներին փոխարինեցին ուռաներով, որոնք, իբրև վաճապիրներ, սկսեցին ծծել հայի վերջին համբերութիւնը. ուռանասուրակութեանը և այլազաւաններին, նամանաւանդ վրացիներին, սրբցին մեր գէմ և, իբրև անհաշա թշնամիներ, կանգնեցրին մեզ իբար գէմ...

Լին80ն

Ինչպէս այժմ թուրքերին:

ՀԱՅՈՒԹԻՒ

Հասկանալի՞ է: Եւ վերջապէս, իբրև վլուխ գործոց, իւնցին մեր եկեղեցական խղճուկ կալւածները, հասցնելով մեր հոգեորականութեանը մուրացկանութիւնն:

Լին80ն

(Ուզում է բան տակ, բայց փօխում է մոաղբութիւնը): Հհմ, ըհմ... յետո՞յ:

ՀԱՅՈՒԹԻՒ

Մեր ձոյնը չէր լուսում, բողոքներս տեղ չէին հասնում. իսկ հասածներն էլ թողնուում էին առանց ուշագրութեան:

Բացագրութիւններս մերժուում էին լրագրութիւններից, իսկ
բարեմիտ լրագրներին՝ ցէնզուրան էր արդեւք դառնում:

Լինջոն

(Պորհրդաւոր) Այսո՞...

ՀԱՅՈԳԻ

Եւ հայը այսպիսի պայմաններում չէր կարող բաւակա-
նանալ միայն արտօնութ ու ցաւ արտայայտելով. թէ և այդ
էլ էր արգելուած: Մինչև անգամ՝ անսառունների վերաբերմամբ
կայ մի սահման՝ անտրտունջ դիմանալու նրանց պատճառած
չարչարանքներին, իսկ երբ անցնում է այդ սահմանը՝ նրանց
կողմից արդէն բողոք է արտայայտում իրենց բնութեան
համապատասխան ձևերով: Եւ մենք կամայ ակամայ ստիպ-
ւած էինք դիմել տէրբորի:

Լինջոն

Հասկանալի է հիմայ:

ՀԱՅՈԳԻ

Եւ սկսեց հասուցումք: Մի քանի խիստ, զազանարա-
բոյ պաշտօնեանների՝ յայտնի իրենց հայակեր տղղութեամբ,
հնագնեատ սպանութեցին, խողխողեցին... Առաջացաւ մի խուլ
պատերազմ հայի և սուս պաշտօնեանների մէջ: Քաղաքական
կտրուկ միջոցների կողմնակից, եթէ ոչ զրանց ստեղծողը
կովկասում, նրա կառավարիչ իշխան Գօլիցինը ուղղակի կա-
տաղում էր: Նրա հրէշաւոր ծրագիրները՝ մէկը յաջորդում էր
միւսին: Պէտք էր վերջ դնել և այդ մարդ—զազանի շահա-
տակութեանց:

Լինջոն

Ասամ... Ահա պատճառով...

ՀԱՅՈԳԻ

Ինքն ըստ ինքեան հասկանալի է: Եւ ուրիշ ելք չկար:
Գօլիցինն ազատւեց անխուսափելի մահից՝ նոյն հայերի ջէն-
տելմէնութեան շնորհիւ, որոնց նա տեղելով ատում էր: Զի-
նէր նրա հետ նրա կինը, որի դէմ հայտէրբորիստները ոչինչ
չունէին, Գօլիցինը սպանւած կլինէր նոյն տեղում.—իշխանու-
նին իր անձով ծածկեց նրան մահացու հարւածներից և նրա
յուսահատական արգելքների շնորհիւ, հազիւ փրկւեց նա
զիսից խորախոր վէրքեր ստանալով միայն:

Լինջոն

Այդ արդէն յայտնի է:

ՀԱՅՈԳԻ

Գօլիցինը իր ծանր վէրքերից առաքինւնց, նա չէր կտ-
րող մարսէլ հայերից ստացած այդ վիրաւուանքը, նրա մըտ-
քում յզացաւ մի նոր զիւական ծրագիր.—«Իսպառ ոչնչացը-
նել հայութիւնը կովկասից և թողնել միայն մի հայ հայի
խրաւիլակ մուգէումի համար»:

Լինջոն

Ամ. Թուբքերի ձեռքով:

ՀԱՅՈԳԻ

Ինչպէս առանում էք: Այդ ծրագրի հոտը սկսեց զալ
անցեալ 1904 թւի երկրորդ կիսից: Յանկարծ անդրկովկասի
ուռուները խիստ թշնամական դիրք բռնեցին դէպի մեղ և
մտան թուբքերի թերթ տակ: Քաղաքողի ասրածւել էր
նրանց մէջ, որ իրը հայերը պիտի սաներին կոտորեն:

Լինջոն

Ահամ...

ՀԱՅՈԳԻ

Խուլ պլովօկացիսն քանի գնում, աւելի ևս հրէշաւոր
չափերի էր համարմ: Հայերի համար դա մի ցնզաբան նո-
րութիւն էր, որին նրանք ոչ մի նշանակութիւն չէին տալիս:
Թուբքերը թե առան և արդէն խրոխական դիրք բռնեցին
դէպի հայերը:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ մի բարձրաստիճան պաշտօնեայ անել է. «Հայեր,
եթէ այդպէս շարունակելու լինիք, մենք թոյլ կտանք թուբ-
քերին իրենց վաղուցւայ հաշիները ձեղ հետ տեսնելու և
այնուհետեւ երեք օրւայ մէջ՝ մի հատ կենդանի հայ չի մնալ
կովկասում»:

Լինջոն

Արդէն Գօլիցինի ծրագիրը...

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Անշուշտ: Այս խօսքերն ասեալ է գեռ անցեալ տարւայ
օգոստոսին:

ՀԱՅՈԳԻ

Եւ այս թւի ֆետրվարի 8-ին այդ ծրագիրը վլուխ բե-
րւեց Բագրում: Իսկ հետեանքների հետ դուք արդէն ծանօթ էք:

Լինջոն

Իսկ չփորձեցիք բողոքել կամ պաշտպանութիւն խնդրել:

ՀԱՅՈԳԻ

Փորձեցինք և եկանք այն համոզմունքի, որ չպէտք է
բողոքել, այլ՝ զործել:

Լինջոն

Ապա ի՞նչ դեր խաղացին ձեր յեղափոխականները:

ՀԱՅՈԳԻ

Մեծ դեր կատարեց մեր Դաշնակցութեան և Հնչակեան
կուսակցութիւնների նուրբ հոտառութիւնը: Բագւայ առաջին
կոտորածը աչքները բաց արեց և նրանք, նախատեսնելով
մեծամեծ բարգութիւններ, իսկոյն իրենց գործողութիւններն

ուղեցին դէպի ինքնապաշտպանութիւն և նետրդային տէն-
դով, ինչպէս և ներկայումս, սկսեցին զինւել և զինել ժողո-
վրդին: Մի քանի ամիս ևս՝ և մեր ինքնապաշտպանութեան
գործը կդրւի ամենահաստատ հիմքերի վրայ:

Լինջոն

Միթէ կարծում էք, որ դեռ շատ պէտք է տեի այս
դրութիւնը:

ՀԱՅՈԳԻ

Կարծում եմ, որ ընդհարութիւնը առաջին շրջանումն
ենք միայն:

Լինջոն

Միթէ:

ՀԱՅՈԳԻ

Այս իսկ եթէ կառավարութիւնն առենայ, մի օրւայ
մէջ կդադարեցնի ամեն ինչ:

Լինջոն

Իսկ եթէ չուզենամյ:

ՀԱՅՈԳԻ

Այս ժամանակ արդէն մենք պիտի դադարեցնենք:

Լինջոն

Ի՞նչպէս:

ՀԱՅՈԳԻ

Երբ զինւած պատրաստ կլինենք և պաշտպանողական
դիրքից կանցնենք յարձակողականի:

Լինջոն

Ահասամ...

ՀԱՅՈԳԻ

Երբ թուրքերը կտենեն, որ մենք յարձակւել էլ զի-
տենք և ոչ պակաս սարսափներ տարածել, այն ժամանակ
առաջ կդայ իսկական հաշտութիւնը:

ՄԻՒՐԱՔԵԱՆ

Պէտք է իմանալ նահ, որ թուրքերի այս արարմունք-
ները չպէտք է վերագրել զէպի մեղ տածած ատելութեան
միայն, այլ զիսաւորապէս՝ համիլտամականութիւն, որն ի
վաղուց ճետէ արձարծուում է նրանց մէջ լոելիայն և ծածուկ:
Իշխանութեանց այս դրդումները նպաստեցին միայն նրանց
ձգտումներին:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Դեռ երեք-չորս տարի առաջ Գանձակի մզկիթից իշխա-
նութիւնն ահազին քանակութեամբ զէնքեր հանեց և շատե-
րին աքսորեց: Եւ այս առաջին դէպքը չէ:

Լինջոն

Իսկ մեծ վեաներ հասցըին ձեզ թուրքերը:

ՄԻՒՐԱՔԵԱՆ

Ըսդհանրապէս նրանք կարողանում են մեծ վեաներ
հասցնել մեղ ամեն տեղ՝ միայն առաջին օրը, երբ յանկարծ
և միանգամայն անսպասելի մեղ համար, յարձակւում են մեր
վրայ, իսկ այսուհետեւ էֆֆէկտը հայերին է, եթէ, ի հար-
կէ... իշխանութիւնները չեն օգնում նրանց, իրք խաղաղեց-
նելու նպատակաւ:

Լինջոն

Այս... (Միջոց): Ապա ինչով բացադրել թուրքերի այդ
տակութիւնը դէպի ձեզ:

ՀԱՅՈԳԻ

Նրանով, որ մենք կուլտուրապէս, համեմատելով իրենց
հետ, շատ բարձր ենք կանգնած: Խաւարին սովորած աշքե-
րի համար՝ անտանելի է փոքրիկ լոյսն անգամ:

Լինջոն

Այս, այս: Մի երկու հարց ես:

**Աղմառիկի եւ իրաւացման ձայներ են լուսնի
փողոցից, ինչպէս և բաղապահերի սուրցիներ: Հարսն էլ
շապալի ժամենում են և նայում լուսամուտներից դէպի փողոց:**

ՀԱՅՈԳԻ

Ահամ... (Մարուգեանին առանձին) Մէրժնք են միթէ:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Դժւար: Բայց զուցէ... (Վեում է դէպի աչ արտակ):

ՏԵՍԻԼ Է

ՆՈՅՆՔ, սոսակց ՄԱՐՈՒԳԵԱՆԻ և ապա ԶԻՆԻՈՒՇ

Լինջոն

Այս լուս կնշանակէ:

ՀԱՅՈԳԻ

Այս օրերս պիտի յեղափոխական ցոյցեր անէին քաղա-
քումն: (Զանդ է տալիս: Գալիս է զնուրը): Իմանալ իսկոյն ինչ
է կատարւում դուրս:

Լինջոն

(Նայելով փողոց) Ամենքն էլ փախչում են շնչառական, ա-
ռանց յետ նայելու...

ՄԻՒՐԱՔԵԱՆ

Ահա մաքրւեց փողոցը:

Լինջոն

Հայերն էլ են մասնակցում ընդհանուր շարժմանը:

ՀԱՅՈԳԻ

Այս ամենից յետոյ, ինչ որ լոեցիք և ակսաք, կարող
են արգեօք չմասնակցել:

Հասկանալի է:

Լին80ն

ՏԵՇԻ Ձ
ՆՈՅՆՔ, ՄԱՐՈՒԴԵԱՆ և յետոյ ԶԻՆԻՈՐ
ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Մօտենարով Հայոցուն եւ գաղտնաբար): Մերոնք են: Փոր-
ձում են առանց սումբերի...

ԶինիՈՐ

(Ներս զալով ծախ դասի դասից) Ոչինչ բան: Մէկը վաղելիս է
եղել միւսն էլ նրա յետեկց. իսկոյն մի քանիսն էլ, ահսնե-
լով նրանց՝ ահարեկւած փախչում են, իսկ մնացածներն էլ՝
նրանց յետեկց...

Լին80ն

Ելքարականացած է օդք: Մի չնչին ահարնական շար-
ժում—եւ սարսափ և փախուստ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Ահա, խաղաղւեց: Սկսեցին մարդիկ շարժւել փողոցում:

Լին80ն

Ուրեմն շարունակենք մեր խօսակցութիւնը:

(Ամինքը բանում են իրենց տեղիքը: Զինւորը դնաց):

Լին80ն

Դուք մի փոքր առաջ «իրածուկ» բառը զործազրեցիք
ձեր եկեղեցական կալւածների զրաւման մասին: Բայց ոչ
ապաքէն այդ կալւածների արդիւնքներովն էին ձեր կաթու-
ղիկուններն օգնութեան համառւմ յեղափոխական շարժումնե-
րին:

ՀԱՅՈՒԹԻ

Սուտ է: Սկզբից մինչև վերջը մտացածին: Այդ կալ-
ւածների և միւս, կրօնական, եկամուտների չնչին արդիւնք-
ներով հաղիւ հազ պահպանուում էին մեր եկեղեցիները, ու-
սումնարանները, կաթուղիկոսութիւնը...

Լին80ն

Ինչպէս: Միթէ հսարաւութիւն չկար պաշտօնապէս
որոշելու այդ եկամուտների քանակը:

ՀԱՅՈՒԹԻ

Ինչի՞ չէ: Միթէ պարզ չէր այդ՝ իբրև ցերեկեան լոյս,
իբրև մի ջինջ հայելի:

ՄԻՐԱՅԵԱՆ

Էջմիածնում ամեն ինչ կատարւում էր կառավարութեան
նշանակած Սինօղի պրօկոռօրի կօնտրոլի տակ: Առ չէր կա-

րող ամենաճիշտ զեկուցումներ չտալ նաև վանքի եկամուտ-
ների ու ծախքերի մասին, իր զիսաւոր վարչութեան: Մուկն
անգամ չէր կարող անցնել մի որևէ ծակից, առանց այդ
պրօկոռօրի զիսութեան:

Լին80ն

Ի՞նչպէս ապա...

ՀԱՅՈՒԹԻ

(Ընդմիջիւով նրան) Ահա որտեղից է սկսում գերազոյն
կեղծիքը: Ահա ինչպէս էին սիսալեցնում աշխարհին: Այդ
ուս բիւրօկրատիայի և խաւրամիտ լրագրութեան աէն-
դինցիան է, իրենց քաղաքականութեան վարմունքն արդա-
րացնելու համար:

Լին80ն

(Մտաղբաղ) Այդպէս, այդպէս... Ասացէք խնդրեմ, ճիշտ
է, որ հայերը ձգտում են տիրել ամրող Կովկասին մինչեւ
մոստովի սահմանները Դօնի վրայ:

ՀԱՅՈՒԹԻ

Աբսուրդ: Ակզրից մինչև վերջը նոյնպիսի արսուրդ: Դա
ստեղծւել է նոյն ազրիւրից՝ ուսու ժողովրդին էլ մեր գէմ
գրգռելու համար:

Լին80ն

Իսկ կուզէին հայերն իրենց թաղաւորն ունենալ:

ՀԱՅՈՒԹԻ

Ի՞նչ ասեմ: Զինւորը զինւոր չէ, եթէ նա չի ուզենայ
ժիներաւութիւն ստանալ:

Լին80ն

Անկասկած:

ՀԱՅՈՒԹԻ

Եւ ճիթէ կարելի է մեղագրել մի ազգի, եթէ նոյն իսկ
մի արդակի ձգտումն ունենայ:

Լին80ն

Ես էլ չեմ կարծում:

ՀԱՅՈՒԹԻ

Բայց հաւատացէք ինձ, որ այդ էլ արսուրդ է: Հայը
երիխայ չէ, որ երկակայական յայսերով զրադւի: Պարոն Մա-
րտուղար, շնորհեցէք ինորեմ կովկասի ազգարնակութեան
քարտէզը: (Առնելով Մարտուղարից և բանալով) Ահա, Միայն մի
քարտէզը պցէք սրա վրայ: Այս զայնը հայերն են: Ես լուսւ
եմ: Այս քարտէզը թող խօսէ ձեզ հետ և ապացուցի այդ
չարցի ամբողջ ցնդարանութեան մտան:

Լին80ն

(Աւշի ուշով նայելով բարտէկին): Հայերը հապիւ կազմում

են վեցերորդ մասը ամբողջ ազգաբնակութեան... և... ցրւած
են...

Լւսում է փողոցից ոմբակների տռոփին:
ՀԱՅՈԳԻ

Սպասեցէք: (Ականջը դէպի փողոց ուղղելով): Սմբակների
տրոփին:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Նոյելով լուսամուռից) Կապակներ են:

ԼԻՆՑՈՆ

Առ. կարգը վերականգնելու համար:

ՄԻՒԾՔԵԱՆ

(Նոյնպէս) Երեխ: Բաժանւեցին երեք փողոցների վրայ...

ՀԱՅՈԳԻ

Ես շարունակում եմ: Իսկ մեր թագաւորութեան մա-
սին նոյնպիսի եզրակացութեան կդար, ինչպէս և ես, սէօր,
քանի որ զիտէք արդէն, որ 4—5 միլիոն հայերը ցրւած են
նաև երեք պետութեանց մէջ.—Ռուսաստանի, Տաճկաստանի
և Պարսկաստանի:

ԼԻՆՑՈՆ

Գիտեմ, այս:

ՀԱՅՈԳԻ

Ուրեմն: Շըջապատող կամ տիրող ազգերի թւական
անհամեմատ առաւելութիւնն ի նկատի ունենալով, միթէ
հայերը կարող էին մտածել իրենց ինքնուրոյն թագաւորու-
թեան վրայ. անմիտ ուսուպիս չէր լինի արդեօք:

ԼԻՆՑՈՆ

Կարծում եմ:

ՀԱՅՈԳԻ

Աւելի ես այդ, ցնդարանութիւններն ակներե կլինին
այն ժամանակ, երբ Ռուսաստանը Տաճկաստանի հետ ընդ-
հարումն կունենայ: Այն ժամանակ, ոսները մի աւելորդ ան-
գամ ես կճանաչեն հայերին և այժմեան իրենց պաշտպանած
ու յանդկնեցրած թուրքերին: Այն ժամանակ միայն ոսւսը
կհասկանայ, թէ իր անհեռատես քաղաքականութեամբ, ինչ
մեծ սիալներ է արել:

ԼԻՆՑՈՆ

Հըմ...

ՀԱՅՈԳԻ

Բայց ինչի՞ համար եմ ես այս ամենն ասում: Քաղաքա-
կանութիւնն ընդհանրապէս հաշուի չի առնում ոչ իրաւունքը
և ոչ բարոյագիտութիւնը, իսկ առանց այս իմպուլսների
այնքան էլ հեշտ չէ հասնել խելացի հետևանքի:

ԼԻՆՑՈՆ

(Փափում է եւ զիտով անում):

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Գօլիցինեան ծրագիրը առաջ է բերում ներկայումս և
մի ուրիշ կարևորութիւն:

ԼԻՆՑՈՆ

ՈՐՊԹԻՍԻ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Երկպառակութիւն սերմանել ծայրագաւառների օտա-
րադաւան հպատակների մէջ և այդպիսով հեռացնել նրանց
ուշադրութիւնը կայսրութեան ներքին յեղափոխական շար-
ժումներից:

ԼԻՆՑՈՆ

Ահաամ...

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Ներկայ բոպէում բիւրոկրատիան ինքն է իր հաշինե-
րը անսում վրացիների հետ, որոնք ընդհանուր շարժման
ազգեցութեան առկ՝ արտայայեցին ինքնաճանաչութեան
սիմպոմներ: Իսկ մեր դէմ նա կանգնեցրեց թուրքերին:

ԼԻՆՑՈՆ

Այս, այս... Մի վերջին հարց ես: Միթէ հիմայ հայերն
այլ ևս ոչ մի բանի չեն ձգտում:

ՀԱՅՈԳԻ

Ճշմարտութեան դէմ կլինէր, եթէ ասէինք, որ հայերը
ոչ մի ձգտումն չունեն: Բայց միթէ ինքն ըստ ինքեան հաս-
կանալի չէ:

ԼԻՆՑՈՆ

Կուզէի ձեզանից լոել:

ՀԱՅՈԳԻ

Համեցէք: Հայը ձգտում է միմիայն համամարդկային
կենսունակ իրաւունքների: Հայը չէ ուզում անշատւել ոչ
թուսաստանից, ոչ Տաճկաստանից և ոչ Պարսկաստանից: Նա
միայն ձգտում է իր ազգային անյատականութիւնը պահպա-
նել. ապրել իրեն մի կուլտուրական ազգ: Եւ նա իրաւունք
ունի այդ պահանջելու:

ԼԻՆՑՈՆ

Ահաուշ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Իսկ այդ իրաւունքը ինպիրներով ու աղաչանքներով չի
կարելի ձեռք բերել: Բազմաթիւ դառն փորձերը համոզեցրին
մեզ այդ: Խնդիրն ու աղաչանքն անզօրութեան նշան են. իսկ
գոյութեան կուի մէջ՝ մահացու են և կործանիչ:

ՄիրԱՔԵԱՆ

Անշուշտ: Եթէ մենք մեր բողոքների ու խնդիրների հետևանքներին հանգստութեամբ սպասէինք՝ Գօլիցինի ծրագիրը իրականացած կլինէր այժմ: Ոչ: Հայն ինքն իրեն սփոտի պաշտպանէր, թէկուզ փայտերով, թէկուզ քարերով... զէնքը ձեռին պիտի ընկնէր անհաւասար կուի մէջ իրրե քաջ, բայց ոչ թէ աղաչանքներով ու բառաչանքներով մորթուուէր իրրե ոչխար:

ՀԱՅՈՒԹԻ

(Աղեւորւած): Մենք այն աղքն ենք, որը գեռ հին, շատ հին գարերում սերտ շփումն է ունեցել Հին Ասորեստանի, Բարելօնի, Մարաց, Պարսից աղքերի հետ. մենք այն աղքն ենք, որը, քրիստոնէութեան յարող առաջնորդից մէկը լինելով, ստիպւած էր յամառ կոււ մղել սկզբում Զօրօստրի վարդապետութեան և ապա՝ Խոլոմի հալածանքների դէմ. մենք այն աղքն ենք, որ հազարեակ տարիների ընթացքում ունէր իր քաղաքական ինքնուրոյնութիւնը, յարակցում էր բոլոր աղքերի և գարերի կոււրուրային. որը պահպանեց իր լիզուն, զարգացրեց իր գրականութիւնը, մշակեց իր սեփական ոճը. մենք այն աղքն ենք, որին շատ կողմից պարտական են նոյն իսկ խաչակրաց արշաւանքները. իսկ մեր երկիրը իր աշխարհագրական գիրքի շնորհիւ, լինելով այլ և աշխարհակաների արշաւանքների մշտական ասպարէզը՝ անդադար ենթարկել է նրանց տւարառու և տիրապետող բնագումներին. մենք այն աղքն ենք, վերջապէս, որ յարատե պատերազմներ է մղել իրեն շրջապատող, ինչպէս վայրագ, նոյնպէս և կուլտուրական աղքերի հետ՝ իր բռն քրիստոնէական ողին, իր ընդհանրական եկեղեցին, իր լիզուն, իր գոյութիւնը պահպանելու համար և այգաբասով հասել է մինչև օրս.—այսօր միթէ մենք միտի մեռնենք իրրե քաջ, կամ մորթւենք իրրե ոչխար: Ոչ, Միրաքեան, ոչ: Հայերին այլպիս վերջ չէ սպասում: Ներկայ բռնէն մեզ համար մի չնշին փորձութիւն է և մէկը այն անհամար պատուհաններից, որ հայութիւնը միշտ կրել է իր ուսերի վրայ: Կղիմանանք որան էլ և, յուսով եմ, կկարողանանք պատով դուրս գալ այսպիսի դրութիւնից: Հայը պիտի ապրէ: Հայը դեռ պիտի առաջադիմէ: Հայը պիտի չմեռնէ:

Լինօն

(Մտածմունքով) Այս... Այդպիսի աղքը պիտի չմեռնէ:

ՏԵՍԻԼ Թ

ՆՈՅՆԾ և ԶԻՆԻՈՐ

(Զինւորը ըերում է հեռագիրներ; տալիս է Մարտուղանին: Միւսները հարցական հայեացրով նայում են նրան: Այդ նկատում է Թղթակիցը):

Լինօն

Իսձ համար շատ բան պարզւեց: Ներեցէր պարոններ, որ ևս խլեցի ձեր թանգագին ժամանակը: Բնդունեցէր շնորհակալութիւնս և անկեղծ համակրանքս: Մրանց յաջողութիւն ևմ ցանկանում: (Սեղմում է երեք ձեռքերն էլ):

ՀԱՅՈՒԹԻ

Ուրախ եմ, որ կարողացանք ձեզ փոքր ի շատէ բաւարարութիւն առաջ: Բարեկառ գնաք:

ՄիրԱՔԵԱՆ և ՄԱՐՈՒԴԵԱՆ

Գնաք բարեկառ:

ՏԵՍԻԼ Պ

ՆՈՅՆԾ, առաջ Լինօնի և Զինիորի

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Կարդալով հետագիրը) «Ամեն կողմ շրջում են սէլիդներ և Շուշիի կոչերը ցըելով, գրգռում են թուրքերին: Ներսէս»: Անօրէններ:

ՀԱՅՈՒԹԻ

Բայց և այնպէս շարունակում են...

ՄիրԱՔԵԱՆ

Ախ, եթէ մի երկու ամիս էլ...

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Կարդալով երկրորդը) «Թուրքերը նորից խմբերով երեացել են Խնձորեսկի, Արարի և Դիդի զիմաց»:

ՀԱՅՈՒԹԻ

Ասա, բարդութիւններ: Խելոյն հեռագրել Խեչանին, որ նա աւելի ապահով տեղերից մեր կարիքներին կանչի և տասկան հոգի բաժանի այդ գիւղերի վրայ: Միրաքեան, գրիր ինդրեմ: Պէտք է աշխատել ի զուր զոհեր չտանք:

ՄիրԱՔԵԱՆ

Անշուշտ: Թէկ թուրքերը տասնապատիկ աւելի զոհեր են առաջ:

ՀԱՅՈՒԹԻ

Եթէ նրանք կկտրեն իմ մի մատը, իսկ ես նրանց ամբողջ ձեռքը, այնուամենայնիւ չի թեթևանալ իմ վէրքը: Շառնակիր, Մարուղեան:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Կարդում է երրորդը) «Մեծամեծ ֆնաներ հասցըին Ամառափ վանքին. տարան թանգագին իրեղէններն ու սրբութիւնները»: (Վրդովւած) Տեսնում էք:

ՄԻՐԱՔԵԱՆ

Վայրակներ:

ՀԱՅՈՒԹԻ

(Վրդուած և մտածմանը բով): Երանք, քանի զնում, աւելի յանդինանում են... իսկ մենք գեռ զէնք չունենք:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Խիստ դրդուած): Եւ գեռ իշխանութիւնները պրաւում են մեր բերի տւած զէնքերը, որ հայ ժողովուրդն ուզում է ձեռք բերել իրեն պաշտպանելու համար, ծախելով իր միակ անսառնը, իր մի կտոր հացը, իր վերջին ողինձն ու փաւսը...

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Նոյնպէս): Այս ինչ կուրութիւն է վերջապէս:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Նոյնպէս): Մենք պէտք է ուզենի շարունակենք յև իւրեւ այդ իշխանութիւններից տասնապատիկը և տասնց միշ ջոցների խարութեան:

ՀԱՅՈՒԹԻ

Անշուշտ: Ազատելով հայութիւնը ջնջումից, ազատում ենք նաև Սնդրկովկասը համբաւամական ոսնձութիւններից: Կարգա, Մարուգեան և այդ հետադիրը:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Վրդում է) «Անմիջապէս ուղարկեցէք հարիւր բուրլի: Քայլազնունի»:

ՀԱՅՈՒԹԻ

(Նորից վրդովկալով). Համեցէք: Բազէնն էլ, վարոսն էլ սա էլ հրացաններ են պահանջում և իրար յետեից...

ՄԻՐԱՔԵԱՆ

Եւ զանապան կէտերից:

ՀԱՅՈՒԹԻ

Դա նշանակում է՝ աւելի մեծ փոթորիկներ են ոպասուում գտաւաներում, քան մենք կարծում ենք: Հեռագրեցէք Ալէկոպօլ, որ իրենց գլուխները թէկուզ վայր գնեն, միայն մեր պահանջը ժամ առաջ յաջողեցնեն. ապա թէ ոչ մենք կորած ենք: Բայց չէ, այդ հեռագիրը ինքս կգրեմ:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Հարիւր հրացան, միանւագի և անմիջապէս...

ՀԱՅՈՒԹԻ

(Վրդուկ) Մեզանից են պահանջում, մենք էլ պէտք է տանք:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Բայց ինչպէս և սրտեղից: (Ծանրաբ)

ՀԱՅՈՒԹԻ

(Հետզինակ աւելի զրգուելով): Թշնամին այդ ամենը զիտէ և օգուում է: Ես այլ ևս ոչինչ չեմ ուզում իմանալ: Ճարեցէք, ստեղծեցէք, որտեղից և ինչպէս ուզում էք և այս շատ շուտ: Պէտք է զործ զնել խելքի և հնարագիտութեան ամբողջ ստեղծագործական ոյժ: ապա թէ ոչ մենք կտուժենք: ի զուր մարզիկ կիսուրեն, ի զուր զիւզեր կաւերեն: (Նարարային): Զէնք, զէնք պէտք է ձեռք բերել, նոյն իսկ արեան զնով, նոյն իսկ մեր հազոր վաճառումով:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Էլ ճար չկայ, պիտի ուզարկենք մեր զինուրների զէնքերը:

ՄԻՐԱՔԵԱՆ

Բայց այդ՝ պիտի մանենք քաղաքիս ազգաբնակութեան մէջ և ժողովենք կարելոյն չափ շատ զէնքեր, թէկուզ կրկնակի, թէկուզ հասկի զներով:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Անշուշտ: Բոս երեսլթին նորանոր և շուտափոյթ ուահանջները կրազմանան:

ՀԱՅՈՒԹԻ

Անկանկած: (Աստաղի) Մարուգեան, Միրաքեան, զաշոյնն ու զնասակը հրազարակ հանեցէք: Ռումբերով զգրգեցէք ամբողջ աշխարհը: Շուշիի և Բագրմոնքն ու պարափին այսուեկ նորոգեցէք: Խառնեցէք ու տակն ու վրայ տրէք ամբողջ դժոխքը: միայն զէնք տեցէք ինձ, զէնք հասցըք ինձ... և այն շուտով, շուտով, շուտով...

(Երերն էլ կաշկանդուած են լորւած մորիրավ: Միրաքիանն իրը նոր միտք յունալով, կանչում է Հմայեակին):

ՏԵՍԻԼ ԺԱՎ

ՆՈՅՆՔ և ՀՄԱՅԵԱՆ

ՀԱՅՈՒԹԻ

(Մինչեւ որ կարգադրութիւն կանէք Միրաքիանը, յանկարծ նական խիմել զուում է) Ե՛վրիկա: (Հետեւում է ներգային ծիծակ որն արտայատում է փրկութեան միտք ելք և վերին ծայր ուրախութիւն) Հա հա հա... (Արագ մօտնում է հեռափոսին: Զգային ոլլամշան: Ամենքն էլ հետարրութեամբ նետեւում են Հայունն: Գրաւասխան հեռախօսում): Միրացըք իսկոյն № 138-ի հետ: (Միջոց: Ազդ): Ո՞ր համարն էք... Ո՞վ էք... Կանչեցէք իրեն, վայսին: (Միջոց: Ազդ): Պարոն վայս... Ձեզ մօտ հիմայ ուրիշ մարդ չկայ... (Միջոց: Արդէն): Արդէն հեռացըքիք... Լաւ: Լացըք ուրիշն: Ո՞րքան բերգանի, Մառուկի և միւս սիստէմների

արտգածից և յուսալի հրազդաներ ունէք ձեր պահեստում.
հաշւեցէք նաև Մառողէք ու Բորխարդի ասրճանակները...
ինչպէս... Առանց վկայականի ոչ մի հատ չէք տան... Միա-
միտ եղէք. վկայականներ կներկայացւեն. Քանի հատ ու-
նէք... Մօտ երկու հարիւր վաթսուն... իսկ փամփուշանէր...
Շատ լաւ: Բոլորի գումարն ի՞նչ է բռնում... Մօտ 15000
բուրլի... Շատ լաւ: Ոչ ոքի բան մի ասէք: Ով եմ Բո... Հի-
մայ կուղարկեմ իմ ներկայացուցչին՝ կիմանաք: (Փակելու աղջ):

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Բայց ի՞նչպէս և մրտեղից մեզ վկայականներ ու զբամբ:

ՀԱՅՈԳԻ

Իսկոյն: (Կանչելով աշ դոնից) Արմենեան:

ՏԵՍԻԼ ԺԵՐ

ՆՈՅՆՔ և ԸՐՄԵՆԵԱՆ

ՀԱՅՈԳԻ

Ո՞րքան գումար ունենք կանխիկ:

ԱՐՄԵՆԵԱՆ

10881 ր. 96 կ., որից 8000-ը այսօր ստացւեց:

ՀԱՅՈԳԻ

Հիանալի: Միբաքեան, այս բողէիս կտանես այդ գու-
մարը Վայսին: Գաղանի կիսուն նրա հետ: Մի առ մի կնա-
շւես և կցուցակազրես նրա մօտ եղած հրազդաններն ու փամ-
փուշանները: Զեռքիդ եղած գումարը կտաս նրան և կպատ-
ւիրես, որ այդ բոլորն առանձնացնի: Ամեն նախապատրա-
սութիւն պիտի տեսնի նա, որ երեկոյեան ժամի 8-ից իսա-
նութում աւելորդ մարդ չինի: Անհրաժեշտ մարդկանց կա-
շառել:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Զերողանալով զսպիլ իր ուրախութիւնը): Հրաշալի միտք...
Ուրեմն մեր խուզարկու խմբի վարպետութեան պիտի դի-
մենք:

ՀԱՅՈԳԻ

Անշուշտ: Իսկ մեր մկները կլրեն և կտեղաւորեն երկու
ժամաց մէջ:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Իսկ վայը միւս առաւօտ կյայսնի սստիկանութեան
իր պահեստի կողապաման մասին և (ուրախ շփելով ձեռքերը
իրար) ընդհանուր վկայականը պատրաստ է:

ՄԻՐԱՔԵԱՆ

Այս սիստէմը պէտք է միւս քաղաքներում:

ՀԱՅՈԳԻ

Միլաքեան, շտապիր: Իսկոյն դրամն առ և գնա: Պա-
կասը կլլացնենք վաղը՝ մինչև ժամի 10-ը: Իսկ եթէ Վայ-
ուը... ով գիտէ... անհամաձայնութեան նշաններ ցոյց տայ...
աչքերդ այնպէս կ'ուրես վրան, որ...

ՄԻՐԱՔԵԱՆ

Այդ արգէն իմ բանն է... (Գնալով դէպի աշ սենեալը)
Արմենեան, Հայակ, գնանք:

ՏԵՍԻԼ ԺԵՐ

ՀԱՅՈԳԻ և ՄԱՐՈՒԳԵԱՆ

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ժամանակը շատ կարճ որոշեցինք. այդ գումարը չի
կարելի հասցնել մինչև ժամի 10-ը:

ՀԱՅՈԳԻ

Ինչ անհամբերն ես, Մարուզեան: (Մառենում է նեռախօ-
սին: Աղջ): Միացրէք № 206-ի հետ: (Միջոց: Ազդ): Ո՞ր հա-
մարն էք... Շատ լաւ: Խնդրեցէք պ. Դիմաքսեանին ապարա-
տի մօս: (Միջոց: Ազդ): Ո՞վ էք... Վաղը մինչև ժամի 10-ը
կուղարկէք 5000 բուրլի... Ինչպէս... Պարսն Մարուզեանը
կգայ կտանայ: (Փակման աղջ):

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ուրեմն վաղը կունենանք 260 հրազդ վայսից և մօս
70 սստիկանանից:

ՀԱՅՈԳԻ

Նոյն իսկ այս գիշեր կարգագրիք ուզարկել այդ հրա-
զդները: (Խիստ): Պատիրիք, որ ճանապարհին ամենաչնչին
կորսուսի համար՝ մեր յուղարկուներն իրենց զիստիք են պա-
տասխանառու:

ՏԵՍԻԼ ԺԵՐ

ՆՈՅՆՔ և ԶԻՆԻՈՐ

(Զինորը բերում է նոր հեռագիր: Մարուզեանը մեծ անհան-
գստութեամբ արնում է և կամոնալու լ բանալ, աչքը ընկնում է հասցէին):

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Աս ձեր հասցէով է:

ՀԱՅՈԳԻ

(Կարծելով նոր զէնքերի պահանջ կամ փոթորիկների լուր է լի-
նելու, նոյնպիս անհանգստութեամբ բանում է և կարդում, ճեղքնե-
տէ երեսին անսահի ուրախութիւն արտայատելով): «Ալէկոպօլ. Մեր

գտած հսնքից դուրս բերեցինք հազար փութ զանգւած քար-
բախառն. կշարունակենք հանել մինչև վերջը, եթէ չփլի մեր
վրայ վերին հողային շերտը. Հանքը խիստ երկվագլի է,
բայց և խիստ առատ: Փութը մեղ հստամ է տաս բուրլի:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Ուրախութեան գաղաթնականի հասած): Տասն բուրլի: Կեց-
ցեն մեր խուզարկու խմբերը:

ՀԱՅՈԳԻ

(Եսյնպես) Երկինքն էլ է գալիս մեղ օգնութեան:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

(Եսյնպես) Այդուեղ բոլորն էլ խկական բերդաններ են
և ամենալաւ փամփուշաներ:

(Զինորը ոգեւորւած դնում է ձախ):

ՏԵՇԻԼ ԺԱՅ

ՀԱՅՈԳԻ և ՄԱՐՈՒԴԵԱՆ

ՀԱՅՈԳԻ

Դէ, սիրելիս, հորթային ուրախութիւնը մեղ օգուտ չի
բերի: Իսկոյն հեռազբիր նախ՝ այդ բերդանները, ամբողջ
հաղպարն էլ, Ալէկոպոլից անմատչելի ճանապարհներով ուղար-
կեն Զանգեզուրի, Շուշիի և Զիվանշիրի գաւառները՝ շըջա-
նային կօմիտեններին և երկրորդ՝ որ ամեն ջանք գործ դնեն
ամենազահ ախորժակները կաշառեն, ամեն ինչ զոհեն, մի-
այն թէ յաջողեցնեն մինչև վերջին հրազդնը, մինչև վերջին
փամփուշտը գուրս բերել այնակեցից: Իսկ կօմիտեններին պա-
տիրիր ընդունել հրազդնները, անմիջապէս հասցնել ամե-
նակարեղ կէտերը և խիստ զիմազրութեան պատրաստել:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Իսկոյն: (Եստում է գրելու): Այդ գէպքում ի զուր շտա-
պեցինք Վայսի հետ:

ՀԱՅՈԳԻ

Երբէք, Երբէք: Մեղ տասնեակ հազար հրազդններ են
հարկաւոր և որքան շուտ՝ այնքան լաւ: Օօօ... երանի թէ
ամբողջ անտառների ծառերը հրազդններ զառնային և լիո-
ների քարերը՝ փամփուշտները... Այն ժամանակն էլ այդ բո-
լորը մի օրում ձեռք բերելու համար՝ ես կդնէի իմ ամբողջ
կեանքս, կծախէի հոգիս, միայն թէ կարելի լինէր մի օր ա-
ռաջ, մի ժամ առաջ, մի վայրկեան առաջ այդ հրազդնները
հասցնել այն տեղերը, ուր կարօտ են ինքնազաշտպանութեան:

Ճեռախօսի ազդ, Մարուդեանը իսկոյն մօտենում է
ապարատին և պատասխում է նոյնպիսի ազդով:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Մարուդեան: Դուք ով էք... ի՞նչ կայ... Երկու սումբ
նետեցին... Ո՞րաեղ... Միքայէլեան փողոցնեմ... Ովքէր են...
Մերմնք... Ուրիշ... Ամբողջ սոտիկանութիւնը հաւաքրում է...
կազակներն էլ... Մարգկային վնաս հօ չկայ... եւ ոչ մի՞:
Լաւ: (Վերջապէ):

ՀԱՅՈԳԻ

(Կանչելով ոչ դունից): Հմայեակ:

ՏԵՇԻԼ ԺԱՅ

ՆՈՅՆՔ և ՀՄԱՅԵԱՆ

ՀԱՅՈԳԻ

Այս ի՞նչ են անում յիմարները: Օրը ցերեկով: Աւելի
լաւ չէր գիշերը:

ՄԱՐՈՒԴԵԱՆ

Գիշերը Վայսի գործին էլ կ'օգնէր:

ՀՄԱՅԵԱՆ

Ի՞նչ անենք նրանց հետ: Երեխաներ չեն, որ հետեւնք
նրանց ամեն մի քայլին: Տւած է մի որոշ խնդիր և նրանք
լուծում են այդ իրենց խելքով:

Լուսում է բնմի խորից աջ և ձախ կողմերից մի մի ա-
ռաջանակների ձայներ, որից յիշոյ նաև բաղադրա-
ների առլոց, իրարացումն եւ փախուս:

ՀԱՅՈԳԻ

Այս ի՞նչ է: Այդուեղ էլ միթէ:

ՀՄԱՅԵԱՆ

Երեի այդպէս էլ են յարմար զտել:

ՀԱՅՈԳԻ

(Գլուխը ներուղամտութեամբ շարժելով) Զարաձճիներ:

Բարձրանում է մի խիս զդրդիւն փողոցում: Լուսամուտ-
ների փեղկերը՝ ինքնին և ուժին՝ բացւում են: Բեմում
եղածները ըսպէապէս օրորում են իրենց աեղերում:
Լուսում է երկրորդ ուսումբի պայրիւն և ապա մի քանի
տեղերից կրիեն բաղադրաների առլոց:

ՀԱՅՈԳԻ

(Իր վրայ գործած վայրինական աղեցութիւնից յիտոյ): Մի
գուցէ զոհեր...

ՀՄԱՅԵԱՆ

Զոհ չի կարող լինել: Նոր սիստէմն են զործադրել: Փոր-
ձում են, թէ որքան խլացուցիչ են սումբերը:

(Հայողին զանդ է տալիս: Գալիս է դիմորը):

ՏԵՍԻԼ ԺԼ
ՆՈՅՆՔ և ԶԻՆԻՈՐ

ՀԱՅՈԳԻ

(Զինւորին): *Մարգկային վեմս...*
ԶինիՈՐ

Եւ ոչ մի հատ:

ՀԱՅՈԳԻ

Իսլ մերո՞նք:

ԶինիՈՐ

Թուան:

ՀՄԱՅԵԱԿ

Թուան ուրեմն և ոստիկանատան զէնքերը:
ՄԱՐՈՒԴԵԱՆ

Զան տղերք:

ՀԱՅՈԳԻ

Շուտով, Շուրիւր աղա, ասպարեզը երկոխո տռաջ էլ
բաց կլինի և մնաք կ'փորձենք մեր ոյժերը:
Լուսմ են կազակ ձիաւուների ոմբակ-
ների տրոփինը դատարկ փողոցում:

ԱՐՄԱՆ ԽՁՆՈՒՄ Է ՎԱՐՍՎԱՋԵՐԸ:




VI

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ

(ՎԵՐՋԻ ՍԿԻԶԲԱՆ)

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ԱՆՁԻՆՔ

ՄՈՒԹՈՒՅԱԾԱԼԻ ԲԵԿ
ՆԱԶԼՈՒ ԽԱՆՈՒՄ
ԴԵԶԱՆ ԽԱՆՈՒՄ
ՀԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ } նորա կանայք
ՄԸՄՍԻԴ, նորա թիկնապահ ծառան
ՀՈՒՄԵՅԻՆ, վիճական գրագիր
ՄՈՒԼՈ
ՀԱՍԱՆ
ՆԱԳԻ
ՄԱՐԻԹԵԿ
ԿՈՍՏԱՆԴ
ՄԱՆՈՒԿ
Հայ կտրիհմելու եւ Մոռլիջուզալի բեկի ժառանձր:

ՀՈՒՏԵՄՐԵՐ ՄՄԲԱՆ Է
ՀՈՐՍ ԳԻՒՂԸ ԴԱՄԱԼԱԿԵԱԶՈՒՐ

VI

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ



Եսարանք ներկայացնում է պարտեզ:

Նախաբեմի ձախ կողմում դուրս է եկած
Մուրբուզալի բեկի կացած՝ տափակ կտուրով
տան ճակատի պատը. այդ պատի մեջտեղում՝
ներս ու դուրս անելու դուռն է, որից իջնում
են պարտեզ մի բային բարեկ սանդուխներով,
իսկ նրա երկու կողմերին—մի մի զոյզ լու-
սամուտներ:

Պարտեզից յետոյ երեւում է բարեկ զած շրջապատը. տան
ճակատի յետին անկիւնի և շրջապատի մեջ եղած փոքրիկ տա-
րածարինը բռնւած է մի նեղ եւ զած դուռով, որը տանում է
դեպի ծառանձների կացարանը:

Ենիմի աջ կողմբ ծածկած է ծառերով եւ վարդէ բիե-
րով. մեջտեղում կայ մի բարեկ աւազան՝ լի ջրով:

Շրջապատի մեջտեղում կանգնած է դարապար պարսկա-
կան հաշակով շինւած. առա միջից երեւում է զիւղական փո-
ղոց եւ նետքինետ դեպի խոր ձորն իջնող զիւղի մի մասը:

Շրջապատի յետեւից, ձախ կողմում, երեւում են տերա-
սի պէս նետքինետ իրաւ վրայ բարձրազող տափակ կտուրներով
զիւղական խրճիրներ, տարբի ամրոցներ և խոտի դեղեր, քէ
առանձին առանձին եւ քէ կտուրների վրայ:

Ենիմի խորում, ինչպէս շրջապատի վերեւից, նոյնպէս հ
բացւած դարապասից երեւում է, զիւղից յետոյ, խոր նեղ և զիզ-
զազածիւ մի անվերջ ձոր, երկու կողմից ել ձգւած բարձրա-
բերձ և անտառապատ լիռներով, իսկ ձորից յետոյ՝ տաս նեռ-
ուում—ձիւնածածք լեռների զագարներ:

Աջ կողմի մօտակայ լիռներից երբեմնապէս, մինչև Զ տեսիլը, լուսու
մն հոգական սրբնագի մելամաղձոտ դայլայլիկներ:

Երեկոյեան դէմ է:

ՏԵՍԻԼ Ա

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ, ՄՈԼԱՆ, ՀՈՒԾԵՒՆ, ՀԱՍԱՆ և ՆԱԴԻ

(Մամազը կանգնած է սրանցից հետում տան մօտ՝ յարդանքով):

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Վերջապէս ես էս և ուղարմ ասել, որ էս անգամ գանձ
մեր թասիրը պէտք է գետնով չտանք, հա... թէ չէ, բայց էս,
որ մենք կկորչենք ու մեր գեղերը հայերի ձեռքը կցցենք,
գեռ աշխարհումն էլ կ'խայտառակունք... մեր իսլամութեան
նշանակութիւնն էլ հողին կհաւասարենք... Այ, մի քանի օք
առաջ նամակ ստացայ ամբողջ աշխարհին յայտնի՝ Շուքիւր
աղայից, որ թուրքերէն լրագիր է հրատարակում:

ԱՄԵՆՔԸ

Այս:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Նա մեկ ուղղակի հայհոյում է: Զեր թասիրն, ասում է,
շունչ է կերել: Ի՞նչ մուսուլմաններ էք, որ հայերի քոքը չէք
կարողանում ջնջել ձեր Դարաւագեազգից... Դարմագալը բար-
ձրացրիք, ասում է, թալանթբաշն արեցիք, բայց չհասաք
մեր գլխաւոր նպատակին—ջնջեցիք ձեր միջից հայութիւ-
նը... Դեռ էդ բաւական չէ, ասում է, մի տասը քսան ֆիդա-
յիների ձեռքին էլ խեղճացել էք: Ամենից առաջ, ասում է,
դրանց կոտորեցէք, որ ձեր՝ ձեռքն ու ոտքը բացւի: Թէ չէ,
ասում է, ամբողջ խալամը կթքի ձեր երեսին ու ձեղ էլ մու-
սուլման չի համարի:

ՄՈԼԱՆ

Շատ ուղիղ է ասում, շատ:
ՆԱԴԻ

Բաս մեր թասիրն ուր ա:

ՄՈԼԱՆ

Բաս մենք ինչ մուսուլմաններ ենք, որ էդ քոսոտ ֆի-
դայիների օգտիցն էլ չենք կարողանում գալ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Մտածելուց յիսոյ): Ուղիղ որ էդ անհաւատները մկան-
հուտառութիւն ունեն... Որ գիւղին որ վրայ տուինք էս վեր-
ջին ժամանակները, շէյթանի պէս մեր ետևից բուսեցին ու
մեղ զնդակի ու կրակի կապեցին: Հիմայ մենք պէտք է պա-
տերազմական խորամանկութիւն բանեցնենք, որ դրանց օգ-
ափը գանք, թէ չէ մեղ կուտեն: Տեսնում էք էլի. ես մինչեւ
իմ տուն ու տեղը:

ՆԱԴԻ

Ո՞նց գնաս, բէկ:

ՄՈԼԱՆ

Քու գիւղի չորս բոլորը հայերի գիւղեր են ախր:

ՀԱՍԱՆ

